

## Բ ՀԵՔԻԱՐՆԵՐ

### Հ (3). ԸԱՀ ԻՍՄԱՅԻԼԻ ՀԵՔԻԱՐԾ

Գիղնի, չեղնի, մի թակավոր գեղնի, ըդ թակավոր ջառանգ չունեն: Ավուր մեզ գվարո գրակուիին, գետը ևս խաս բահմեն: Գօլորդին ոոի, գրեսման, որ պոլուր ձառնիր բրուր ին րվի, մինագ մի ծառ չորցիր ը ու խանձի, մէ բյուր չկը վրեն: Թակավոր ուր մեճկ գգրոգը ըդ ձառին ու գսկոր իլալ: Թակուիին գըսը.

- Օքի՞ գիշաս, ի՞նձ էնիկ, մըբ բըհւտ լը ըդբես ը: Թակավոր գըսը.

- Ի՞մալ չիամ, անջառանգ մարտ հըմլը յը, մըկ լը ես ձառի րես գչորանակ, էրտակ...

Օդի թակուիին լը գսկոր իլալ:

Ըդ վախտ՝ ասսու հրամանով գիշյդնվի ծերումի մը, ըր բըճամ գիշսնի հըրի փիշիր, մորուկ լը չոկիր, գըսը.

- Ըդ օրի՞ գիլեկ, թակավոր աբրած գենը, ըրը կայել ը ծրգի իլալ:

- Ըր ի՞նձ էնինք, - գըսը թակավոր, - մրկ լը նման իկ ես չուր ձառին. ջառանգ չունիկ, մըբ ինժի՞ն ը րեդկ սադ մուլք ու համբավ...

Բիծեն գըսը. - Ան ես խնծուր, գիսը՝ գես գիշաս թակուիուն, գես լը՝ ծիուն, ինն ամիս հեեդ քյո ջառանգ գեղնի, քու ծիուն լը քուրած գեղնի: Յըս գերտամ, տու դդին լը, ծիուն լը անուն չտրիս, մին իկայս:

Զարյ գիկը թակավորի երիս, գըսը. - Է՞հ, ծերունի, թըժը նուր ընծի ջառանգ չեղնի:

Օդի բիծեն գանհայդանը:

Գրմի ինն ամիս ինն օր, թակուիին գունենը դդեն, ծին լը՝ մէ ծկսուն քուրած: Թակավոր գեղնի աշխրկով: Օրերուց օրմ՝ գիշյդնվի ըն րիծեն. դդի ամուն գտրը Շահ Իսմայիլ, քուրգուն լը՝ խըմըթայի:

Թակավիր դդիմ գարը փագ սենեգի մը մեծ, գշայը, գըսը: Դդեն լը օր - օրի վըրեն՝ գճոննը: Օքմ՝ լը դդեն միս գուրը, գվերո օսկուրօմ՝ գվորցու, սենեգի լուսամուր գ'գողիր, շուր գընգնի սենեգի մեծ: Շահ Իսմայիլ գըըշը թուր՝ գիշսնի շորի վըրեն, ընքան գոիկ գիշը ոյրի, ըր գիշըմըօի գընգնի: Իրգուն գիկը ծառան, գրեսնը՝ Շահ Իսմայիլ ընգուր կեդին, քրդիսկ դկիր ը վիեն, ընքան օր տրիս ը շորիկի իդի, թը կիցիր ը՝ հուշագը ը: Ծառան գվորո դդին, գշայը ջըգատ, գըսը.

- Օրտի՞ ջան, մեռնին արեւուտ, էքո էի՞ տու ւրս, արիվ ոիս, օյան ոիս, ի՞նչ իս մոի ըդ մուտ սենեգի մեծ:

Թակավիր գենը քեֆ, ուրախուչուն, գեանին հմեն սիրուն ախմգնիր տուրս, օր Շահ Իսմայիլ հավնի: Գենի առւրս գրեսնը՝ ծիանք գիսաղծուն, ըդոր շալ գիավնի, ինձ ծիու ծեռ գգրոգը՝ ծիու փուր գիշնի կեդին, չտիմանը: Թակավոր գըսը.

- Օրտի՞ ջան, մեզ ծի քու իհին ը ծնվի, մաքտ չիշխնը մոդենը, կնը թը գըննաս գըմը: Շահ Իսմայիլ գիանը զիին տուրս, ծին գիսրիսնչը, գթոնի ուր քիր - պերան. դդեն գշայը զիիու մեճկ, գրակը ուր ջըգատ, գիեճնի գէրտը ավխուչի: Գէրտը գիշսնի ջամապու զես: մեզ լը ծիու առծեսն մեզ խըգալ գթոնի: Շահ Իսմայիլ ծին գըըշը, գմոդենը դեսնը, օր մեզ հութի-փերի, գիախնի, գմի կոնի որա: Իսմայիլ հայիլ-մայիլ գեղնի ըրլուր խորոդուան վրեն, գէրտը ուր կլուս գորը փերու չոկին. դդի սիրդ գթիրի, գայեղանը, գէճնի միծ գըըգոպը դրամարտ: Ըդուկ օոի սեր գէճին, խոսկ գիդան իրարու, մադնքնիր գիուսին: Դդեն գըսը. - Աշխարհ քանդվի, յըս քու թարգ չըմ իդը, ուր լը էթտամ տու իս ըմ իսմատ:

Պայց ախմգը երիս ծաղը չիկը, գըսը, - ֆլան օը գիկաս արի, չը ըմ եեր ըր ամփող մուլքով գէրտը Շնդստան, ընծի լը գդանը ուր իհի: Թը ուշանաս, յըս մէ նամագ գթողիմ ես քըրու դագ, իկաս - վիրուս:

Ըդուր օոի մնաս պարով գէճին իրարու, ջուհար գիշսնի թակավիրին, օր քու դդեն ուր սեր թըլիր ը մեզ հութի-փերու վրեն, մէ օյաք գիանը ուր գուիս: Ըդ պայման էնուգ օր, դդին գէցկին մեզ սենեգի մեծ, չըն թողը տուրս: Իսմայիլ հըցեն, ճրեն գ'գորի, փերու սեր թակիր ը ուր վըրեն, նը՝ գուղը, նը՝ գիսնը: Օրմ՝ լը չտիմանը, գէի վիրո ծիավորնիր, գիախնի գէրտը ըդ պայմանավորվուգ դիի: Գդեսնը, օր ախմիգ չկը, գվերո զնամագ գարտը, գընգնի ջամապը: Գիշսնի մէ սարի, օոի մէ միծ թակավորագան պալատ գդեսնը, գիշը՝ տուր չկը վըրեն, գէրաք յոտ փաք գֆոր, տուր չկոնր, մէ քոշից ըր գուրգ գգրոգը գքանդը գմի նիրս: Գիշը, օր մէ Գուլիսիր մը օոի թըկ նստուգ՝ խալի յը գկործը Ախմիգ գըսը. - Ըդ ի՞մալ էգար օոի, օծն ուը րորդոգ հավքն ուր թեսով՝ ևստիդ փյուղը չեղի, տու ի՞մալ էգար:

Օոի ախմիգ-դդեն գխոսան, հած գուդին, ախմիգ գրալմը, ըր իրան ֆլան թակավորի դդեն ը գուզը, ուր յոտ ախաբեօ չըն իդը, ըդուր վրեն լը գոիկ գէճին: Ախմիգ ըդ դիսն դեխ գշինը, օր քնի, գըսը. - ընծի չըս հա՞կնի: Գըսը. - Գուլիսիր՝ քգի շաղ գիավնիմ, պայժ ըն սրոի ուզած՝ ուրիշ ը, ընդուր ոգրուն իմ երի տարուրուն, ընուր սեր ու սըվուն ընծի կասիր ը, գէրամ կենամ ըն Գուլիզարին, ըր ըմ նրայդագ գաղարվակ՝ քզի լը գվերում մրո իդի:

Իսմայիլ գրարգի Գուլիսիրու մոդ, ալայժ ըր թուր գտրը ուրանց մեծ: Լուսուն գէլի ընգնի ջամապը, շաղ գէրտը, քիչ գէրտը, գիրսնի ոիս նը, գոիկ՝ սոտում-գորում: Գըսը. «Ինալ էդնի, յըս լը ոոի խառվիմ ըրուց, ալայժ ի՞մալ էնիմ. էրտամ շաղի յա՞ն, գըսիմ՝ վըհեցավ, էրտամ քըշին, գըսիմ՝ վեեանձ ը, գայնի պարև իդամ, վըր առավ ըմ պարէ, օն լը գէրամ»: Պարև գիդը, քըշիր գառնին ուր պարէ, գէրտը դեսնը, որ

ըն յոտ այսպերն ին. մեզ սպանվոր ը, վեց լը՝ գանին: Տու մըսը՝ ըղութ հերտով ը գովին, ըր սրեն գիկի սիշ ջիգ ախառոր, դդեն գըսը.

- Տու նսսի, յըս գէրտամ գոիվ:

- Չէ, գդրի՛ծ, եգո կնը քու ջամպու հիդ, յըս գէրտամ:

Շահ Իսմայիլ չկա քու ջամպու հիդ, յըս գէրտամ՝ գընգնի գորկի մեծ, թը հըրի ինք սպանից, եգու հըրի՝ ժին սպանից: Օրդում-ոաթմիշ էնից, տարծավ վեց ախառոր քով, Ընգավ փսխուն տիխարդսնց մեծ, գվերո Շահ Իսմայիլ գըսը.

- Ինձ գըսեն, դրամարտու րես ըմ ջըկտին ըսեն, թըզը՝ յըս կիդդութ պտն չըն կիրո:

- Ինծրյիթ քինը, - գըսին ախապրդիք, - ըր տու մըր գյանկ փրգիծիզ, մըկ լը գուգիկ մըր քուր իդակ քզի:

Գէլին իկան սլտլտտ, գէնին գիրուխում, պայց Շահ Իսմայիլ շատ չմնը, գըսը. - Ախապրդիք ջան, յըս նրադագ ունիմ, որի էրտամ Հնդստամ՝ ըմ Գուլիզարի էդևեն:

Ախապրդիք գցուցուն երգու ջամպը, մեզ էրգար, մեզ՝ գարզ: Գտրջ ջամպով խորհուրտ չըն իդը, օդի նստուգ ը Ծրըրը Զանգին, ողուր ծեռկէ՛մ մարտ սախ չըրծի: Շահ Իսմայիլ գուզը երգու ջամպով էրտը, ախապրդանք գուգին էրտամ ըր հիդ՝ չթողը: Նըմը ըղութ գգոգին, Շահ Իսմայիլ գէլի էրտը գաջ ջամպով, գդեսնը՝ մեզ Վստոահեն պալատ մը, ըղուր գողի մի՞՛շ չայիրմ', մեծ լը՝ մեզ սիրուն հավուզ: Խսմայիլ գէլի օդի, ախարի կլուի գբարգի: Ծրըրը Զանգու ծուռան գէրտը գըսը. - Մէ մարտ ր փյուզը էդի էստեղ, ուր ժին թողիր ը չայիրի մեծ. ինք լը մեգնվեր ը հավուզի՞՛քնի: Գէլի Ծրըրը Զանգին գիշը, օր խորոտ էրիդասարդ մը մեգնվիր ր հտվուզի՞՛քնի, օգու գըոոր.

Անամդա հայ', հայ'

Բարամդրս հայ, հայ':

Գիմնը Շահ Իսմայիլ, գէլի գիկը Զանգու մոդ: Զանգին՝ դդին գովե գ'գւսնը: Իրեկ դըրը Զանգին գգորգգ, հերտ գիկը Շահ Իսմայիլին: Ալոճի գորուն գգորգգ. - Եսի՛ ըմ մնողներու խատր: Եքի հաղուն՝ էս տլ ըմ նրադագի խատր, երրուտ հաղուն ըր գգորգգ. Ծրըրը Զանգին գընգնի ցած: Խսմայիլ գքը, օր շինք գոյը՝ ըղուր դոշի գոչգնին գպացվո, ծծի շուղը գիդը ուր էրիս:

Շահ Իսմայիլի խիլք գէրտը ըղուր վորեն, գըսը. - Փերի, ըմ հըվոնալ չընկը, օդի տո՞ւ իս ըրլան աըունք էնի, հիմը քու վերծ գիդամ:

Ծրըրը Զանգին գըսը. - Շահ Իսմայիլ, հոկուս մեռնիմ, գայսի՛ սաղ րտդմուտեն էնիմ՝ նուը ընծի գրրգ: Յըս նշանվորեն մէ թակավորի դդի հիդ: Ըդ անասված անուն ըմ պոլուր չըր իկի, չըր մոդենը: Օրմ' լը հիըսս դվից՝ պոնի ըղուր թեկի, մոդ պերի, ըղուր թիկ պոգվակ, եգավ ըմ ծեռ, ջանդագ մնաց:

Ըդուր հըմար լը ուկուտեցի՛ միճս դդեն ընծի չհարտը, յըս ընդուր չըմ անը: Տու կինաս գուզիս առ ընծի, չէ՛ թո՞՛:

Իսմայիլ գըսը. - Յըս նրադագ ունիմ, գէրտամ Հնդստամ՝ Գուլիզարի եդևեն:

- Յըս լը քու թազգ չըմ իդը, գիկամ քու հիդ, - գըսը Զանգին:

Գէլին Շահ Իսմայիլ ու Ծրըրը Զանգին հեծնին ծիանք, իրաքու հիդ ընգնին ջամպը: Գէրտամ զվերուն Գուլիզըրուն լը, գէրտամ գիրսնին մէ ջաղաք: Ըդ ջաղնի ժողովուրտ շատ րեքեֆ գէլինի, գիարցուն ինճ - ինճոցը: Գըսին, օր Գուլիզարին գիդան Հնդստանու թակտվորի դդին՝ չտոնը, մէ ծեռ ատիօ ը թույն, մեծ տանագ, որ զոքին՝ ուր գյանկին վերծ գիդը: Շահ Իսմայիլ, Ծրըրը Զանգին ու Գուլիզըրին գիրսնին մէ րառվու մոդ, գըսին. - Մամի՞գ ջան, ըդ օ՞րի ին ըդ քաղցի ժողովուրտ ըղքան րեքեֆ:

Բառավ լը նույն պան գուադը:

- Մամէ՛, քըզնը մէ պտն գիմտըհին, քզի գիտկում թէկըվորնագ շորիր. տու կնը յիս ըդ ախճգան:

- Լա՞ո, յըս հ՞նալ էրտամ, ըղութ մարտ չըն թորգը նիրս:

- Մարէ՛ ջան, հակի էս շորիր, էս մադնիք լը էծկը քու մադ, կնը տուու գիսապաց էնը, քու մայդ քըզ նիըս, ըսը՝ եսօդ դդիրու խատր, թո՞՛ ընծի նիըս:

. Ըդքես լը գէլինի. գէլի լուսուն րառավ գէրտը, գմդի նիըս, ծեռ գքցը նիըս, գըսը.

- Էսօդ դդիրու խատր, թուր ընծի նիըս:

Գուլիզար գջանճնը Շահ Իսմայիլի մադնիք, ուրախունիցգաբահը թույն, տանագ գքցը մեյդան, գըսը.

- Մարէ՛, քու րըխտ էդնին, ո՞ւր ը ըղուր դեք, վերը քզի ինչքան օսկի գդազիս, մինագ ըսը Շահ Իսմայիլին իկը խաս րախճեն, վերու ընծի՝ փախնիք: Լուսուն Գուլիզար գէլի խաս րախճեն: Շահ Իսմայիլ լը ուրին գըզը րախճեն, գդեսնը Գուլիզարին, խիլք կլիխ գէրտը: Գուլիզար գվերու զկլուիս գտրը ուր չոկին, մէ թիճ գքնի, գիկը Ծրըրը Զանգին գիմծոն Շահ Իսմայիլին, գէլին հեծնին ծիանք, Գուլիզարին լը գնատցուն խըմըրթայու վուեն ու գփախնին: Զանգեն գիանդրին մէ մարտու, ըր քաղաք գէրտեր, գիդան ըդուը մէ թուդը, օր հայդնը, թը Գուլիզարին դարավ Շահ Իսմայիլ: Ուրանք լը գէրտամ, գէրտամ գէլին ախարի. մը վուեն: Շահ Իսմայիլ գտրը զկլուիս Գուլիզարի չոքին ու գքնի, ըմալ գքնի, գըսին՝ մրափ նը թափի վըրեն:

Գուլիզարի հեք ըր գիմանը էդած, գվերու զորը ու թվանկ, գքնգնի Իսմայիլի էդևեն: Ծրըրը Զանգին ըր գիմանը, էլ չիմծծու Շահ Իսմայիլին, գմդի գորքի մեծ ու ճարտ ու խուրդ գէնը ըդուց ու արնի մեծ գորուգ՝ յըդ գիկը: Գուլիզար ըր գիմանը, ածկերուց զթափը, գըսը. «Դեյ վա՞խ, յըս ըմ հոր՝ տավաջան էդը, մըր

**քաղկի գորկ գողրրվավ»:** Արծունկ ըր գընգնի Շոհ Իսմայիլի վըրեն, գիմնը գդեսնը, օր ուր ծին արնի մեծ գորիր ը, գըսը.

- Ըդ ի՞նձ խըրար ը, Ծրըրը Զանգի:

- Ե՞ - գըսը, - Շահ Իսմայիլ, հալ - հեկիատ հըմալ ը. Կածի ավճուտն գէնեկ, դէսնամ զըրգոպը գորկ մը գիկը քու վըրեն գրիվ, յըս լը մնջանծ գողքըթի ըղոնժ:

Օրի Գուլիզար էլր գիլը, պայժ ի՞նձ էնին, էղած էփիր ը: Գէլին պոլորով գընգնին ջամպը տըր ուրանց դուն: Խըրար գէրտը Շահ Իսմայիլի հոր, թը քու դրեն հըմտը գիկը: Գէլի թակավոր չադր գորոզը քաղկի գորկ: Գիկան ըրութ քիչ մը գիանգտին, նուր դիկը թակավոր ըրուց գրանը ուր պալատ, հըմը ուր միտք ծուռ գէնին, ըր գդեսնը դոհի հիդ ըր միրուն ախճոյիք: Ինձ էնը, ինճ չէնը, օր ըդուց ծեռ քըր, Վերճ, գորոշը թույնիլ դոհին, ըր կերո զըդ գուսւնին: Յըմը Գուլփըր միաստուն գէնին, ջաշի վախտ գնստի Շահ Իսմայիլի քով, գըսը.

- Շահ Իսմայիլ, քու ջաշից քիչ մը թըր գաղվին, թը սադգավ՝ ըր ջաշ չուտիս:

Շահ Իսմայիլ գվերո կրալմ՝ գքծը գաղվին, գաղուն րոբեգիսն ասադգի: Շահ Իսմայիլ կլիսու գընգնի, թը հալ - հեկիատ ինչ ը, էլ պանի ծեռ չիդր: Էկեի օր թակավոր էլի ջաշ գիտր, պայժ թույնուգ չէնին: Էս անկամ խալեկ գիտու, դսգ լը թագարտ գտոր, օր դոհի կլուկս ուրդր: Յըմը Գուլփըրին բիտի յը, գըսը.

- Շահ Իսմայիլ, քու հեռ էլի օյինմ՝ գիսւող քու կլուկս, վերո տաժին քու հիդ, ուր ըր ընի ոտկ տըից, տու լը ըն դեխով կնը, թըճը՝ թըլըկի գիկաս:

Ըդ դրուն լը Շահ Իսմայիլ թվախից գըգըդվի: Իրիկ օրվա վիեն՝ թակավոր գըսը.

- Օրտի՞ն, յըս գուգիմ քզի փործիմ, ըդ ի՞նալ ը ըր առ ոչ մէ հալ թըլըկի չըս իկը:

- Այ հեը, ընծի հախտի չէնին, ընծի մայ չկը, պայժ ըր ըմ էրգու բուր մադ աղիդրվ գաբիմ՝ յըս գիախտվուն: Յեզ գայերո աղիդ մը, քըր որի ծեռ, յանի թը փործ ը գէնը. տու մըսը՝ ըդ անիրավ, գըլընուց գանգցիը ը Շահ Իսմայիլի էգիվ, ըրուց նշմար գիգը, գըսը՝ ծգի՝ դեսնամ, ըրուկ գուգին որի կլուկս գորին, հըմը թակավորի վըզիը գըսը.

- Մե՛ղը ը թակավորի թըկ դոհին սպանիլ, էգեկ աճկիր հանիկ, թըլիկ ջերիր, դսնիկ թըլիկ մէ անվերո դեխին:

Ըդրես լը գէնին, գդանին թըլին մէ անվերի դեխին: Յըմը աստված միժ ը, օդի բգդիք ախապուրմ՝ գոյսիսկը քըրու միծեն: Աղվնիգ մը ըր էրգու ծկտիք գաերը ծուր խմելու: Ծկնիր գդեսնան, ըր կիմիմ՝ դագ մարտմ՝ ընգուգ, աճկիր հանուգ, անուշկ ը, մոր գըսին.

- Այ մեր, հօդր մարտմ՝ անուշկ ընգուգ, աճկիր լը՝ հանուգ, դեսնաս ո՞ւստում ը օդի փըրդ էլի, ո՞վ ը զըդ անիրավուտյուն էնի, արի տու ըդուր փրգու-

տունմ՝ էնը, իներ գէնիս, մըր սիրդ գցավը ըդուր վըրեն: Աղվնիգ ըր գլը ծկներու աղածանկ, գըսը. - Չըս թերուրկն՝ զ'քիմ հօդր, թը գարտուն ը՝ էրանեգ ուրին, թըխ էլի վերո գըդ թերուրկ, զըրգը ևս ախալի նըի մեծ, քըր ուր աճկերուն, րոբեգան գլավնը, գէղնի մորեն մեզ, թը գարտուն չէ՝ չերանեգ ուրին:

Դղեն ըր ըդի գլը, գվերո ըր ջեբերու աճկիր գտը որիս, փորովշտալով գ'կրմը ըր թերուրկ, գթաթիւ ախալի նըի նեծ ու զ'քսը աճկերուն, րոբեգան գախալի թույնիլ հըմտը ծաղի հըմտը ծաղի գուսւնի: Գիշը, զըդ անվերը դիխ մէ շունճ չկը, աղվնիգ լը ըր ծկտիք անի՝ թօիր ը: Գէլի Շահ Իսմայիլ, գիսմը գըդ ախալի րիմկիսկան ճըն, գ'գանճը գուր ասված ու գընգնի ջամպը: Շադ ու քիճ գէրտը, գդեսնը՝ գիխ մը ընծի բես խրբուգ դիծեմ՝ չուտ ը գէնը: Գըսը.- Պարև քգի ապաբա՛շ, ընծի չըս ընտունը քգի զավազ:

- Ըմ աճկերու վիեն գընառւնիմ, օրտի՛, յըս չուր կլուկս իմ, մեգմ՝ չկը ընծի շիադ էղնի, քոնագ էղնի, մըր էրգիր լը գովի մեծ ը: Մէ անիրավ թակավոր մը փըրդ էլի, գըսիմ՝ Ծրըրը Զանգի ը անուն, սար մըր էրգիր ավիթից, էնից թան ու փոխինդ:

Խըրար իդակ Շահ Իսմայիլի հորից. ըր դիհն գքուցուն, դրսնին ըն անվերը դեխս, հեր գէլի գըլընուց գուղարգը, օր ըն գոզալ ախճգոյուց պերին ուր պալատ: Օդի Ծրըրը Զանգին գդորը իրեկի կլուկս լը, գաըը սնդիքի մեծ՝ գջամպը թակավորին: Թակավոր գ'գաղդի, գվերո ուր զորը ու թվանկ, գէլի Ծրըրը Զանգի գաւ տեն: Ծրըրը Զանգին զորը մեգեն գ'գոդրոր, ըլ մարա չմնը քարլաք: Օըմ՝ լը գիկան, ըր դիծին դանին գոխիվ: Օդի Շահ Իսմայիլ գըսը.

- Ջալիիգ ջան, ծի մը դր ընծի, յըս գէրտամ գոխիվ: Բիծեն չըրոգը.

- Լա՛ն, տու ջրիել իս, մէ խրդվիլագ ծի ունիմ, գդանը քգի գոդրը, ըլ պան պուրտ ը, օդվիս հնդր կերեգման, թօ՛ն յըս էրտամ:

Դղեն չըսը, լուսուն գվերո գըդ անբետկ ծին ու գէրտը: Սառ ծաղր գէնին ըդուր ծիուն: Շահ Իսմայիլ գմիդի գովի մեծ, ըր գգըրգը՝ Ծրըրը Զանգին գարուպի, ուր ջան գզլզը, վախսու մը գոխիվ գգանգծո: Թակավոր գդանճը դոհին, գըսը. - Գէրկը տու գդրիճ իս, վերո քգի լավ ծի մը, թը հախտեծիր ըդուր՝ ըլ թակավորուչուն գիդամ քգի:

Շահ Իսմայիլ իմալ ծեռ գդըրգը ծիանում՝ մեճկ իրանժ գգըրգին կեղին:

Զուղար իդակ Խըմըրթայուց, տու մ'ըսը՝ Շահ Իսմայիլի քոռնալու օըկանից, թակավոր ծիուն մոծիր ը մուտ կոմում՝ մեծ: Ծին քրբողիր ը, փողիր ը զկեղին ու նդի մեծ, մինագ անգնիր նը մածի տուրս, մարտ չիշխնը մողիգ իկը:

Հահ Խսմայիլ լև ըր ծիու քըո գէնը, գէի պարծր դիխս' գրոռոր իր ծիուն: Ծին ըր գւը դիրո՞ս ժեմ՝ ուր քըո գգողի, գտրխամջը, գրոնի գիկը լիզը դիրո՞ս օդնիր: Հահ Խսմայիլ գբակը ծիու ջրգատ, գիեծնի ու քշը գրիվ: Ըդ վահստ Գուլփիցին Ըրըրը Զանգուն գը-սը, օր Հահ Խսմայիլ սահիծիր ը, պայծ՝ ըրի դեր ը, գիկը ըր տեմ գոիվ թակավորի գողմեն: Ըրըրը Զան-գին արիտին գընգմի, ըր գիմանը հալ - հեկիատ ինօ ը: Լուսուն թակավոր գէրտը սեյր էնելու, թը ըդ իիդը ու գոագ ժողովուրտ իմալ որի գովո, գրեսնը, ըր ըն դրեն գիկը Խըմրոթայուն հեծուր, պալչի գմնը, թը ըդ դրեն ի՞մալ գըրծավ ծիուն հեծավ, Հահ Խսմայիլ գմդի գորկի մեծ, հըմը ժաղովրտին ծեռ չիզը, գիըսնի գվե-րու Արարե Զանգուն րը կլխու Վորիվ, օր քըօ կերիմ որը, Ըրըրը Զանգին արաեն կինը, օր Խըմրոթայուն մինագ Հահ Խսմայիլ գըոնը հեծնի, արիտին գընգմի. նը ծեն գէնը, նը՝ գբաշտապանվո: Օդի թակավոր գբո-ռը. - Պի՛ր, ըդուր կլուիս յըս ըմ ծեռկով րոյ գգրիմ:

Հահ Խսմայիլ գմայը վերիկ, գջանճնը Ըրըրը Զան-գուն, գբակը ուր ջրգատ ու գիծու ցած: Ինե լը գիճնի ծիուց, օդի գիաաապեն իրար, Հահ Խսմայիլ շնորա-գալ գէղնի, օր իրո համար ը գոիվ գէնը:

Օդի Ըրըրը Զանգին գիայդնը, օր ոդ թակավոր՝ իրը տակաջան հերն ը: Ըդ գգեսնը Հահ Խսմայիլի ամկիր՝ Ըրըրը Զանգին ամկերուց գբայը, օդուրտ, օր դրեն ոյրի որի էր աաքի: Հահ Խսմայիլ գմոդենը թակավորին ու գոիմը ժողովրտաին.

- Ժողովուրա, լսեք ընձի. մէ մարա րադն՝ գգըր-գը, գմշագը, ըդ րադ րուր գիդը, հեղու գվերո գա-ժին, գոդ րադ գբանը: Ըրեսն մարդու տար գբոոիմ ծզի. ի՞նձ գէնեկ րմալ մարտուն:

- Փրսիգ-իրաիգ գէնիկ, - գբոոան չորս յանից:

Օդի Հահ Խսմայիլ գբաղմը ուր կլխու կալաձ, գը-սը, օր ոդ թակավոր ուր հերն ը, օր ահմբուց հա-մար՝ գուզեր իրեն սպաներ: Ժողովուրտ թակավորին գիանճնը Ըրըրը Զանգուն: Ըրըրը Զանգն գգորո թա-կավորի կլուիս, գիդը գըլընուց ծեռկ:

Գպերին Հահ Խսմայիլին գէնին թակավոր, գ'գար-կին Գուլփարի իիդ, քասուն օր ու կիշեր հարսնիկ գէնին, գիմդանան: Հահ Խսմայիլ Գուլփիցրուն ու Ը-րըրը Զանգուն գ'գարկը ջանով, ջանդով, շենկ ու շնորկով էրիուսարդներու իիդ, գէնին քեֆ, ուրախու-չուն: Ըդուկ մինճն վորդ գմնան Հահ Խսմայիլին հա-կաղարիմ, ժողովուրա լը գէրտը ըր արտար թիքին:

#### **Հ (4). ԱՄԱՍՆԻ ՀԵՐԻԱՅԸ**

Ասլան թակավորի դար էր: էդ թակավոր դոին տրեց առանձին սեմյագ, վարժարեդ տրեց էնտի, ըսեց. - Թըիս ըմ դոին դաս իրս, ըմ դրեն ժողովուրի մեծ չերտա:

Դոեն եղավ մոդ դասս-դասսնինգ դարեգան, եղես դաս կաներ, գոերեն հաց սենյագ, կուդեր: Թակավոր ջաշ րերոդին թըմը էր էնի, ըսեր էր. - Ասլանին օր ջաշ գտանիս՝ մեծ օսկո չէնի. իհակուր միս գտանիս: Օրմ՝ է ջաշ դամոնու գմոնա, օսկո միհից չիանէ: Ասլան է. ջաշ զուգէ, օսկո գբալէ, իմալ օր գբալ է գանին շու-շեն, զճարտի, տրես շոր գընգնա ներս, գգարմանա. - Այ ջամը, - կ'սէ, - էդ ի՞նձ ջանավար էր մոդավ ներս: Գիասնի գուգաշ շոդին, գէնէ թը չէ, չկոնա շող հանէ դնից: Զաշ պերոր, օր գմնա ամնին հավակէ, գրես-նա և լալան քրդինքի մեծ գորեր է, հալ, իլաջ չկա:

- Ասլտ'ն, - կ'սէ, - էդ ի՞նձ է պաղայէ, ի՞նձ է գէնիս:

- Այ մարտ, - կ'սէ, - ըդ ի՞նձ ջընըվար է մոդի ներս, չըմ գընը հանի: Կ'սէ. - դու նստի, գտանէ թաշկոնագ, գըրգէ ջարդուր տեղ, շոր գ'կորի: Կ'սէ. - էս ի՞նձ պան է:

- Արեւո շո՞ն է, քու տուն շեն, դու լէ գինաս ջընը-վա՞ր է: Ասլան գմդամէ կ'սէ. - Ուրեմս, իմ հեր ընձի րանդարգիր է. յըս էատես րանդի մեծ իմ, ոչ թե սոր-վուրս մեծ, յըս դոդի տուրս իկամ էատեհից:

- Այ Ասլան, մեռնի՞ն քեզի, գուրս մ'իկա քու հեր իմ գլուի գգըրգէ:

- Չէ՛ օր չէ՛, դոդի տուրս իկամ գգըրգէ՛ թըլս գըրգէ:

Ը Ասլանին պայիլ չէնի. գէնա դուրս, գպդրի, գէնա քաղօթի մեծ, դիսնա ինճ. րազար կա, մարտիկ գէրտան-գիկան, ֆուրդուն է, ֆայտոն է, գշըվոր գայ-նի: Իրիգավա գոդմ է արտեն, գգեսնա՝ սարեն իրեք ծիավոր գիճնան, գիրսա իրանց առճէ գ'գանի:

- Ղեթ'ք, - կ'սէ, - որդեհիի՞ց է գիկաք, ո՞ւր է գիրտաք:

- Հէ՛ որսորդ մարտ իք, գմացերիք որսի, էգեր ինճ գըրաակ մըր դներ: Կ'սէ. - ի՞նձ գէղնի, լուսուն ընձի լէ ծեռ իդաք, յըս լէ գիկամ ծեր իիդ, սիրդար րացվի:

- Ըր ո՞ւմ դրեն իս, թէ՛ էս ինճ թակավորի դրեն իմ, իմ անուն Ասլան է:

- Ասլան ջան, հանգիստ գմա՝ առւն, առավոդ գի-քաք, քեզի ծեն կիդաք:

Ասլան գիկա տուն, գմդի ծիանոց, ծիապանին կ'սէ. - Ամենալավ, ընդիր ծին ընձի ցուց դուր: Գպեր ամենալավ ծին ցուց գիդա, ջահել, արարագան ծի: Ասլան ըլ ծիու կողեքն չէնա, գիմրէ ծին, գըն գպդր-րաստէ: Առավոր շուր գէնա ծին գեերագըէ, գբամկէ, գգեսնա իրեք ծիավոր գիկան լուսանուդի առճուն գանցնին, կ'սին. - Ասլան, մեծ գնացինք: Գքաշէ ծին, օր նստի, թակավոր գմոայէ, որսորդներին կ'սէ. - Ուր գլազեք գացեք որս էրեք, մինագ՝ խոզաւի սար չէր-տաք: Խոզաւի սար գմացեր իք, ծեր գլուի գգըրգիմ: Կ'սին. - Թակավոր արրած կինա, ի՞նչ իք կորցրի Խը-զալի սար, չընք էրթա: Գէրտան, գընգնան սարեր, շադ ու թիչ ման գիկան, որս չկա, թմեր ը: Ասլան կ'սէ. - Վըլը, յըս թդի էրտամ դեր Խըզալի սար:

Ընգերդանկ գիմտրին. - Այ Ասլան, մ'էրտա, քու

հեր մըր գուլս գգըրգէ, գէնին թը չէ, չըն կոնա:

- Չէ, - կ'սէ, - գէրտամ, - ծիու գուլս գթօրգէ դեր խըզալի սար: Ընգերդիքն է հրդին գէրտան: Գէրտան, ի՞նծ դեսնան. ախշրի որս հանդէ տուեն, մա՞րտ չգացերը էնտեիր: Կ'սէ. - Մեզ մյուսի շնամբսրիք, ամեօ իրան որսի էն էրտա: Ինք օր գդեսնա՝ մեզ սիրուն խըզալ իրան առնկից գփախսնի, Վըլ ծին գթշէ վոեն: Դա՛ էստեն, հա՛ էնտեիր, վերցունք թէ՛ Ըլոգը սարն է, գշրճվէ ընթիու, Արարամի էրեւ՝ մուտ գիշս վոեն, ու խըզալ գնորի ամլի դեն: Գիշեր է, գիճնա ծիուց, ծին գմարէ էնտեն, գթաշէ յափունչին, գպարօի ծիու կողդին, մինչև լուսնա: Առավոդ օր գէնա, գդեսնա խըզալ իրանից դսս մետր էն զրդմ նստուգ է, պրզուգ: Դընը գէնա, ծիու խուներ գտրէ, գընգնա խըզալի էյլ, խըզալ գփախսնի, ինք՝ էնք: Գդեսնա՝ մէ յուրան դաշտ է, չադրեր զըրգուգ, խըզալ կնաց մնավ ամենամեծ չադրի դազ, ինք էլ ծին կարեց չադրի փեղից ու մղավ ներս: Փարդեն քաշուգ էր. կնդդիք բոլոր մէ գողմ էն, րիծա մարտմ՝ էլ հանդէ էնտին նստուգ:

- Բա՛րե, ապո՛:

- Բա՛րե, իրզար բարի, Ասլան:

- Իյա՛, ապո, տու իմ անուն ի՞նծ գիդես: Տու մ'ըսէ, ըոդի ֆըլ քցող է:

- Բը չկիդէ՞ն, տու էգեր իս խըզալի էնք:

- Դա՛, ապո, իրզար էգավ - մդսվ չադրի տագ: Էգեր իմ, օր ըմ խըզալ իրմաք:

- Լավ, նստի հանգստի, հանքմ՝ ան, կիդաք:

Ինք օր գնադի, գդեսնա՝ մէ սիրուն ախճիգ ճաշ թերեց էգավ, դրեց իրան առնկ:

- Ոէ՛, - ըսեց. - ապո՛, էլի՛, էլի՛ ըմ խըզալ ոիհր, յըս էրտամ:

- Այ լա՛ո, ի՞նծ խըզալ, խըզալ էդ էր, օր քգի ճաշ թերեց:

- Ի՞նալ էդի է:

- Դա՛, էդ է, լա՛ո, մեր ադի ախճիգն է, էդ չադրեր, օր զըրգուգ է, սադ մեր ադին է, մէ տուամարտ չնացէ հօս, սադ գացերին որսի, էդ կնդդիքն ին մանցի, էդ էլ՝ խըզալն է:

Ասլան նայեց, սիրո ուարծավ ախճգա վոեն, դէ՛, ախճիգն էլ հուրի-փերի, պայծ նշանլու է. իրանց մենձ՝ Ըվդրօշն ը, ըդրոր հեղ, ըն լէ գացեր է որսի: Ախճգա սիրո, չէ՛, դակ է Ասլանի վոեն, չուգէ առնէ Ըվդրօշին: Ամէ չգդրէ Ասլանից: Ապոն, դէ՛, ֆըլչ է, գ'կոապէ, օր ախճիգ գուգէ Ասլանին, կ'սէ.

- Ասլան ջան, գ'ոնամ իդամ դանիս, պայծ չէ՛ տու թակավորի դդա իս, գնա քու հոր ըսէ, թըխ իկան ուզին, շնորկով դանին. գարկ էրես է: Ասլան գլուխ գկախէ. - Վըլը ապո՛, ջիշտ իս:

Էլավ նստավ ծին, էդ տառժավ: Կնաց նույն ջան-պով, դեսավ իրեք ընգիր հանդին ջանպու կցոն

գտայասին, ընքան որս ին էնէ, ըլ մ'հարցու, պայծ թակավորի ահուն՝ չըն իշխնա էրտա: Օր գդեսնան Ալաւն էգավ գուրախանան, կ'սին. - էս որսն էլ քեզի:

- Չէ, - կ'սէ, - հարգավոր չէ՛, յըս իմ որս արտեն կղեր իմ: Գիկան տուն, Ասլան գամճնա հոր ըսէ, օր գնացեր իմ խըզալի սար, ախճիգ իմ դեսէ: Էդես գտնցնի ամիսներ, դղեն գիշեր-ցերենգ գմդածէ, էղեր է ցախ: Թակավոր ինճ գէնէ, չ'կընա ողբա հիվանդություն որոշէ, թժշկ գպերէ, ինճ գէնէ՝ ճար չէղնի: Մէ ինելոր մարտ կ'սէ. - ըղրան գաղտնիք կա, էղի հիվանդ չէ: Գիկա իրզալի անուն գիդա, ողեն գիւղշնա, ծաղր գիկա էրես. նոր գպացվի էտեի, գպաղմէ հալ-հեկյատ էղավս էղավ, սերով էր խըզալը, ընգեր իմ էնք, գնացէ մնի չադրի տագ, դու մ'սէ էղի ախճիգ է, մէ րիծա մարտմ՝ էլ ըսեց. - Գնա՛ ըսա քու հոր, թըխ իկա ուզելով դարեք, կարգ՝ էղապէս է: Յըս էլ գամճնեք իմ հոր ըսեք:

Նոր էդ մարտ թակավորին կ'սէ. - Թակավոր արրած կենա, քու դղեն հիվանդ չէ, քու դղեն սերով դարած է:

Գիկա թակավոր, կ'սէ. - Ասլան, րալան, արի քաղցի մեծ ինճ ախճիգ ծեռ դրին, ուզիմ, դու ողբնէ վազն անցի:

- Չէ՛, - ըսեց, - էղեր էդ է, չէղնի էդ է, յըս էդ ախճիգ գուզիմ: ճար գդրավ, թակավոր վերուց զորք ուղարգեց, դիլ-զուունա, գացին: Գացին իրսան խըզալի սար՝ Ասլան շիվարավ. նը՛ չադր կա, նը՛ մարտ, նը՛ մըդատ, չոքմ՝ էկիր ը գանաճ: Գնաց դղին, հասավ չադրի տեղը. զանա՞ն խոդ է, օջախն էլ հանդէ էնտեիր: Օտկով զըրգեց էստին, էնտին, նեսավ մէ քարի տագ թդրիմ՝ կղոր, էրգու հադ էլ՝ ճան: Թդրի վոեն զրուգ էր. - Ասլան, էդ օր, օր դու էգար - գացիր, ապոն պատմեց մերունց, իմ հիր գիշերով քշվակ գնաց Հնդու յան, Հնոգաստանի էրգիր: Հանդէ էդ ճաններ դրուգ է էստի. թը էրեխա իս՝ քեզի համար ճան իւադցի, գնա քու տուն, թը տղամարտ իս՝ գիկաս իմ էնք: Դղեն, օր գ'գարտա, ըրոց հեղ գուրագէ, ինք գնատի ծին ու գէրտա դեր Հնդստանու էրգիր: Գէրտա հարց ու փործով, հա՛ էստեի, հա՛ էնտեի, գիասնի Հնդգաստանի էրգիրը: Գէրտա մէ սար տեխ, գդեսնա՝ սարիմ՝ օչխար փովեր է գոսրծա, գեարծու. - Ո՞ւմ օչխարն է: Զորան կ'սէ. - մեր ադի օչխարն է:

- Ա՛ն, - կ'սէ, - գդա՛: Ցուց կիդան ադի չադր, գիճնա ծիուց, գնդի ներս, ապոն հանդէ նստուգ:

- Ասլան, - կ'սէ, - է՛լի էգար:

- Ապո՛, - կ'սէ, - դու մէ հադ ընծի իւապիր, իիմս չըս կ'ոնա, մեօ է՛ խըզալին գիանիմ:

Կ'սէ. - Նստի՛, լա՛ո, նստի՛ հանգստացի՛, հեղո գդսնիս: Ոէ՛, խըզալի սիրո լէ Ասլանի համար գթունա. եակիր է, զարտրվեր է: Կուդին հաց գպրծնան, Ասլան գդմէ խըզալին ուր թըխ ու գէրտա: Ոէ՛, ապոն արտին

ովերը, գիցէ՝ ախմիզ սերով է: Ապոն գտանձէ հարսներուն կ'սէ. - Բերեթք մէ պառակ ծի, ընծի դրեք մէ իտուրջին, մյուսի մեճ էլ՝ իմ քաշով քար լցեք, երտամ եավար էնիմ, օր Խըզալին դարան: Էղբես գընգնա ջամպա, յուա օրվան գիասնի եղ որսի դեխ, դղեք գիեսնան օր ապոն է, կ'սին. - Ուրեմս, մէ րան է պադայի: Յըվար գէնէ՝ Ասլան Խըզալին դարակ, Ծղոք գիասո-վին իրար: Չէ՝ Խըզալ որրես նշանլու է. Ըլիք-ոզ գէնին կ'սէ. - Դուք մացեք ծեր աեխ, յըս մինազ գիտամ, հախտեցի՝ գմերին, սպանեց ընծի, թո՞ղ սպան: Էղբես գընգնա Ասլանի եղեւ Խըզալն էլ եա եղս գնայտ, կ'սէ.

- Ասլան քչէ, Ասլան քչէ: Էն գդեսնա՝ սարի գլուխ դրւման էավ:

- Ասլան, - կ'սէ, - Ըվգորոշն է, կայնի՛, պրծում չկա:

Ըվգորոշ հեռվեն գոռոա.

- Ասլան, իմի՛ գովլնք, տու Խըզալին փախցրեր իս, գովլնք, օվ եահւտեց՝ Խըզալ իրանն է:

Ասլան գուգէ իճնա ծիուց, ըրզալ չքորգէ: - Ասլան, - կ'սէ, - Ըվգորոշի ծին քամու ծի է, յոտ օրվա ջամպեն՝ յոտ ժամ է էգէ. իմի՛ թեզրուու է, թե Էղբես կոնաս Վլեն, նստի քու ծին քչէ վրեն: Ասլան չուզէ նըմքրդուտուն էնէ. գուգէ իճնա, եանգոսին, նոր գրվն: Ըվգորոշ օը գիեսնա Ասլան նըմքրդուտուն չեն, Խըզալի սիրյն էլ տեր Ասլանն է, - կ'սէ, - Իմի՛, իմի՛, յըս քեզի փոքր ախակեր, տու ընծի մենձ ախակեր, իմի՛ հանգոսինք, հըղոար եաց ուղինք:

Խըզալի սիրդ գընգնա տե՞ի, Ըվգորոշի ըսած ըսած է: Գնստին, գուտին պրծոնին, մէ տաժի է Ըվգորոշ եղրին ը պերի: Մուտ գիրս, արտեն գիշեր գգորէ, Ըվգորոշ կ'սէ.

- Ասլան, եերտով րդի պաեագ կայնիք, ամայի դաշտ է. գել է, ջընըվար է: Կ'սէ. - Դուք պարզեք, յըս պաեագ գկայնիմ:

- Չէ, - կ'սէ, - տու քու ծիու մոդ քնի, Խըզալն էլ ըմ ծիու կոիկ: Վերճ գեամոզէ, Ասլան գկայնի պահագ: Գիշերվա կեսին գդեսնա՝ սարհմ՝ վլա կրագ կերևա, գմդաձէ. «Ա՛ մարտ, ցերեգդվ էտեխս կըազ չկար, եղ ի՞նձ կրագ է կերևա: Լուսնա, նոր ըսիմ՝ Ըվգորոշ՝, կրագ իմ տեսի էս ինչ տե՞իս, րդի ըսէ՝ վահինցեր իմ, լավն էն է՝ նստին ծին էրտամ»:

Գրորգ ըղբց օդի քնուու, ինչ գմստի ծին ու գերտա կրադի Վլեն, գերտա րլուրիմ՝ վրը գիեսնա յոտ հոկի՝ յափունցին քաշուու իրանց գլուխ, քնուու ին, մէ ախմիզ էլ հանդէ մադարի մեճ. տնավեր խու սիրուն չէ՛, ըղբը շողը կրագ կերևա. «Լուսնա՛գ, - կ'սէ, - դու մէլնա՝ յըս գէլնամ»: Ասլան գշիվարի, ի՞նձ էնէ, կ'սէ՝ էրտամ ե՞ղ, կսին՝ վահինցավ, ըլ նըմքրդուտուն չեն, գեարէ իրան ծին եղ ծիանու կողքին, ինքն էլ գիատտէր իրան յափունցին ու գպարզի քնի: Վոյը

գընի, եղ յոտից մեգմ՝ գիմնա: Գիմնա, գեամրու ծիանում՝ ուտ ծի է: Գեամրու իրանց ուտ եռկի ին, գոյսկի ախապոր գիյօտ, կ'սէ. - Էլի՛, մեր մեճ էվելի մարտ կա: Էղբեսով, մեգ՝ մյուսին ծեն իդալով՝ յոտն էլ գէլնան: Գէլնան ալգոյիզ ախալեր կ'սէ. - Չիմա գքաշիմ թուր տեղ թորգիմ: Մենձ կ'սէ. - Էղբես մ՞սի, էս մարտ, օր էգեր ը, մզի քնած ր դես ու իրան ծին էլ կարեր է ու քնէ, ը՞դ էլ որամարտ է, ը՞դ է իտչախութեյուն ունի, ծեն իդաք, դեսնաք ի՞նձ մարտ է, վահիկող էղա՛վ, հախեն գիկաք, չեղավ՝ գէնինք մզի ախալեր:

Գզարտնոցուն. գդարտի կ'սէ. - Ա՛ մարտ, ի՞նձ մարտ իք, չըք թորգի գիշեր մարտ եանգիստ քնի:

- Ելի դեսնաք ի՞նձ մարտ իս, ի՞նձ գրծ ունիս էստեիս: Բը՛ կ'սէ. - Դուք ի՞նձ մարտ իք, էս ախմիզ ի՞նձ եք պերի էստեիս, դաշա՞դ իք:

Չէ՝, գմեսնան էղի վահիկող չէ, կ'սին. - Ախալեր, քու անուն ի՞նձ է, կ'սէ. - Ասլան:

- Ասլան ջան, - կ'սէ մենձ ախալեր, մեք Յնդաստանի թակավորի դրաներն իք, էս ախմիզ մեք թուրն է: Սեր-հեր ձերացեր էր, գմնեց մեգ, ըսեց. - Ա՛ որտիք, յըս ձերացեր իմ, գմեոնիմ, ընծի, օր գտանին թաղիմ՝ դնից տուրս չիկաք: Անաց ժամանագմ՝, եերս մետավ, աշիրի թակավորներ թապան էգուն մեք եոր դարան թադեն, մեք ծառան ըսեց. - Ա՛ դրեք, կնացեր ծեր եոր էղե, մարտիկ գիկան, միսիթարանք գիդան ծեզի: Կ'սէ. - Խապեց մեզի ջամպեց: Գնացինք իմ հոր թագինք պրծանք, էգունք դեսանք դըրրորդ իփագեր է, թուր քաշեր է, գայնի դըրրորդի մեծնեղ, օվ իկա, ծիավոր թե ոդավոր՝ րդի իրան թրի դագով անցնի: Դէ՛, օվ գիկա՝ ժողովուցտ է, գինվոր է, գընցնան, ըրը՝ մեկ իկակ ըդդր թրի դագով անցնի՛ք, օր մեք դան ծառան է էջի: Էրեց-չէրեց՝ չընցանք թրի դագով, դըրրոզներ կիագեց, մեք մացինք դրլու: Ե՛, քաղցի չորս գդղմ րարիսապ է, ջար գդրավ գնացինք, չն ջուր, օր րդի ընցնա քաղցի միծով, փոխինցինք ուրիշ դեխի, ըմբես, օր ցամքցեցինք, դգով ընցանք մեք րալար, ծեն դվեժինք մեք թուրու, առանք մեք թուր ծիու թըրկ ու էգանք, էգանք դրրորդի մոդ պաեագ դրու չրանա: Զարգեցինք պահագին սպանեցինք ու փախանք տո սարր: Չիմա մեք եալ էս է. էս յոտ դարի է, ամեն օր, մեք ծառան, օր թակավոր է դարծէ, զորք գման մեք էղե, գեռվինք, զըրգինք, - զըրգվինք, մնացող եղ գէրտա, մեք գմնանք էստեիս:

Ըսեց. - Օր մէ պան ըսիմ, գեամածայնի՛ք: Ըսին.

- Ի՞նձ է: Ըսեց. - Ընծի մէ ախալեր գա, դաշտի մեծնեխս քնուու է: Եթե գեամածայնի՛ք ծեր քուր իդաք իմ ախապոր, գէլնինք ինն եռկի, գէրտաք ծեր քաղցի վլես գիյօտ, թակավոր լէ գոպանինք, ծեզնից մեզիմ՝ գտրիք թակավոր: Կ'սին. - Չամածայն իք: Կ'սէ. - Դէ՛, օր համաձայն իք, ծեզնից որ օր իտչախի է, թոդ էրտա դրսչսի

մեծ, իրեք անկամ րոռա՝ Ըվդըօր շու փախնի, էնրես, օր եղբեն չհասնի, օր հասավ՝ վի՞զ գ’կորէ: Վըլ պար-յիգ ախակեր գերսոս, իրեք անկամ գոռօւս՝ ԸվդըօրՇ: Ըվդըօր զգարափ կ’սէ. - Ծիր՝, ուրեմս ավսզագմեր հարծագմեր ին Ասլանի վրեն, Ասլան իրվար էրեց: **Գէլի** ընգմի րգոր էուն, դէ՛, քամու ծին է. Էսաեխ, էն-տեխ, եղ է օր գիասնի՝ Ասլան ընտիեն գրոռա. - Ըվդը-օրՇ, ծեռդդ քեզի րոնէ: Գուսնա, օր Ասլան էտեխ է, ըն ախճիգ հանդէ էնտեխ քնուգ, ըգոր լը յու ախ-պեր ին՛ Ասլանի քով կայնուգ: Ըրր. - Ըդ ի՞նծ րան է, ի՞նծ դրսվի է: Կ’սէ. - Գիղե՛ս ինծ. էգոնք Շնդգամատանի թակավորի դղաներն ին, եղ րլ՝ իրանց քուրն է. Էսպես օյին է եգէ իրանց գլուխ, համաձայներին իրանց քուր դվերին քեզի, օր առավող էրտանք իրանց քաղքի վրեն գրիվ:

- Տո՛ գիղես, յըս քու փոքր ախպերն իմ, էրտում իմ գերէ, քզնից չե՞մ գրովի:

Էլամ առավող Խըզալին իմցին, պերին ոդ ախճ-գս մող, իրանք հուզում էրեցին քաղքի վուն, զրոգեցին - զըրգվան, դարան-պերեցին, վիրօ թակավորի գուխ լէ կորեցին, րերին իրանց մենձ ախպեր՝ դրին թակավոր: Դրեցին թակավոր, էգան ախճգմեր դա-րան էնտեխ, ամիսմ’ օգի մանցին: Ամիսմ’ մանցին, օրմ’ էլ էլան գիասին ծովի պերան: Ասլան շադ մրա-ծեց ըսեց. - **Այ** ջանըմ, ես էրգար ժըմընագ դմից տուրս ինք էգէ, հիմի ըմ ծնող ի՞նծ դրուայան մեծ է, յըս րոդի էրտամ մեր էրգին: Էգան: Էգան որուն, ըսեց թակավո-րին. - Աեր էրգիր ընգեր ը իմ միտկ, գուգիմ էրտամ, թույլ գիղա՞ս:

Ըսեց. - Ընչո՞ւ թույլ չըմ իդա, չչ տու մեր գյանկ փրգիր, տու լէ թակավորի դդա իս, օր քու էրգիր ըն-գեր ը քու միտկ, գմա՛, ասու աճողուտուն քու հեղ էղնի, լուաւն քեզի զջամայիմ: Առավող գէլնան, ահա-կին րադրաստություն գդեսնա, ահակին ունեցվածք գորէ ըդրց հեդ, ըր քուր, Խըզալ, Ըվդըօր լէ ըդրց Երդին, գորէ ջամպու, ըր զորկով գիանէ Շնդգամատա-նի հոդից, գիանէ մինձնէ ի իրանց հօդ ու հեղ գիկա: Ուրեմս, Ըվդըօրշ Ֆորլ քցող է, կ’սէ. - Ի՞մալ էնինք, օր թակավորի մող հանգարծագի չէլնանք: Գէրտան քաղքի մող, դրուան դաշտ է, կ’սէ. - Ասլան, էստեխ չադր զըրգինք հանգատինք, նոր առավող զուհար զջամայինք թակավորին, գիկա մեզի գիանէ:

Գիամածայնին. չադր զըրգին, գպարգին հան-գատելու, իրանք օր գընին, Ըվդըօրշ քնի կլու գքցէ էրգաւ ախճգս անգաջ լէ, Ասլանին լէ, ինք գմստի ծին, գէլնա քաղքի մեծ: Գէրտա վարեղներ գմարտէ, գպե-րէ օդի, մէ մե՛նծ շենք զգորդէ, թը քրնի օր, գարոկէ վիրճացու, գտանէ ըդրց տեղավորժու մեծ, նոր քնի կլան գիանէ իրանց անգնուց: Ասլան գդարտի՛ իյա՛, շենքի մեծ է:

- Ըվդըօրշ, - կ’սէ, - ըդ վի՞ր շենքն է: Կ’սէ. - Աերն է - Իմա՞լ:

- Յա՛, - կ’սէ, - տու քնուգ էր, յըս դվեր իմ սարկել: Դէ՛, Ասլան գիդէ, օր էղի ֆըլիի է: Ե՛, մանցին էտեխ: Թակավորին ջուհար զջամային, կ’սին. - թակավոր արրած կենա, քու դդեն էգեր է, Սև մարտմ’, էրգու ախճիգ լէ հըդին, հանդէ քաղքի գմիկ րալատմ’ շինէ, օր քու րալատ հեչ ը ըդրը աեն: Թակավոր նստավ ֆայտոն, ինք ու իրանց վըգիր էգան: Էգան, տուր պացեց դեսավ չորսով նստուգ: Թակավոր օր դեսավ էրգու եռունիգ-հրեղնն ախճգմեր, ուշկ ընցավ: Պերցին թակավորին ուշկի, նստին սեղանի մոդ:

- Ա՛յ րալամ, - ըսավ, - ըդ օր էգեր իք, ինչի՞ չոք իկա ալենկ էնա:

- Դէ՛. - ըսեց, - հայրիգ ջան, էրեգ ինք էգէ, Ֆլան, րեֆան, համոգեցին թակավորին: Թակավոր արտեն միտկ ավիրեց, ըսեց. - Դե՞ս, իմ դդեն կնացէ էրգու հըեղեն ախճիգ է պերէ, րոդի կլուխ օյին խաղամ, ըն մյուան էլ արտեն Աև մարտմէ, ըն էլ հեչ գէնիմ, եղ էրգու ախճիգ դանիմ ընծի: Ըսեց. - Գիկա՞ք էրտաք խոնախ: Ասլան համածայն է, պայծ Ըվդըօրշ՝ լսիտրի է, ըսեց. - Ձէ՛, թակավոր արրած կենա, էսօր րեզրուգ ինք, տու կնա, մեք առավող գիկանք: Պարգան քնան: Առավոդ Ասլան շուր կավ, հակավ շորեր, Ըվդըօրշ դեղից չէլավ: Էգսվ Ասլան ըսեց. - Էլի՛ էրտանք, միզը իմ հեր գոպասը: Ըսեց. - Ասլան, ըսօր շադ վաղ իմ, չըմ կ’ոնա իկա, գմա, պայծ տաժին քու հեղ գուանիս, ինչ օր քու աօճն գտնին՝ առածին տաժուն գիդաս:

Ըվդըօրշ, դո՛, ֆըլ քցող է, գիդէ թը ինծ գիկա ի-րանց գիուխ: Ուրեմս, Ասլան նստավ ծին, գնաց: Ներ կեղծավորուտուն էրեց, ուրախածավ, պերեց եաց դվից Ասլանի րադիին: Տու մ’սի՝ ըդրոր միտկ խըրար է, ճաշ էպոդին կարկադրեր է, օր մէ աման ճաշ թույնէ, տու Ասլանին: ճաշ օր գտնին, գը՛, Ըվդըօրշ Ասլանին ըսեր է. Ասլան զըրգոգէ առծին գրալ կիդա շան: Շուն օր կուրէ, վիկալեն զընգնա գեղին, զընգնա գիդին, թակավոր գլսանվի իըար, գմեղենա ճաշ էպոդի վլեն, կ’սէ. - Գուգիք իմ մեզուզար դրային սպանի՞ք, Ֆլան, ֆստան, էսօր յըս րոդի իմ դրային ճաշ իդամ: Դիեն էլ գիավգնա, դէ՛, տաժին արտեն սադգեր էր, դրան քցին ծովի: Ըվդըօրշ լր էդ վախտ էրգու հար-սին գեանէ դանիք, մէ ծեռ գիդա սլաժագմ’թույն, մէ ծեռ դրֆի, կ’սէ. - Ջիմա զորք գիկա իմ վրեն գիդա, ընծի օր սպանեցին, տուք էրգուս լէ թույն գիմեք, օր չսպանեցին յըս հախտեցի իրանց, ուրեմս, դըֆին գիմեք, գիկակ ցած: Իրանք օր գէլնան դանիք, գիդս-նան, օր շուն քցեցին ծովի:

Դանանք թակավորին: Գակերէ չայ գշինէ, գիդա դդին: Ասլան գիմէ, զընգնա: Գակերէ Ասլանի աճկեր գեանէ, գդնէ ցերեր, գշինէ կուրրէ դագաղ, Ասլանին

գդնին մեճ, գոանին քցին ծովը: Ըվորոշ գդեսնա, օր Ասլանին էլ քցին ծովը, Ասլանն է գնաց: Թակավոր մեջ գորկ գիւրգէ Ըվորոշի դեմ: Դէ, Ըվորոշի ձին ուժեղ, քանու ծի է, գալատողին՝ կիղա տագ, գալատողին՝ գզըրգէ - պրտէ, ըմրես կենէ, օր իլաջ գ'կորի թակավորի վրեն:

Թռո իրանք ետեխ կովեն, մեք դառնանք Ասլանին: Ասլան ծովե հեղ գնաց, գնա՞ց հասավ Յնդգասաւանու էրգիր: Յըսավ էնտեխ. օգի հայգմի ձգնորսմ'կա, ամեն օր ծուգ գորսար բերէ քաղրի մեճ ծախւ, եղ օր ինչքան գքցէ՛ թռո դարդագ գլւնա, ինը օր գդեսնա՝ սև րամ' քի հեղ գիկա: Թռո գքցէ, ճգրոտելեն գքաշէ հանէ դուրս, գդեսնա՝ մենծ սնդուկմ'է, կ'սէ. - Վըլը լավ է, կա-չկա եղի թանգարժեք բան է, գտանիմ թակավորին նվերը: Գքցէ չլան, գշրլգէ, դանէ թագավորի րալատ գրմն: Թակավոր կ'սէ է դ հ'նճ է:

- Վըլը, - կ'սէ, - եսօր չկոցա ծուգ որսացի, եղ ռաստ եգավ, եղ ընգավ թռո, ծանդր է, անրայման թանգ արրանկ կեղնի մեճ: Թակավոր սկան-ման կիղա ձգնորսին, ճամպու կըմնէ: Գիկա սնդուկի բերան գպանա, դեսնա՝ այ ճարտ, մէ ճարտ շարիգ-թումբնով, ածկեր եանուգ, շորեր լէ գոյսկ դրուգ, եանդէ մըծ դագաղին: Գնայէ, գճանճնա, կտ եախ նհախ, եղի Ասլանն է: Բժիշկ գկանճէ, ման գիկան թերերուց գ'գդնան աճկեր, գդնին տեղ, դեղերով - բաներով գդեսնա՝ լուս գիճնա աճկեր: Ասլան վոազ գճանճնա Յնդգաստանի թակավորի դղին, օր կարգեցին թակավոր: Շիվը գնայէ կ'սէ. - Ասլան, դու ի՞ս, ի՞նճ է սկսայէ քզի: Կ'սէ. - Կայզն անցի, էլ մ'հարցու, ինճ օր եգեր է իմ գլուխ, ին եերն է երէ, - բնծի հարգավոր է մէ լավ ծի, մէ ծեռկ էլ րժշկի շոր, յըս րդի երտամ՝ իմ հոր եախեն իկամ:

Լավ օր գլավնա, թակավոր գպերէ իրան ուզած կիղա, գաերէ իրան ուզած կիղա, գրմն ճամպու: Ասլան դընճնա ճամպա, շադ ու քիչ գերտա, գիասնի իրան եռոր թակավորուչուն, ծին գրրահիէ, գերտա թակավորի րալատի գուր գնստի: Ծառաներ գէնան դուրս, գդեսնան բժիշկմ'ետեխ նատուգ:

- Ա՛ ճարտ, - կ'սին, - ի՞նճ ճարտ իս: Կսէ. - բժիշկ իմ, հասկեր իմ, ծեր էրգիր գոյիկ է, եգեր իմ ժողովրտին րուժիմ:

Գիկա թակավոր, գտանէ ներս: Կ'սէ. - Թակավոր արրած կենա, եգեր իմ քու եհվանգներ բուժիմ: Շայերի գերուժէ, գուղարգէ Ըվորոշի դեմ: Օրմէլ թակավորի եեղ գնայէ դեսնա՝ Ըվորոշ սադ զորկ ճարտ ու խուրտ երէ, գայնէ մեյդան, էրգու ախմիգ էլ հանդին դանիք: Թակավորին կ'սէ. - Ի՞նճ գիղաս, եղ ծիավորի հախից իկամ: Կ'սէ. - Օր կ'ոցաը, ըմ թակավորուչուն կիղան քեզի: Կ'սէ. - Դէ լավ, լավ ծիմ՝ տու, երտամ դեմ Ըվորոշ կոիկ, Գտանին ծիանու մեճ. գնայէ, գնայէ, ման գիկա, իրան ծին չկա: Տու մ'սէ իրան ծին

առանձին սենյագ ին կոխսէ, կեր լէ լուսամուդով է կիղան, ծին ընքան է սենյագի մեճ կացէ-էգէ, քանդրտէ, օր կադեր է, մարտ չիշինա դուր բանա: Գնայէ տդեն ծիանու մեճ, գիկա կ'սէ. - թակավոր արրած կենա, քու ծիանու մեճ ծի չկա, օր էդ մարտուն եախւտէ, բոլոր անպետք բան ին:

Օռային գջամպէ կ'սէ. - Գնա՛ են սենյագի դուր բաց, են շան լագդի ծին էնտեխի է, եթե կ'ոնա, թո՛դ էն ծին նստի:

Գերտա սենյագի դուր գպանա, ծին են գողմից անգքներ գիւլուշտէ, գիկա: Ասլան ծեն կիղա, ծին գճանճնա տիրոն ծեն, գիկա առնկ գ'գանի: Ասլան գնած ծիու գլուխ, գրակլ ծիու ջագատ, կ'սէ. - Ըըր ըրդա թամք ո՞ւր է: Թամք լէ կիղան, գիկա կ'սէ. - Թակավոր արրած կենա, լավ ծի է, իսելոր է, պոնեցի, սլյած հակուստ չունիմ:

Թակավոր գջամպէ ծառային կ'սէ.

- Գնա՛, Ասլանի շորեր սիեր դու էդ մարտուն:

Ծառան գպերէ զենք լէ, շորեր լէ; գիակնի, գկարտէ, գնստի ծին ու գքցէ: Թակավոր գնայէ՛, կ'սէ. «Ախ-պեր, եղի մնի քըց Ասլան էղնի, պայծ չէ՝ օր Ասլանի աճկեր յըս իմ հանէ րմ ծեռքով, դիազն էլ ճուրն իմ քցէ. Դէ, գարող է մարտ մարտու նման էղնի»: Ասլան գքցէ ծին, գքցէ գերտա: Առավոդ շուդ Ասլան գքցէ ծին, գերտա կայնի մեյդան: Են էրգու ախմիգ գնային դանքից, կ'սին. - Ըվորու՛շ, մեջ աճկ վախսցէ էդ ծիավորից, եսօր եղի քեզի գիախստ:

- Դէ, - կ'սէ, - Վերցեք ծեր բաժագներ՝ մեզ թույն, մեզ դոյֆի, էլեք վերև: Ըվորոշ գնստի ծին գիկա, չկիդէ օր եղի Ասլանն է, պայծ Ասլան հանաք է կենէ, դէ՛ իրան ծին հանգիստ է, եղ մարտու ծին գիշերցերեք բադերազմի դաշտ: Ըվորոշ ինչքան գգորգէ, դըրի չկրի. Ըդ հ'նճ պան ը: Ասլանն է իսադ է գիսադա: Վերծ գեադիյի, գքցէ վիեն՝ Ասլան գրուա. - Ըվորու՛շ, փախի՛, յըս Ասլանն իմ: Օր կ'սէ Ասլանն իմ, Ըվորոշ գիախնի, ինք կիղա երև, գիասնի օր պոնէ, չկ'ոնա: Թակավոր հեռվեն գնայէ, օղներ կիղա գեղին. - Յա՛ րոնէ, հա՛ րոնէ: Վըլը գերտան հասնին իրանց բալադին, օլոր կիղան նենյագի երև, գիճնան ծիանուց ու գիատտվին: Գնցնան էնտին, էրգու ախմիգ գանիտ էլ օր գդեսնան Ասլանն է, գիճնան դանքից, գիատտվին, գիկան նստին սեղան: Թակավորի սիրու թրուտ չիղա.

- Միգա, - կ'սէ, - բժիշկ ըդրու սպանեց: Գնստի ֆայտոն գիկա, օր էդ էրգու ախմիգ գանիտ էնէ, վըդիրն էլ հըրին: Գիկան դուր կրանան. օհօ՛, եղի Ըվորոշ նը, եղի՛ էն էրգու ախմիգիք, ը՛դ էլ Ասլանն ը: Նըմք գպադին, գայնին: Ասլան գէլնա սլոնէ թակավորի ծեռ, կ'սէ. - Արի, արի՛, տու քու օտկով անջախ ընգար թագարտ: Գգորգէ ետեխ թակավորի, Վըլիրի վիզն էլ գ'կորէ, գառնին իրենց քու, գերտան թակավորագան բալատ:

Ասլան գնուտի թակավոր, Ըվազրքը շն է իրան վրգիր, իրանց բասան է հաստատ գենին ու գրակավորին հարի իրանց օյանկի վերճ: Իրանք հասան իրանց նբաղագին, տուք էլ հասնիք ծեր նբաղագին:

### Յ (5). ՄԻՆԱՄ ԹՀԿՎՈՐ

Սինամ հառուց թըկավուր էր. ըոբես թըկավուր չկեր: Ուներ մէ վարոց, Կողցավ գնիգ զվարոց, զըրգուց վըր բառեցին, տառուց էշ, իրեք դարի ալառժավ: Զոկանջ ըսեց.

- Քու դուն ավրի, գլոն տառուու գռունգ, թըի էրտը գդգոյ իրդ գրունգնուն, խեղ ը, ուր իսադ թըր բարմը:

Զըրգուց, տառուց գռունգ, հըսավ իրդ գռունգնուն, իրգուն գիկեն ընտիեն, գմոնդվեն վլեն՝ թերոկեն:

Զոկանջ ըսեց. - Զըրգ, տառուու շնլագող, գիկը մըր աղոյու սլոլոր, սըրինք ուրին մեգ-մեգ գրոյ հաց:

Զըրգուց, տառուց շնլագող, գֆուր արոյու պոլոր: Էգսվ, միս ը գմանդրեն, թուոց իսազ մը՛ փախավ: Գնիգ վերոց զշերեփի, զըրգուց վըր կլիխուն: Զոկանջ ըսեց. - Քոլնա՛ս, չէ՛ մըր թըկավուրն ը, թըլս դսնը իսազմ՝ ուրին ուրդ:

Դորքուրոջ ախմիգ մը գեր ուրին, ըսեց.

- Սամ՛, զիի վլ՛ը ը: Ըսեց. - Ըի մըր թըկավուրն ը՝ Սինամ թըկավոր: Կողցավ զախմիգ վարոց, դսրավ գըրգուց վըր բառեցին, ըսեց. - Դը տառցի՛ Սինամ թըկավոր, տառցի՛:

Տառցավ: Վեցոց զվարոց մողեն, զըրգուց զգնիգ էնեց մսի գոջ, զոկանջ էնեց սև ակուավ, տրեց վլրեն, վերուց ու կնաց: Կնաց օխտ ջամպու գիսուն, օխտ ծովու կրիսեն զըրգուց, ուր շենք շինեց, ըր ուր րադ-մուստեն աշխրկին չիկը: Մնաց օդի մէ առժսմանազ,

Թըկավեր դեսավ՝ ըր մեռնելու յը, գսնեց գուր իրեք դրան ըսեց.

- Յը գնեռնիմ, իըրմեգ դրան օրմ՝ իկը բըհը զըմ կերեզման:

Մեռավ: Մոճին օր կնաց մեծ դրան: Իրգուն մթնեց, կոռում-կոչում էգսվ, փախավ էգսվ: Ըսին. - Օրի՛ էգսը, ըսեց. - Բազը:

Մըգըլ օր կնաց միճնեգ դրան: Էմլը կոռուն, հուշապ էգսվ, էն լը փախավ, տողցուց փախավ: Ըսին. - Օրի՛ էգար, ըսեց. - Յուրդ էք՝ փախը: Մըգըլ օր բգոյիգ դրան վերոց զմոմեր, գրաւ ու կնաց: Կնաց նստավ, ըր քնելկը էլասվ, գրչուն-օրորուն էգսվ: Էլասվ օր հուշապմ՝ էր. քըշեց զբուր, գըրոյեց, թօավ արուն վըր գըրագին, մարեց զմոմեր լը, գրագ լը: Ըսեց. - Էրտամ դրան պիրի՞ն, զըսիմ՝ վախեցիլ վախեցավ, գրագ մը գէրեվը օգցում Մասիս, գէրտամ օնի՛ պերի՞մ: Կնաց իճավ ծըմ: Մէգ հընդի գրիլ ը գգրիը, ըսեց. - Ի՞նձ ը զդրիս: Ըսեց. - Կիշեր ու ցըրեգ.

- Գաննի՛, - ըսեց, - հըտը էրտամ պերիմ ընծի գըագ:

- Չէ՛, - ըսեց:

Պոնեց թիրորսն գարեց գուտկ ու ծեռնիր, թորգեց կնաց: Կնաց էավ վըր գրագին, օխտ հադ դէ հնտին գրագի պոլոր թնուգ, օխտ գրնտեն բոյնձ վլեն: Վերոց զգրագ, տառցավ ըսեց. - Նըմըրորւթեն լավ պան չէ, գաննի ինցում զիեեր: Իմցուց, կնաց պերեց օխտ գանտանի բոյնձ, դարավ տրից օնի, վերոց զգրագ, Ղեսան, օր ուրնցն ուժեի ը, ըսին. - թող կը մգի ախսալեր: Ըսեց. - Ի՞նձ գէնիկ, ի՞նձ չըկ էնի:

- Թակավորի ախմիգ հընդը օդի, օխտ առփու թոուգ, չըսք գըրի իճնի պերի, հընդը ծովու թըրման:

Շարեց զմեխիր, կնաց էավ բըդմի պերան, մեգմեց մոըտեց, թըլեց ընտին, թըլեց ընտին, յուն լը նորտեց, իճավ: Իճավ, թըկըվորի ախմիգ հընդը բըլադի մեճ. մոմմ՝ օպմուն, մեգ՝ կլուի: Պոնեց րակեց, հարծաց զուր իսունջան, կնաց: Կնաց, դսրավ զուր գրագ, հըսավ օդի, զըրգուց գուր չագր, նստավ: Քնավ էլավ՝ դեսավ հուշապ մը փատերը զչադր. քըշից զըուր էավ: Ըսեց. - Զու դէիս գաննի, թընը՝ գգում զքի:

Ըսեց. - Ի՞նձ գուզիս: Ըսեց. - Էն գուզիմ էրտաս սկերիս Սինամ թակավորի բարձուտեն: Ըսեց. - Յը չըմ գըրի, ի՞նձ կիհնամ ջամսաւն ուր ը:

- Մրի՛, - ըսեց, - էի ըմ կըլիխուն, ցցում ջամպան, կնը՛: Զու չաղրից լը չվլիխենաս, զորք գիկը, օվու գիկը չվլիխենան: Ըսեց. - Գէրտաս Է՛, իինը ծովու խրադ, պարոի ծառու դագ զբարգիս, Սինամ հավը, հընդը ուր պուն մըր ծառուն, գիկը: Դուշապ ուր ծկըտիք գուրդը. հուշապ դմանդրիս, սըրիս մըր ուրանց: Սինամ հավը քզի գրանը:

Կնաց: Կնաց բարգսվ, դեսավ հուշապ փատվավ պարդեն, քըշեց զբուր, զդրոյեց, թապեց կեղին, զդրո մը սըրեց ծկտոց: Ըսյ մնաց, քիչ մնաց, դեսավ՝ Սինամ հավը գըոռու էրգնուց, էգսվ գիճներ ուր վլրեն: Ծկտիկ ըսին. - Սզի փրգի՛ ը: Իճավ ըսեց. - Ի՞նձ գուզիս զու լավուտեն: Գուգիմ ընծուս զիս Սինամ թըկըվորի իեճին:

- Այս, - ըսեց, - ընցնել գընցում, պայժ տառնալ դժվար ը, օվ զուր բարձուտեն ըսը՝ զնչուս զգըրգուն: Վերուց վըր թևրուն, ինուց Սինամ թըկըվորի բըլադի իիճ: Բրծուց թերորկ մը դիկեց մոդ: Ըսեց. - Օը բադմեցիր կլիխու կալւած, գրսը՝ զքու վիզ զգըրգուն: Ըսը. - Խնտրիմ, էրտամ ծովու թոուգ աղոտիմ իկամ զը՛զ ըմ վեզ: Էգար ծովու թոուգ, զըր թերորկ վըր քըրուն զըրոգ, յըս գիճնիմ, խլսում զքի:

Բադմեց րրծավ, ըսեց. - Դը էգո զըրգուն զքու կլուիս: - Խնտրիմ, ըսեց, - էրտամ ծովու թոուգ աղոտիմ, լվացվոն, իկամ զը՛զ զըմ կլուի:

Կնաց ծովու թոուգ, թերորկ զըրգից վըր քըրուն, Սինամ հավը իճավ, վերոց վըր թևրուն, պարծրցավ: Գանճեց. - Սինամ թըկավոր, Սինամ թըկավոր, յըս

կացի, գքու րազմուտեն լը դարը մը մ աշխրկին:

Գաննի՛, - ըսեց, - Վերոց գոկանջ լը, մսի գոջ լը, թըլեց մը ծովուն: Էգուվ գուր չսոյր, Եուշաւ բարու էր, տարօտ Երեղեն ահիճիգ, Վերոց զիրեղեն ախճիգ ու էգուվ. Ուրանը հըսան ուրանց մուրագին, տուկ լը հըսնիկ ծըր մուրագին:

#### 4 (6). ԲՋՈՒ ԴՂՄՆ

Մարտու մեզմ' իրեք դղը ուրեր: Զաշքեր քոոցավ: Ըսեց. - Ֆլան ծովու դգեն գրայ մը եռու պերեք, զրոգեք ըմ աճվնին՝ գուղին: Կեծավ մեժ դղան զծին, կնաց: Կնաց իրեք ավուր խոնախ նստավ. գերավ - խմեց, էլավ վերոց զիող, էգավ. Ըսեց. - Քալան, ո՞ւր իս կացի: Ըսեց. - Ֆլան դեխ:

- Չու դրւն քանդվի, յըս գորդենք գքու մեր վըր ծիու թարդին, գերտեք, ընդեխ զըմ ազրադ գուղեք:

Էլավ միճնեգ դղան, եեծավ, վեց ավուր խոնախ կնաց: Նստավ. գերավ - խմեց, առավ զիող, էգավ. Ըսեց. - Ո՞ւր իս կացի, ըսեց. - Ֆլան դեխ:

- Չու դրւն քանդվի, գորդենք գքու մեր ծիու թարդին, գերտեք գըսօը օնի գուղենք:

Էլավ բզրիգ դղան կնաց, կնաց, շադ կնաց, հսկա մարտու ոսաստ էգավ ուրեին: Ըսեց. - Պարև:

- Ասսու պարին. - ըսեց, - Գէմի՞ս գիս քգի ախապեր: Ըսեց. - Վիզ ասսալ իւսվոի, յըս կինամ:

- Արի՛, - ըսեց: Վերեց իրին, կնաց րախչամ' իճավ. Է՛, օծն ուր րուրդով. Եսավը ուր թևով չըր իճի: Գերան - իւմեցին, դևսան Գուլփըրին էլավ վըր րըլադին:

- Կե՛յ, - ըսեց, - Մու ի՞նձ մարտ իք, զիի ճերմագ դևսու թախճան ը, գիկը ենը զծզի բուռնըտի, քըշը զուր քիք:

Ըսեց. - Ո՞ւրվէ գիկը: Ըսեց. - Դեն գէրտու, դեն գիկը:

Դղան զենք ու զրահ գարեց, կնաց վոր ջամապուն: Նիրմագ դև էգավ. ջընըվըրդանջ շարէ վըր թևերուն: Ըսավ. - Յըս զըգի կացեր ենք սար ու ծոր ման գիկեք:

Զրրգուց դղան զըգի մանդրեց, թափեց օդի, զանգնին գորեց, էլավ ըրլադի մեծ: Գուլփըրին ըսեց. - Տու ընձի, յըս՝ քգի:

- Չէ՛, - ըսեց, - զըդի գիլսմ ըմ ախապեր: Դէց զըդի ախապոր, կնաց մըգել օ՛ մեգ հանդրավ ուրին, ըսեց. - Գէմի՞ս զընձի ախապեր: Ըսեց. - Ի՞նձ հնարք ունիս: Ըսեց. - Գիեսնամ ծովու դագ, ասեղ էղնի՝ գիճնիմ հանիմ:

Առան գիրար, իճան խաս թախճի մը մեծ, գերան - խմին՝ էլան: Գուլփըրին՝ էլավ. - Կե՛յ, - ըսեց, - ըդի գարմիր դևու չսայիր ը, հավը ուր թևով, օծն ուր բորդով չըր իճնի օդի, տուք վըր իք:

Ըսեց. - Ո՞ւր վը գիկը դև: Ըսեց. - Դիմը գէրտու, դիգը գիկը:

Քըշեց զքուր կնաց առձե, զէն լը մանդրեց, զան-

գընին գորեց, էլավ բըլադի մեծ: Էգավ իրգում, Գուլփըրին ըսեց. - Յըս քգի, տու՝ ընձի: - Չէ՛, - ըսեց, - քգի գիլսմ մըգել ախապոր:

Զեն լր դէց մըգել ախապոր, բնցավ կնաց: Մրգիլ օր հանդրավ հսկա մարտու մը, ըսեց. - Ո՞ւր գէրտաս, Ըսեց. - Գէրտամ հող պերիմ, սաղցում ըմ եռոր: Ըսեց. - Տու ի՞նձ հնարքի դևու իս: Ըսեց. - Զովեւ դսգ ինչ ինչու էղնի գիանիմ: Պոնեց զըդի լը, կնաց իւսա րախճի մը մեծ, նստան գերան - իմին: Գուլփըրին՝ էլավ ըսեց.

- Է՛, իդր սև դևու չսայիր ը, էգավ՝ բուռնըտի գէնը զժգի, քըշը գուր քոր, տու վըր եք իճի օդի, դև դինը գէրտու, գիղը՝ գիկը:

Դղան քըշեց զքուր կնաց: Մև դև շարեր ը ջրնըվրգիք զուր թևերուն: Էգավ. Եա՛, - ըսեց, զըմ թիքեն էգիր ըգըմ տու՛տ, յըս կացիր իմ սաը ու ծոր գոլրիմ: Մանդրեց, զէն լէ թափեց, գորեց զանգնին, էլավ. Գուլփըրին ըսեց. - Տու ընձի, յըս՝ քգի: Ըսեց. - Չէ՛, քգի գիլսմ զըր ախապոր, ընձի մըտագ գը: Քշեց կնաց, կնաց երսավ աշխրկի ծեր, մեզմ' օգի հանդրավ ուրին՝ գովան: Գոփսն, վերոց-տրեց կեղին, օր մորտեր, դեսավ ախճիգ էր. Թառսուն - Զամ ախճիգ: Չմորտեց:

- Արի՛, - ըսեց, - յըս քգի, տու՝ ընձի, մնաք օդի: Ախճիգ ըսեց. - Թակավորի զորկ գորդորեր իմ, մանցիր ը երգու ավուր, ընդրու լը գորդորիմ՝ գվերճանը: Մացին օդի, առան գիրաք: Լուսուն էլամ՝ դաշտ վերցեր ը չադր: Ըսեց. - Յըս գէրտամ գոիվ. Թառսուն - Զամ ախճիգ ըսեց. - Սա ավուր յըս գէրտամ, վաղ՝ կնը տու: Չէ՛, - ըսեց, - հըդրար էրտանք: Կեծան ծիանին, իւառնեցին զորք, ճարտեցին, էգան զծով լողգվան: Լուսուն էլամ՝ լէ զորք չըը մանցէ: Նստան օդի, շադ նստան, քիչ նստան, օրմ', բառաք' եեծավ զծուում, կնաց Թառսուն - Զամ ախճգա իւեծին: Կամոզեց, ըսեց. - Եյր՝ լան, յըս քու մորքուրն իմ:

- Ի՞նձ մորքուր: - Լա՛ն, - ըսեց, - զքու մորքուրն իմ, մնամ օգը զքգի դմսնամ: Ծծում տրեր էր թախչեն:

Դղան էգսվ ըսեց. - Շոի վը՛ ը, ըսեց. - Գնիգմ' ը, զքսը՝ քու մորքուրն իմ: Լուսուն էլավ դղան գէրտեր նեճրուտեն: Բառաք ըսից.

- Ակյժի՛ լա՛ն, հաջու դէն՝ կօնը ուր եռկին թըր տրը քու իւեծին: Կարցուց, ըսեց. - Գէրտաս, միննագ գմնամ, քու եռկին ցցը ընձի: Ըսեց. - Ծն հոկին ի դը ցըխըվելն ը: Վերոց զցըխըվել շինեց ու հաւոցավ եըտը իրգուն:

- Չէ՛, - ըսեց թառաք, - չէ՛, լան, ցըխըվել ցախ է, տիր վորեն՝ թըլս ըսը: Մրգիլ օր ըսեց. - Ավելն ը: Լուսուն թիւնց զավել՝ չէղավ: Էմլը սովոցեց. - Չէ՛, - ըսեց, - լան, տիր հըդին, ըսք, թըլ եռկին ց'ցու քգի: Տրեց վըրեն, ըսեց. - Ծն հոկին ըմ թուրն ը, ըր թուր քըշին ուր դեխեն գործուն: յըս մեռուգ իմ:

Իրգուն ըը էգավ. դղան բարգսվ. բառաք էլավ

## Տ (7). ԻՐԵՔ ԴՂԻ ՀԵ-ՔԻԱԹԸ

կողցավ գրուր, քըշեց, դարավ քցեց ծովութեան մնաց քնութ: Այսօնան համոզեց, ըստեց. - Քելը էրտակ իսաւ բախման զքու սըրը ա՛ռ: Խապեց, մցուց ծծում, փագեց, քշեց ծուրու ու ընցավ ընտեն: Դարավ ու կնաց: Դդան իընդը բարգուր ըր դեխ: Մէ ախատեր դեսավ ըր աստի խավուավ, մըգել դեսավ՝ զքուր ծովու դագ, առան զիրար էգան, դեսան դդան իընդը անուշը բարգուր: Էլան կացին, մեգ իծավ զծով, հանեց թուր պետեց: Պերեցին զդդան ուշքի, ըստեց. - Զնութ ենք, իմցը: Ըսին. - Բու դուն չիւ վրի, Թառսուն - Զամ ախմիգ դարած ին, զքոր լը իդըրես էնած: Ըստեց. - Կացե՛ք, կացե՛ք ժըր դնեք, յըս գէրտամ կդնամ: Էլավ լուսուն ընգավ ջամակսն կնաց, կնաց հըսավ դեխս մը, թըկավուր հարսնիք ը գէնը, թերորկ մը կդավ ջամպան, տրեց ջեր ու կնաց: Կնաց մդավ բառվում դուն, ըստեց. - Սայոհիգ, ըդ ի՞նձ հարսնիք ը: Ըստեց. - Ըյի՛, լա՛ո, թըկավորի հարսնիքն ը, բառար կնաց պէրեց Թառսուն - Զամ ախմիգ, իդկան լը հարսնիք, ի՞նչ գէդնի, ըստեց. - Ծու էրտամ յըս լը հարսնիք, ի՞նչ գէդնի, ըստեց էրես պա՞ծ ը գգանուն: Կնաց դդան հարսնիք, իբգուն ըը էրես պաժիմ՝ հանեց զըր թերորկ սըրեց: Թերորկ սըրեց, թըկավորի հըշ սաղ կնաց էղս: Օվ գաերը թերորկի դեր, օվ չպերը, ախմիգ ըստեց. - Թերորկի պէրոր փիջգին աստղմ՝ գը ուրին: Էլան կդան զդդան: Թըկավուր ըստեց. - Կնը՝ պէ Յըզըրան բլրուլ: Կնաց: Կնաց ջամպան, հօդդու ախմպուրմ՝ զեք, խմեց զըր ծուր, ըստեց. - Օ՞յս, ի՞նձ անուշ ծուրմ՝ ը, - ընցավ կնաց: Շադ կնաց, քիչ կնաց, հըսավ դեխ մէ՛ էրգու դըրգահ. մեգ պաց, մեգ՝ փագ, տմագ իընդեք սև կառան, խոդ ինդեք առծն սև կիլուն, հանեց տմագ տրեց առծն կիլուն, գլադ սև կառան, ընցավ, ընցավ պիստ տոնով, վերոց զՅըզըրան բլրուլ էգսով, ըմալ գիտսեր դասէրգու րըխալ գչալեր: Յըդ պէրելուն՝ րոռացին. «Էգավ հորեղեն, դարավ իրեղեն»: Պերեց էգավ, Ըդիաղ ջամպին ծովու դգու հօդ պէրը. Վըր գաերը, Վըր չպերը, ըսին՝ թերորկի պէրոր գաերը: Էլան տրեցին մեզն՝ հեղին, ըստեց. - Յըս գէրտամ մըճ ծովուն, թը ծով գարմըավ ու գաննա՞վ, տու փախի խլսի, թը գարմըավ ու սպիդգավ՝ էրգու գըմ իընդը քըրու դագ, յըս զաերիմ իկամ, գըրգուս ծիանու պէրան, զըպ մը հոդ վերուս քու հոր իըմար: Կնաց գրվավ, իընդեն էրգու քուրագ օդի, զըրգուց գըմեց պէրան, զըպ մը հոդ վերուց ու էգան: Թըկավոր վոր բախչին հոր մը փորեց, պէրեց խալեկ փորեց վըրեն, ըստեց. - Արի՛ էրտակ րահինեն խոսաք: Բառավ էգավ ըստեց. - Ըդքան զքու զորք գորորեց, պէրեցին էգար նստար խեճի՞ն: Դդան հըսկցավ, վերուց գէրգուս լը գըմփցուց մըճ հօրուն, ճադիգ քար տրեց վըրեն: Էգավ առավ Թառսուն - Զամ ախմիգ, պէրեց էգավ դուն, հոդ զըրգուց՝ հոր աճկեր պացուց: Ուրանք իըսան ուրանց մուրազին, տու լը՝ քում:

Ժամանագին գէդին իրեք դուր, գիրսնին իրար գըսին. - Էրտաք Ստամբուլ օշխօղիք, պէրիք քոր ըր-իիք: Գէրտամ ջամպան, ըր գմողենան քաղքին՝ մեգ գըսը. - Խոզկան էրտեք, թակավոր զուր ախմիգ ի-դեր ընձի, յըս տառնենք իկենք: Սընգըլ գըսը. - Խոզկան էրտեք, թակավոր իդեր խուրցիմ՝ օսկի, յըս տառնենք: Մյուս լը գըսը. - Յըս ասսու օրինություն գուրգիմ, ասսու օրինություն հըսնի ընձի՝ բու լ օ: Գէրտամ, թակավոր գիմանը, օր իրեք իոկի իընդը գիկան, չէ՞ որմիար գանը ուրին, ոըմ գըմըլ, դենը վըր ը գիկը քաղաք: Գըսը. - Կացե՛ք, իրեք մարտ գիկան, իրեք էրիդասարդ դուր, չմդնին քաղցի մեծ:

Գէրտամ խողողու գայնին, իրեք էրիդասարդ մարտ գիկան, գիզոնին զուրանք դանին թը՝ թակավոր զգանը զծիկի: Գդանին թակավորի մոդ: Գըսը. - Ի՞նձ եք խոսացի ջամպուն, ի՞նձ ը ծըր սրոդ ուզած: - Չէ՛, մըք ոչ մի պան չըր ուզի:

- Չէ՛, - գըսը, պան եք ուզի: Մեգ գըսը. - Վը՛մ, յըս ըսի. «Խոզկան թակավոր զուր ախմիգ իդեր ընձի, տառնեք էրտեք ըմ դուն»:

- Յըս լը՝ ըսիր իմ. «Խոզկան թակավոր իդեր խուրցիմ՝ օսկի, յըս տառնեք էրտեք»:

- Ըբը տու ի՞նձ իս ըսի:

- Յըս ըսիր իմ. «Ծըր հոկին լը, թակավորին լը, յըս ասսու օրինություն գուզիմ»:

Գէլի թակավոր խուրցիմ՝ օսկին գիդը, մէ ախմագան լը գտըր ծիու վըրեն, մյուսին լը գըսը. - Տու լը տարդագ էլի կնը՝ (ըն, օր ասսու օրինություն էր ուզգէ): Գտառնան իկան: Շադ գիկան, քիչ գիկան: Գրկան դեխա՞ մեգն գըսը. - Ա՞ն զդը խուրցի օսկին քու մոդ, յըս էրտամ օդաց զընըրար իկամ: Գըսը. - Կնը՝ Գէրտը, կեղեն գջոի, օդի գէրաք մեծ: Խուրցի օսկին մնաց, դդան գըսը. - Այ մարտ, յըս ի՞նձալ էնիմ, զգարին տրին վըր ծիուն: Ըն մընգըլ ընգեք գըսը. Քըշը զծին, յըս էրտամ օդաց զընըրար իկամ, ըն լը գէրտը, կեղին գջոի, գէրտը ընքի, ըն լը չիկը: Գմնան դդան ու գնիգ: Գուզը թողը զծին ու գնիգ էրտը:

- Այ մարտ, - գըսը զնիգ, - ինչի՞ գէրտաս, քու ասսու օրինություն հըսեք ը քզի, ինչ խնտրեք իս ասսուց՝ աստված դմէ քզի, մէ ո՞ւր գփախնիս էրտաս, մացի, էղի դեր ընձի:

Գվեզու գիկը: Գիկը քաղաք մը, գէրտամ իսսն, ըդեխ սենյագմ՝ զը, գըսին. - Կնը մացի ընքի, առավոդ գէլիս էրտաս: Ըդ սենյագ օվ մեքը ը, առավոդ մեռուդ ին կիի, սախ մարտ չէլի ընդեխւն: Տու մ'ըսը, ըդդուր դագ մղարը ը, օսկի գը: Գես կիշեր, օրոդուն գիկը, իմրդուն, - գըսը, - մուավը՝ շենք շոճիլ ը. չըն վգիսենը, էրգուս լը խըյին գէդնին, դը՛, աստված օր բաշտարան ը, իսսնատ էնը, ը՛ն օ: Դենան՝ իյը՛նո, գըսին. - Դե՛ր

Աստված, ոդ ի՞նձ պան ը: Նորից իր՝ ոռ, գգբցու լուս, ապացվի մղարեն, գիճնի մեծ, հա՛, հա՛, հա՛, մղաըը յը. օսկու խզինը յը ըղբեխ: Գէլին առավող, ներդեր, ոփրացու գիկան մեռելնին թաղելու, նենան փող-մող չը խօժին, վերին ղանին թաղին: Գիկան դենան երգուս լը սա՛ղ-սըլըմատ: Ռդան գըսը. - Ինճի՞ համար եք եզի: Ըբը՝ հալ-հըվար, ծիճն ըդիճնք, ասսուց չընք գընը բըհը, ինճ մարտ միեր ը ըդ սենյագ, մեռուգ ը եղէ, կիշեր չլուսց վլրեն, հ՞նալ ը եղի՝ սա՛խ եք մաց:

- Մըկ վըլը, պան չըք դես, նը՝ լը վախսեցեր ինք:

Գտառնան թոլին երտան: Գէլին առավող, ողան գէրտը խըճ խանը դեր: Գըսը. - Ըդ խանեն քընի՞ օսկի արժը, գըսը. - Էսքամ հըղիր օսկի: Գըսը. - Ախապէ՛ր, հըրիր չէ, երգու հըղիր օսկի գիդամ, զըդ տըվածք գվերը: Ռոբեգան գիշվըքը վարրեդ ու քար, մեգ ամսվա մեծ, թակավորի պալատ գկառուցը: Գիկը յըվիեշ րարամ՝ ըդեխ, գեանը օսկի՞ գիդը ուրիճ: Շդեխեն գէրտը թակավորի քադաք, գէրտը թակավոր նեցիդիմ՝ գիդը, գձիձը թակավորի վըրեն:

- Չա՛, ի՞նձ ը, քիչ հմ դվէ գձիձդա՞ս:

- Չա՛, - գըսը, - ա՛յ մարտ, ինճ իս դվէ, ֆլան դեխ լացեր իմ, մէ օսկի ը դվէ, ուր պալատ լը՝ քու լիլաւոյի րես պալատ ը շինէ, մէ օսկի յը դվէ, տու թակաւ. լոր իս՝ մեշիդեմ՝ գիդաս, ըլ ի՞նձ թակավոր իս:

- Ինա՞լ: Գըսը. - Չա՛, ֆլան դեխ:

Թակավոր յըվիեշ թարան զարեց, թըլեց ըդեխ, շառասուն ծիավոր վերեց իրդին, էգավ: Էգավ, էգավ, դղան իմացավ թակավորն ը գեկը, րադըաստություն ընեց. Էգան ծիավորնիր լցվան, այլօրին դեխադեց, էգամ գերան - խմին, կիշեր մացին քնան, առավող էլան, ըմեգի իսուրջին՝ օսկի թասմ՝ տրեց, կնացին: Զամալսն թակավոր ըսեց. - Այ մարտ, յըս էգեր ենք ողբա ողբոր հարցենք, ոդ ի՞նձ պամի ունը ը, օդ քառասուն ծիավորին օսկը կդալ տրեց, ուրանց իսուրջին՝ օսկը թաս տրեց, գաննը հարցում: Գըսը. - Կացե՛ք տըք ողվուշ թարան թողեք, միմէն յըս իկամ: Ասկար գէրսյը, դըվուշ թարան թոդը, ինք գիկը, գըսը. - Մնամ օդը, հարցում դենամ՝ ուր դըրոդ ի՞նճը: Իրգուն գիկը գիարցը. - Այ դղա, քու դըրոդ ի՞նճը, ըդքան ձահիս գէնիս, ըդքան պան գիդաս, ըդքան գցվոիս: Գըսը. - Ըմ դըրոդ ը նօօը, յըս դըրոդ չունին:

- Չէ՛, չէ՛, - գըսը, - ոսը՝, տօն դըրոդ դեր իս: Գըսը.

- Չէ՛, դըրոդ չունըն, կնը ֆլան դեխ՝ քոռմ՝ ինճոդ վըք ջամպուն, ընդքա դըրոդ հարցը արի՝ ըսըմ:

Կնաց, կնաց դեսավ քոռմ՝ ինճեր վըք ջամպուն, գգարգը շխամ՝ գեխսմ՝ գըսը՝ եա՛խ, մեգ՝ նա՛խ: Գիարցը. - Ի՞նճը հըմար ըդենց գէնիս: Ըսեց. - Յըս մարտ սպանող էք. մի թարվան էգավ մի հադ սպանեցը, մէ մարտ մնաց, ըսեց. - Գա՞նին իմ խնգան վըրեն կրիմ՝ նոր սպանը: Կրեց իննգան վըրեն՝ ըմ աճկեր

քոոցավ: Է՛, ըմ դըրոդ բադմելը չէ, կնը խօճ փող գդըող:

Կնաց, գարմնջի վըրեն դեսավ՝ փող ը գդըո, թըլը ծուր, գըսը. - Խե՞ր էնը՝ ծուր թըլ:

- Ըբը, - ըսեց, - քու դըրոդ ի՞նճ ը, ըդքես գէնիս:

- Ըմ դըրոդ բադմելը չէ: Կնը խօճ մոլլան, խարս, կնը իմացի մոլլի գըրոդ գգո, գբադմիմ ըմ դըրոդ:

Կնաց, կնաց խարս, դեսավ՝ մոլլան վլագ-վլագ իմրանալով կնաց էլավ մնարի ծեր, տառծավ ըրբեխաց զարգեց, ջանգուեց երես, քիտ-պերան, էգավ իճավ ցած: Ինք լը մնաց ըդեխ, իրգուն կնաց խոնախ ըսեց՝ ղենամ ի՞նճ գոադնը: Ըսեց. - Քու դըրոդեր ըսիս ընծը: Ըսեց. - Կնը՝ մէ մարտ հնդը Սարիդամիշ, թամք ը գծահիք, կնը հարցը ըն մարտը դըրոդ, էգո՛ բադմիմ ըմ դըրոդ քածի:

Կնաց Ասարիդամիշ, դեսավ՝ ըդ մարտ էգավ, թամք ը գծահիք: Ինք լը ուր իեղ գէրտը: Կնաց էլավ բազրի կլուխ, դեսավ՝ դդամ՝ էգավ, ըսեց. - Այ հայրիկ, ի՞նճ իս էնի զմզի. նը՛ բըհեր իս, նը՛ խնցեր իս, նը՛ չարչովեր իս մըր իեղ, ընճի՞ մըր օդիել գյանկ փանկի փանկի հայրիկի: Գընցնի էրտը, գէրտը բազրի գիս, աճկին գիկը մյուս դդան, գըսը. - Այ հայրիկ, տու ընճի՞ զմզի մըր գյանկից հանեժիր, ոչ բըներ իս զմզի, նը՛ դեսեր ինք զըգի, տու ընճի՞ մըր գյանկ առար: Գէրտը բազրի ներթին կլուխ. գմիգ իննդը օդի, գըսը. - Այ մարտ, տու մէ կիշեր մացիր ըմ իսեճին, աստված էրգու դդո դվէց, տու ընճի՞ էգար դդոց հոկին լը առար, իմուն լը: Աճկի դեմ գիկան, գըսին. «Տու զմզի նը՛ գերցեր իս, նը՛ իսմցէ, նը՛ հագցէ, տու ընճի՞ էգար մըր գյանկ խլեցիր»: Գտառնը քոռ-փոշման քանդը զըդ թամք, էնը գդոր-գդոր, դըստը, գարը տրը կաշկի մեծ, պե՛յօ իկը: Ըդ դարօ կլուխ ըր էգավ, էլի՛ գգարը զըդ թամք, դանը ձախս: Ըդըլը, հընչի մեռնի՝ ըդըլը ո գէնը: Էգավ թակավոր կնաց հեղեն, ըսեց էրտամ դենամ ըդ մացը ի՞նճ ը էնէ, օր րդըս ո գէնը: Կնաց կիշեր խոնախ էգավ ուրին, ըսեց. - Այ հոկի՛, տու ընճի՞ ըդքես էնեցիր:

- Այ ահապեր, - ըսեց, - վա՞զ տառցը ըմ դըրուեն: Ըսեց. - Տո՛, յըս քու դըրդերի հըմար իմ էգէ, էգեր իմ քու դըրդեր իմանամ, բիի ըսիս քու դըրդեր, էրտամ: Ըսեց. - Յըս գարկվը, մէ կիշեր մածը ըմ նշանաձի մող, դարան զիս պանագ, քսան դաբը մածը, յըս ըր էգը՝ ակուշկի վըրեն նայեցը, դէսը երկու էրիդասարդ փատտվեր իմ ըմ նշանաձին, մեգ թէ թըլի ըդտիե՛ն, մընգըլ՝ ընտիե՛ն: Յըս ըսի. - Ուրեմն, յըս կացեր իմ, ինը սիրեգան ո պընի ուրին, ըդէ ուր սիրեգաննին իմ: Էլը զարգեցը սպանեցը իրեք լը իրարու իեղ: Զարևանիր թափան էգան, ըսին. - Քու դըւն քանդվու, ըդի քու դդեքն են, ըդէ լը քու գմիգն էր, տու ընճի՞ սպանեցիր: Էլ գտայիմ վըք ըմ կլիսուն, ի՞նճ էնին, ոմ ըշիյըդանք ըդը. դարի պյուլուը գգարիմ, գէրտամ-գիկան ըմ աճկի դեմ. դդան գիկը բազրի, մյուս

դուան գիկը բազրի գես, գնիգ լը վերծին, գիկան, պոլուր լը ըղբես ընծի գիւղյըռագին, ը՛լ գիկամ դըրդից քանդիմ զբամք, իկաս նստիմ գասրիմ, մինչև դարիմ ըդ ժամանագ:

- Ը՞Դ ը քու դըրոյ:

- Յա՛, - ըսեց, - Ը՞Դ ը ըմ դըրոյ:

Ընցավ, էգավ խօճ մոլլան, ըսեց. - Տու ընծի՝ գիւնդանաս, էրտաս էլիս ընտեխ, գիկաս գտալիս, գիլաս, գջերսսիս քու ջան ու ջանդակ, իկաս իճնիս ցած: Ըսեց. - Վա՛զ տառից ըմ դըրդեն:

- Ի՞նձ ը քու դըրոյ: Ըսեց. - Յոս իրնեք մնարի կլուի, էգան էրու աղունիգ զիս դարան տրեցին դրախու, էրգու դարը դրախտ մացը, ըմլը սիխուր, մըլու եք: Աղունիգ ըսեց. - Դանիք զքզի, մննագ չմեղավորնաս, ըր մեղավորնաս, ըւ չըք պէրը զքզի: Պերեցին, տրին զիսի մնարի կլուի, կացին: Կացի դուն, դեսը զըմ ընդանիք, ըմ ընդանիքի ծեռքից չբրձը, ըմ ընդանիք գրեթ վըրես՝ մեղավորըց: Աղունիգնին էգան տրին ըդ դեխ: Ծր գդենամ գրսիմ. Ե՞ղը, ըդոք ին, էգեր ին զիս գդանին, գիւնդանամ էրտաս էլիս մնարի կլուիս, ֆըռո, գրոնին էրտան: Ըսեց. - Ը՞Դ ը քու դըրոյ, ըսեց. - Յա՛: Էգավ փոդ գդրողի մոդ, ըսեց. - Ի՞նձ ը էդէ, օր գդդիս, ճուր թասիս: Ըսեց. - Առած լըս փոդ ը գդրեք, իդեք ժողովուտին, ծըի, առանց պանի, վըր հանդեեր՝ գ'գդրեք-իդեք: Աի դարը փոդ չգդրեցի, ուրդեղ զարգվը մի կոպեզ ընծի չովեցին, մածի նեղ տրության մեծ. տառծը ստիթյալ էգը: Էգեր իմ՝ գ'գդրիմ, թասիմ ճուր, գրսիմ՝ իներ էնը, ճուր թապը, իներ էնը, ճուր թապը:

- Ը՞Դ ը քու դըրոյ, գըսը. - Յա՛:

Էգավ, էգավ խօճ քոռ, հնդը նստուզ վըր ջամպուն: Ըսեց. - Ի՞նձ էդէ, ընծի՝ իս քոոցէ, տեմ գգըրգիս, մեգ գրսիս՝ իդի, մեգ՝ նիդի: Ըսեց. - Յըն քարվան գլըրո եք, սադքարվան գրոդրեցը, մէ մարտ րրավ ուրանց ընդեն, էգավ ըմ մոդ, ըսեց. - Սպասը, մէ էրգու իսիդ էնիմ ու ըմ վոզ գրըրը: Յընը ըդ վիսիստ, էրգու իջիզ վըր խնգան էնեց, ըրուեգան ըմ աճկեր քոոցավ, ըդ մաշտ ըգրդվակ կնաց: Կիմը տեմ գգարգիմ, մեգ գըսիմ՝ իդի, մեգ՝ նիդի, ըմծի՝ ըդը թոդեք էրտեր, չըննեք քոդի, ընեք սպանի: Աիզր լը քոոցը ընգր հօս:

- Ը՞Դ ը քու դըրոյ, ըսեց. - Յա՛: Թակավոր ընեխեն էգավ պոլոր դըրուեր րադմեց դդին, դդան լը բադմեց ըր կլուի կալած, նոր դվեցին ջանճվորտեն, նոր էգավ ախճիգ փատվավ ընքի, ըսեց. - Ծոյի քու փեսան ը, ըն, օր ասսու օրինություն ը ուզէ, ըդ պալատ լը ինք ը շինէ: Թակավոր ըսեց. - Յըլալ էնի քզի, ըր տու ասսու օրինություն իս ուզէ, քու կործ միշտ առած ը: Գայերը փեսան էնը ուր դին թակավոր:

Աէ մարտ կեղնի, կ'սէ. - Յըս բոյ էրտամ աշխրկիչ դուրս, իջրի ուր օր մեռնելու ծեն կա, յըս կերթամ: Ա մարտ, - կ'սին, - աշխրկիջ մեռնել չկորի: - Չէ, - կ'սէ, - յըս բոյ էրտամ աշխրկէ-աշխարկ, ուր օր մեռնելու անուն կա, բոյ էրտամ: Կերթա դարպնի մոդ, կիդա ուրիջ էրգուտ սոլ շինել, էրգու ճոգան գաոնէ ծեռ ու գիկա: Գիկա մէ քաղաք, անուն Դիարընկըր է: - Իմ անուն Տիգրան է, - կ'սէ, - եղ քաղը անուն կփոխիմ Տիգրան: Կերդ ու յըս աշխրկիջ կերթամ, թը ուր օր մեռնելու ծեռ կա՝ կերթամ: - Ա՛յ տղա, - կ'սին, - աշխարի՝ առանց մեռնել մարտ չմնա, իջրի յըպ լը էնի բոյ մեռնի:

- Չէ, - կ'սէ, - հարի մեռնելու ծեն կա՝ կերթամ:

Եղ մարտն էր, գրնգնի ճամպա թը շադ, թը քիչ, թը քընի տարով, կերթա, կերթա, մի օր լը կերթա նէ անվերի սարու գլոխ գնստի, գտեսնա մէ հառւզ կա օդի: Իճավ կնաց էդ ճոի մոդ, ըսեց. - Դըլբը մէ մարտն մուրտ գիկա ճոի, հարցում տեսնամ մեռնել ո՞ւր կա, ո՞ւր չկա: Գիկա օդի, գիանէ ուր շորեր, ծեն գլսէ. գնինի պլերու մեծ, գծածկվո: Գտեսնա՝ էրգու հուրմի: Իրեղեն էգան, հանեցին ուրանց շորեր, տրեցին ճու պոուզ, օր լողնան, մեր ու ախճիգ ին: Ախճիգ մոդ ըսեց. - Ա՛յ մեր, իսնի հոդ գիկա, մարտու ենոդ գիկա ըտերան: - Ա՛յ ախճի՛, - ըսեց. - Ի՞նչ մարտ, ի՞նչ պան, հորկան օժն ուր պորդով, հավքն ուր թևով, իդա տոն չգտնվո, մարտ ո՞ւստ:

- Չէ, - ըսեց, - մարտու հոդ գիկա: Ախճիգ ըսեց մոր թը չէ, մեր չխավդըցավ, հանեցին ուրանց շորեր, տրին, մղան ճուր, լողգցան թը շադ, թը քիչ, իջրի իրգվա տին, ըդի գոդդուզ կմաց, շորեր գրդցավ թը րեց - էգավ, էրգու շորեր գրգեց, պերեց մդավ ըդ պլերու մեծ: Լողգվան, գրգվան իջրի իրգուն, իրգու էգան իշին՝ շորեր չկա, ուրկո գրգվան շորեր չկա: Ախճիգ ըսեց. - Ա՛յ մեր, յըս օր ըսի՝ հոդածնի հոդ գիկա, չխավդար, մըր շորեր հոդածին է տարէ:

Գաշեցին ը՛ն տին, ը՛ն տին, էգան՝ եանդեր Ը. տուզ, շորեր առած դոուզ:

- Յա՛, - ըսեցին, Ղլ՛, մըր շորեր դո՞ւ իս գդդոյ:

- Ըմ անուն Ղլ՛ չէ, ըմ անուն Տիգրան է: - Չէ, - ըսեց, - մեք քու անուն տրեցինք Ղլ՛, մըր շորեր տուզ:

Ըսավ, - Տարեք ընծի իջրի ուր՝ օր մայ չկա, իդամ ձըր շորեր: Ըսին. - Քե՛լէ: Կիդա շորեր գեակնին, կ'սին. - Դը քե՛լէ: Գտամին էրտան: Ըսին. - Բու անուն Ղլ՛ ուր տրինք, էլ չընք ըսի Տիգրան:

- Չէ, - ըսեց, - ըմ քաղը անուն տրեր իմ Տիգրանակերդ, մզա ընծի Տիգրան րոյ ըսեք:

- Ղե քե՛լէ, - ըսեցին: Տարան ըդուան Անվերի սարի գլոխ. շենքեր շրնուզ, սարկուզ: Բացեցին մէ դուր, ըսին. - Չէ, մդի՛ էդ սենյագ: Բացեցին. ինչ աշխարի ըսիս, կար մեծ լցուզ: Ըսին. - Ղէ՛ կնա Ղլ՛, ինչքան

գուգիս, կնը աբրի, մինագ՝ ինը տուր չքանա՞ս, ողի ինչքան գուցիս աբրի, վայել, կիր - խմէ: Ըբը ըսեց. - Չեր անուս ի՞նչ է: Մեր ըսեց. - Գուլփիերի, աղջիդ ըսեց Ծոզքը Զանգի: Յա՛ ըսին, - Դու, հըմը ներ ընգար, մգի կանչիս: Դլոն է. թը քընի տարի գընցնա, կուլէ - գլսմէ, քընի կերթա գցելնա, քընի կերթա՝ կայեղնա, շադ կմնա թը թիչ, օրմ' էլ կ'սէ. - Յըմլա արթելն էլ բանի պեսկ չէ, աշխրկից, մաստուց զրգված, սարի կլուի. ուղել-խմել մինագ ի՞նչ է հարգավոր: Գէլնա կ'սէ. «Կայշի տեսնամ ընչո՞ւ ըսին՝ էր դուռ չքանաս»: Գէլնա էր դուռ գրանա, հըմը ող գրալէ՝ գծերանա՝, մուրուք գիծնա օղի, էլ չկոնա ող քաշէ, ընքան, օր արթեր է: Ող գրաշէ դիդա, կուգէ անցնի էնտիմ՝ չկ'ոնա: Քելքը, - կ'սէ. - Գուլփիերի, Ըբը Զանգի, իմալ, օր բերեր իք, արեք հմալ լէ տարեք: Մեր ու ախճիգ կանանան. - Յը՛, - ըսին, - Դլո՛, աջգեր իս քու կյանքից: - Յա՛, - ըսեց, - հըմլս արթել լէ պեսք չէ, աշխարի՝ բոյ մարտ մենին, հըմլա արթել հարգավոր չէ:

- Դէ, էկի՛, էկի՛, քգի տանինք քու Աշխարիք:

Մեր ու ախճիգ Դլոյ վերցեցին, սերին էգան: Ավերագ քադաք. ոչ մարտ, ոչ մըդրո, ոչ խեր, ոչ շառ: Նոր Դլոն օղի մեռավ, էղավ հողին արժան, ուր քադաք մնաց Տիգրանակերդ, Դլոն կնաց աշխարիից:

## 7 (9). ՇՆՎԵՐՄՆ ՄԱՐ

ԺԱՄԱՆԱԳԹՎ ԳԼԵՄԻ մէ թակավոր: Ըդ թակավոր ուներ մի դդա: Դդան արտեն հասունացած դդա եր, ամուսնացրեց: Օրմ'էլ մորն ըսեց. - Այ մեր, ըմ հոր ըսա, թույլ իրա էրտանը նըր իսաս բահիչն քիչմնան իկանը:

Գէրտան մղնին իսաս րահիչն, գէրտան մէ ախապ-րիմ'վոր, ճուր գիմին, դդեն գիանը շորեր, գմգնի լողգնա, զր ընդամիք գմստի շորերի մոր: Գիեսնա՝ իրեք աղունիգ իճան ախարի վոեն, հանեծին իրանց թերուուկին, տառձան իրեք հրեղենն ախճիգ, ըդզը սերով են, ուղեմն դդեն հանդէ ճրի մեծ լողգնալ է, որոք լէ դգլոցան, մդան լողգան: Դե՛սերով են, էլան դդին շարիկմ' հագցեցին, իրանց շորեր լէ հական, սենյագմ'կեր օղ, կնացին էր սենյագ կերան - խմեցին, էգան: Մենձ ախճիգ հանց դդին մէ ծառի վոա, գիրկ կարտաց, դդին տրեց ծառի գուլի քնցուց, գիրկ դրեց գլխու տագ, էկի հական իրանց թերուուկին ու թռան գնացին: Ինչքան ժամանագ էր կնացեր էն, թակավորի հարս իհշեց, ըսեց. «Յըս քոռնամ, միգը իմ մարտ ճրի մեծ ինեխուավ»: Էգավ ճրի պերան՝ մարտ չկա. Էն գողմ, Էն գողմ՝ մարտ չկա: Զար գդրավ, նստավ ձառու դագ ու սկսեց լալ, օխապալ: Օր ուշացավ, ֆայտոնչին ըսեց. «Դեսնամ ի՞նճ էղավ ըդրանց»: Կնաց, օր ախճիգ մինագ է:

- Յա՛րս, - ըսեց, - քու մարտ ո՞ւր է:

Ըսեց. - Ըմ մարտ մդավ ճուր, լողգավ, ես նստը ձառու տագ շորերու մող, իմը էգնի իմ՝ չկը, անհայտ կորավ, ուրեմն ինեխուուկեր է: Ֆայտոնչին մդավ ճուր, էն գողմ նայեց, Էն գողմ նայեց, չկա՛ ու չկա՛: Էլան, խաս բահիչն ման էգան, նա րտ չկա: Զար կդրավ, հարսին դրեց ֆայտոն, դարավ - կնաց: Դարավ - կնաց, ըսեց. - Թակավոր արրած կենա, օյինմ' խադցեր իմ քու ողի կլուի էր ահսպի վոեն:

Ախճիգն էլ ըսեց. - Առա շորեր, նստա ծառի դագ, օր իմք լողգներ, քնով ընցա, էլս՝ չկար:

Ըլ ի՞նչ եներ թակավոր. սուգ, շիվան, դե՞ս, դե՞ն, զւ ի՞նճ: Ախճիգ ըսեց. - Թակավոր արրած կենա, տու թակավոր իս, յըս էլ թակավորի ախճիգ իմ, իմ հերն էլ թակավոր. խնտրիմ եսքան գումար տու դուք, եսքան իմ հորից գինտրիմ, գէրտամ յոտ ջամպու կցոնը, էնտեր սենյագմ' գշինիմ, ջաշարան գպանամ, էրտող-գալածողին ծրի կերցում - խմցում, բըլքի պադ-մին, տեղմ' դուրս իկա իմ մարտու անունը:

Գհամածայնի թակավոր, ուրեմն, գումարներ կի-դան իրան, գէրտամ յոտ ջամպու կցոնը գգըրգէ, սեն-յագ գշինէ, ջաշարան, գոմեր, պաներ, մէ խսուքով հու-րանց: Էրտող - գալածող էտեիս գկերցու - իմցու, ենքան օր իրգուն տեղավորվոն, գէրտամ իրանց մեջ, կ'սէ. - ժողդվիւրտ, պադմուտյունն' էրեք, լսի՞մ, - բըլ-քիմ էր տեսագով իրա մարտու սալըիս գդնա: Օրմ' էլ մէ աշուդ գլսէ, օր էտեիս ծրի հացկերուտուն է, էդ յոտ ջամպու կցոնը: Կ'սէ. - Էդ իսկագան իմ դեղն է, վերում իմ դդին, էրտամ էնդեխ, հա՞մ ընծի հանար գարրիմ, հա՞մ ըմ դդին գրայիմ էնդեխ: Իկալու վախս, գիկան ըդ նոյսն ջամպով, թակավորի խաս րահսի մինով, Դդեն գդեսնա՝ հօդ ախապուր գա, ծառի վլեն մարտ գա քնուգ, էնտեիս էլ՝ մտ սենյագ գա: Վըլը, աշոհ դդեն գմիդ էր սենյագ, ինչքան օր իրան պեսկ է՛ հաց-պան գիրվըրէ, գէրտա կ'սէ. - Յայրիգ'գ, էտեիս սենյագ գա, հընդէ ամեն ինչ վոեն գա: Կ'սէ. - Լա՛ էր սենյան անդեր չէ, իհմա ուր էտեի ողիվանք գիկան: Իրանք գնատին տալդա տիդմ' իրանց հացն է գուղին, ժամի դասէր-գուսին՝ իրեք աղունիգ ֆրալե՞ն գիկան, ախարի վոեն գիճնան: Գիճնան, գիանին իրանց շորեր, թերուուգնին գտրին ծաղիկների վլեն, մենձ ախճիգ գէլնա ծառ, երիդասարգի գլխու տգից գիանէ մի հադ գիրկ, գկարտա, երիդասարդ ուշի գպերէ, գպերէ իկա ցած: Իրանց համար գլողգնան, գիակնին իրանց շորեր, գմգնան սենյագ, ճաշին, տղին էկի գիանին ծառի գլուխ, գքնցուն, գիրկ գդմին գլխու տագ, էկի գիակ-նին իրանց թերուուկին ու գթոնին էրտան: Ըդի իրա աճկով գդեսնա դդան: Գէլնան ընգնան ջամպով գէր-տան, գէրտան, թը ինչքան ժամանագ է, արտեն իր-գուն է, գիասնին ըդ քարվանսարեն, յոտ ջամպու կցոնը, հօդ իսոնախ գէղնին: Իրգուն է, թակավորի

ախճիգ գիյուրասիրէ ընդրանց, կիդա հաց, պան, գուտին, կ'սէ. - Հայրիգ՝ տու աշուտ մարտ իս, աշխարհ ման իս եգի, պադմուտյունն՝ էրա, գոնէ գիշերմ՝ անցկացնինք:

- Է՛ բալամ, - կ'սէ, - յըս աշուտ մարտ իմ, պայց քոռ իմ, պան չըմ դես իմ աճկով, էնքան օր իմ սագն է գչալիմ, փող հավակիմ, իմ երեխան բայիմ:

Ախճիգ դուռ գդնէ, օր երտա, դդէն կ'սէ. - Հայրիգ՝ էրեզվա դեսած չբադմի՞մ:

- Է՛, - կ'սէ, - գործ չունիս, բալիգ ջան: Ախճիգ նորից հեղ գիկա, կ'սէ. - Հայրիգ ջան, էրեգ ի՞նձ է դէս քու դդան, թող բադմէ, մենք էլ իմանանք, դեսնանք ի՞նձ է:

Դդեն գրադմէ, կ'սէ. - Խանում, էրեգ եգանք բակավորի խաս բախչեն, ախարի վըր ծուր իմեցինք, էնդեխ մի հաղ սենյագ կար, մդա սենյագ, տեսանք սեղանի վլեն լիք ուղելիք, պսյց մարտ - մադար չկա, - կ'սէ, - հավաքեցի եղ ուղելիք, տարա ներքեն, նստանք յըս իմ հեր գուցենք, դեսնամ՝ իրեք հաղ աղունիգ էգան: Իճան ախարի վլեն, հանեժին իրանց թիրուուկնին, մենձ ախճիգ էլավ ծառ, երիդասարդմ՝ էնդեխ՝ ծառի վլեն քնուգ էր. գիրկ հանեց գլխու տգից, կարտաց, դդին ուշկի պերեց, եգան ցած, լոդցան, հական իրանց շորեր, մդան ճաշեցին ևս սենյագ, մենձ ախճիգ դդին հանեց ծառի գլուխ, էնդիս քնուց, գիրկ դրեց էլի գլխու տագ ու իրանք հական իրանց թիրուուկնին ու թուա՞ն գնացին:

Եղ օր կ'սէ, բակավասորի հարս գիյառվէ իրար. - Տղա՞ ջան, - կ'սէ, - առսվող իմ հեղ գիկաս, խնտրիմ, եղ օր դիսեր իս, ընծի ցո՞ւց դրւր, եթե ճիշտ էղան եղնի՝ ևս իմ դներ, ևս հուրանոց ծեգի հալալ էղնի, պորդից-պորդ ուգեք՝ չքմի, ես էնդիս գմնամ:

Գընին հարի առավլող, առավլող գվերու աշոյի տղեն ու գէրտան: Գէրտա եղ խաս բախչեն, ման գիկան իրանց. դէ՛ հըլը շուտ է, օր գիկա ժւանանագ, դասէրգուսին մող է դդեն գուման ախճան տալիդ դէխս, ուր ինք ու իրան հերն ին նստի, էնդեխ գայադրվին: Ախճիգ գդեսնա, օր իրեկ հաղ աղունիգ գիկան, ախարի վլեն գինան, գիանին թիրուուկնին, դնին ծաղիգներու վլեն: Մենձ ախճիգ գէնա ծառ, գիրկ գեանէ դդի գլխու տգեն, կարտա, գաբերէ դդին ցած, զլոդգնան, գիակնին իրանց շորեր, գմնին ջաշարան, էլի մենձ ախճիգ գիանէ՛ դդին ծառ, գընցու, էնդեխ բախտ է կարուգ, գիրկ կին գլխու տագ ու գեակնին իրանց թիրուուկնին ու գթունին երտան: Ախճիգ եղի իրան աճկով գդեսնա:

- Դէ՛, տղա՞ ջան, - կ'սէ աշդի տղին, - եածողություն էղնի քեգի, գնա հասի քու հոր, ըն ունեցվածք լէ ծեգի հալալ էղնի, - ու գմնա ախճիգ էտեխս: Գմնա էտեխս, գէլնի ծառը, գէ՛, չէ՞ աղունիգնին գացեր ին, ըլ արիսեխն է, գէլի ծառ, գիրկ գեանէ տդի գլխու տգից, գեարտա:

Դդեն ուշկի գիկա, տեսնա, օր իրան նշանածն է:

- Այ կին, - կ'սէ, - ընչո՞ւ իս եգէ, յըս ընգեր իմ էստեղ սէրըընդմերու ծեղու, տու գոնէ չ'ներ եգէ:

- Զէ՛, - կ'սէ, - մեռնինք իրար հեղ, արրինք իրար հեղ: Ու էտեխ գմնան: Ամեն օր, ուրեմն, ճաշից հերո, գէրտա դդին ուշկի գաբերէ, իրանց համար էտեխ գմնան, խաս բախչեն մինչև ի միսօր, էլի ճաշին գտանէ տղին քնուց, ինք գմնա պադրվի: Եղանով գանցնի քանցնի քանիմ՝ տարիի, գէրեխովնա, գէնինի մէ դդա, էրգու - իրեք դարի գընցու, դդեն արտեն խոշերէ է, էղ է քելալու է, գիսոսա արտեն հոր ու մոր հեղ, գուրախանան, գարադվին հեղ: Օրմ՝ էլ գընգնան դդի հեղ, գմոննան ժամը, գդեսնա՝ ըհա՞ն բդի աղունիգնին իկան, հըմը շուդմ՝ գիանէ մարտուն դնէ ծառի վլեն, քնուց ու գիրկ էտպես բաց գդնէ էնտեխս ու գիկա: Գիկա վերու էրեխուն, իկը պադրվու: Գիկան, ուրեմն, աղունիգնին ախարի մող, մենձ ախճիգ գիանէ թիրուրկ դնէ էնտեխս, գէլնա ծառ, գդեսնա՝ գիրկ հանէտ բաց դդի գողկին դրուգ, դդեն քնուգ է, ըլ չխոսսա, գիրկ գկարտա, դդին գինու ցած, զլոդգնան, գմնին սենյագ ջաշին:

- Այ դդա, - կ'սէ, - քու մոդ իսան է եգէ, արի դուզ ըսա:

- Զէ՛, - կ'սէ, - վըլը իմ մոդ իսան չէգէ, դու օր ընծի քնցեր իս գացի, հարի ըսօր յըս մարտ չըմ դես: Դէ՛, դդեն խու չը՞սէ: Մենձ ախճիգ հըմը գքաշէ դարագից շիրուխ, գգարգէ սեղանին, կ'սէ. - Սեղա՞ն; էսպեսով, էս սեղան, էս ծառը, ամփողջ էրմա՞ք Անվերան սարի գլուխ: Ախճիգ էն գդեսնա, օր ոչ ծառ կա, ոչ սեղան, ոչ ախարուր, ոչ սենյագ, մարտոն էլ հըդ իրանց դարեր ին: Ի՞նչ էնտ, գիլա, գօխապա, կ'սէ. - Էլամ էրտամ բակավորի մող, գւմճնա, դէ՛, էրեխեն հեղն է, գարոդ է ըստ. «Դդեն գործերէ է, ուրիշ մարտ է սիրէ՛ էրեխան էղեր ը»: Գպոնտ դդի ծեռ ու գընգնա ջամպա, գէրտան, գիանդրին մէ ախարի, գգեսնա՝ էղ ախսլրի ագից՝ ճրի հեղ անկին քարեր է գիկան, գիկան ու լցվին էնդեխս: Դդեն գդեսնա էղ սիրուն քարեր, կ'սէ. - Սամա՞, քանիմ՝ հաղ լից քու զեր, յըս գիսադամ հըդին:

Ախճիգ էրեխսի խատրից չէլնա, քանիմ՝ հաղ գքց զեր, գպոնտ դդի թու ու գէրտան: Գէրտան, դէ՛, անոտի - ծառավ, խամ-խչին ընգեր ին ջամպա գէրտան, կիշեր հարի լուս էրտալին, լուս օր գլացվէ՛ գդեսնան մէ դդլրան դաշա, սուրիմ՝ օչխար փովէ գարձա: Չորան գդեսնա մէ ընդանիք էն գորդից գիկա, երեխանմ՝ էլ հեղը, հազիկ գ'ոնան ջամպու հեղ քելան, խուդրլմէ ընգերին, անոտի, ծառավ: Չըմը գ'գրէ թասմ՝ գատ, գվերու չանտան, գէրտը առնե իրանց: Գէրտա կ'սէ. - Քուր ջան նստի, նստի, յըս կիդնմ օր սոված իս, նստի քու դդայի հեղ հաց գի՛ր, հեղդ գխոսակ:

Վըլը գպրտին հաց գուդին, չորան կ'սէ. - Քուր ջան, ո՞ւսկ գիկաս, ո՞ւր է գէրտաս:

- Ե՛, - կ'սէ, - ախապեր ջան, մ'հարցու, անդեր ընդանիկ իմ, յըս էլ չկիդեմ ուր է գերտամ:

- Դէ՛ օր անդեր ընդանիկ իս, ընծի էլ քուր չկա, մէ պառավ մեր ունիմ, արի՛ քեզի կենիմ ընծի հըլաւ քուր, դանիմ րերի տեղ, իմ մեր գիկա օչխար կրէ, դնիմ հեռ՝ էրասս մեր տուն: Կ'սէ. - Շա՞դ լավ: Էդ ժամանագ, ուրենս, մէ բազոգան գիկա ընցնի, ամեն տարի էտենով գընցնա, չորան գճանչնա, կ'սէ. - Բազոգան ջան, ի՞նձ գեղնի, ըս քուրօթ դրիս մէ ջորու վոա, դանիս հանծնիս իմ նոր ու անծնիս էրտաս: Կ'սէ. - Լա՞վ: Գդնէ ջորու վոեն, գերտամ: Օզ գիեռենան, բազոգան բաշին կ'սէ. - Այ՛ քուր, յըս ինչքան կիդեմ, ըդ չորանին քուր չկա, մէ սյառավ մեզ ունի, տու որդեխի՞ց գիկաս, ո՞ւր է գերտաս, էրեր իս իրան քուր: Կ'սէ. - Ախապեր ջան, անդեր ընդանիկ իմ, գերտամ իմ ջամպու հեռ: Կ'սէ. - Օր էդպես է, յըս վասջառագան մարտ իմ, քեզի գդանիմ իմ դունը, ավելի լավ գբայիմ, գիդամ սենյագմ՝ ծեզի. դու դդեն արթեք իմ դան մեծը, էդի ընծի քուր: Գհամածայնվի ահճիգ: Գերտամ, օր գկսորին է՝ գհասնին իրանց քաղաք: Շոկ, ամառ ժամանագ է: Կնիգ ու մերն էլ գմային լուսամուղեց, գգեսնան, բազոգան էգավ, մէ անձանոտ ընդանիկ հանդէ ջորու վրեն, էրեխամ'էլ՝ գիրգ: Կնիգ էտեխ ուռա՞վ, ըսեց. «Ուրենմ իմ մարտ անրայման իրան ընդանիք է այերե»: Չելավ դուր բացուց: Գրոռա թը չէ՛ չը՞ն իկա: Բազոգան գկաղի, գքրվէ, կ'սէ. - Իմ քուր, իմ յեզան էգեր ին, գուգիկ արևու դագ վասոի՞ք, շուր բացե՞ք: Օզ կ'սէ՛ իմ քուր, իմ յեզան, նոր իրանց սիրդ գհանգստի, գիկան րանան դուր: Գերտամ ներս, բազոգան սենյագմ՝ առանձին կիրա, կ'սէ. - Քո՞ւր ջան, էս սենյագի, քու տոհի հեռ առանձին կարրիս, կնգան ու մոր լէ կ'սէ. - Չեղնի՞ն, չխմանամ, յըս վասջառագան մարտ իմ, առևրոագան մարտ իմ, գերտամ, իկամ հըմը իմ քուրոթ էրես տիխուր դեսա՝ ըլ իմ ծեռքից չըթ պիճնա: Մեր կ'սէ. - Այ՛ րալա՞ն, ընչի՞ րդէ տիխուր էդին, աստծուն փառք, դունը լիքն է, մենք էլ կուտինք, թող էն էլ իրան հանար արրի: Ու գմնան էտեխ: Գմնան, գանցնի ժամանագմ՝, դդեն արտեն մենձեր է, դասդասէրգու դարեգան է, օրմ' էլ էդ քաղիք բակավորը գհակնի դըվոեշի շոր, իրան վըզիրի հեռ կ'սէ. «Էրտանք մըր քաղիք մեծ ման իկանք, դեսնանք՝ մըր քաղիքի դրուտուն ոնց ը»: Գերտամ վասջառագանի տոնով գընցնան, գդեսնան՝ էդ դդան եցասի մեծ անկին քարեք քեր է, գիյալս հեռ: Թակավոր գմդաձէ, կ'սէ. - Այ՛ մարդ, յըս թակավոր իմ, ըմ իրզինեն անկին քար չկա, էս վասջառագանի դդեն՝ անկին քարով իրալալ է: Վըզիր զայէ վերև, գգեսնա դդի մորք, գիսէ՛ բակավորին, կ'սէ. - Քու դուն ավոի, վերև նայէ, դդին ի՞նձ գմայիս: Թակավոր օր վերև գմայէ թը չէ՛ ուշք էտեխ զանցնի: Թակավորին օդի ուշկի գպերին, գէլնան

թակավոր ու վոզիր եղ տառնան րալադ: Կ'սէ. - Վըզիր, մէ ինար գդի՛ էդ դդի գլուխ կորցու, օր յըս կընամ եղ ընդանիկ, էդ թակավորին րերիս ընծի, չկորցուս՝ յըս քու գլուխ գկորցում:

- Թակավոր արրած կենա, - կ'սէ, - ի՞նալ էնիմ, օր կորցում:

- Չգիդեմ, - կ'սէ, - ճաջ գդի՛, կորցու:

Գէլնա վոզիր գէրտա իրան հոր մոդ, էդ էլ թակավորի հոր օքով վոզիր է էդէ: Կ'սէ. - Լա՞ն, էդի հանգիստ գործ է, դդեն ի՞նձ գինա ըդ ինձ է, վաջառագանի իրզնի անկին քարեք առեց է ծեռ՝ գիսադա: Գնա ըսա՛, թող էդ տղնօ՞ քառսուն անկին քար դնէ սինու վոզ, րերէ իկա, դէ՛, դդեն ո՞րդեխից գդնա, ժամանագ գընցնա, թակավորն էլ գլուխ գգըրգէ, գպըծնա, կազադվո:

Գիկա թակավորին գպադմէ, թակավոր կ'սէ. - Գնա կանձէ դդին: Դդի անուն՝ Արմինագ է, գ'էրտա դդին կ'սէ. - թակավոր քգի գ'կանձէ: Գէլնա Արմինագ վըզըրի հեռ գիկա րալադ: Թակավոր կ'սէ. - Արմինագ, քեզի դաս օր ժամանագ, գերտաս քառսուն հադ անկին քար պերիս էն քարերից, օր հեռ գիսադեր: Դդեն գմոլորվի, կ'սէ. - Թակավոր արրած կենա, էդքան որդեխի՞ց գդնամ:

- Չգիդեմ, - կ'սէ, - դաս օր քեզի ժամանագ, պերիս՝ պերիր, չպերիր՝ քու գլուխ գգըրգիմ:

- Դէ՛, - կ'սէ, - դաս օրվա փոդ վըզըրի հաշվեն րըդ էդնի: Գառնէ, մոլորուգ իկա մոր մոդ.

- Այ՛ մեր, թակավոր զանձեր է, կ'սէ. - Բդէ էրտաս քառսուն անկին քար պերիս, որդեխի՞ց գդնամ:

Մեր վրաց գհասկնա թակավորի միտկ, կ'սէ. - Արմինագ ջան, տու փոքր էր, օր րերինք էդ քանի քար, գերտաս էս ինչ ջամպով, գհասնիս էս ի՞նչ մեշան, էսինչ տեղ ախապուր կա, ջրի հեռ անկին քար է գիկա լցվու էտեխ, գերտաս պերիս, մ'կիսիսնա:

Դդեն գէլնի ընգնի ջամպա, մոր ըսաձի պես մեշեն գգենա, գէլնա ախապի վոեն, գդեսնա հանդին քարեք լուրդուգ օդի, հըմը գլա խուրցին ու գիկա, դաս ավուր վոա գհասնի, գտրէ սինու վոզ, գպերէ իդա թակավորին: Թակավոր վըզըրին կ'սէ.

- Չեդա՞վ, ըրոյով պան տուրս չիկա, հնար գգի, անրայման րդէ դդի գլուխ կորցուս, չկորցուս՝ քու գլուխ գգըրգիմ:

Վըզիր էլի գէլնա էրտա հոր մոդ, կ'սէ. - Գերտաս դդան ջամպիս յոտ դեկի աշխարհ, թըխ էրտա ըդուց խաս րախչից անմըեազան ինձոր ու ջուր րերէ: Ընտեխ, գըրգի դդու էրգու առյուծ կա, գիօսնին տղին կուտեն, գվերճացուն:

Գիկա վոզիր կ'սէ թակավորին, գկանձին դդին, կ'սին. - Բառասուն օր քեզի ժամանագ, էրտաս դկանի ախչրից անմըեազան ջուր ու ինձոր րերիս, չըերիր՝ քու գլուխ գգըրգիք: Դդեն քառսուն ավուր ժախս

գուգէ վըզրից, դառնը մըլուլ, գիկա տուն: Տու մ'սէ վաշառագանի մեր իմաստուն է, կ'սէ. - Բալիգ ջան, մ'վախենա, գէրտաս դներու աշխարհ, գկայնիս դըրգի դուռ, երգու այյուծ կա հօն, սոված ին, մեզ դըրգի էս յան է, մեզ մյուս: Յոտ դևն էլ փախցրեր ին թակավորի ախճիգ րերի, կրիվ է կենին, ենի կ'սէ ինն է, ենի կ'սէ ինն է, չըն համաձայնի իրար, այյուծներին էլ անգած չըն ենի, շադ սոված ին: Գվերուս քու հեռ օչիւրիմ՝ ջանդակ, գկիսիս, իդաս այյուծներին, այյուծներ օր կերան, իրանց պոչ ժաժ տվեցին՝ ըլ արտեն գիտելորնան, մաժելո՞վ գէրտաս, իրանց գիարծիս ու գմբնաս և սաս րախչեն, եղ ժամանագ գըրնաս իրանց հախեն իկաս:

Դեն գէլնա ընգնի ջամպա, շադ գէրտա, քիչ գէրտա, գիասնի դների ախշարի: Գդեսնա՝ այյուծնին սոված գվիտան, գիանն յուրցինից օչիւրի ջանդագ, երգու գես գենէ, գքէ այյուծների առած: Այյուծնին, դէ՛, սոված ին, գիըսնին վուն, գուրին, գդշտանան, պոչ իրանց օր ժաժ գիդան, դրեն մաժելո՞վ գէրտա, գիարծի ու գմդնի խաս րախչեն: Տու մ'սէ, ըդ յոտ դևն էլ հերտով պահագուտուն է գենին: Ըդ օր մենձ ախւկեր գջամպին, գէլնա դեսնա՝ մէ երիդասարդ հնդէ խաս րախճի մեճ: Կ'սէ. - Այ դոա, օծն իրան պորդով, դուշն իրան թենվ էս խաս րախչի մեծ չմդի, տու ո՞նց իս էգի, հիմը իկամ քու մենձ գդոր քու անգած գթորգին: Կ'սէ. - Կե՛ր, նոր գոհացի:

Ինք օր էն գորմից գիկա, օր գդոգէ դրին, ըն էրգու այյուծ, գէ հարծագ ին, գիասնին ըդոր կենին կողոր-կողոր, քշին ենտին: Օր մենձ ախւկեր գուշանա, ախապրանք մյուսներին գուլարգին, եղաքսով իինգ մեջտեղից դուրս գիկան, հնգին էլ՝ այյուծնին կօգորտին: Վերծին երգդւ՝ հըդրար դուրս գիկան, գդեսնան իրանց ախապրանք ջանդանիր փոռուգ ին, գքշին երգուվ դրի վրեն: Այյուծնին գիըսնին, դրեն էլ՝ մէ գորմից, ըդոց էլ գվերճացուն: Դեն ներս գմդնի, գդեսնա՝ մէ սիրուն ախճիգ հանդէ նստուգ: Ախճիգ օր գդեսնա դրին, գգարմանա, կ'սէ. - Այ դոա, օծն իրան պորդով; դուշն իրան թենվ եստեղ չիկա, տու էգեր իս մդեր իս խաս րախչեն, հիմի օր էգամ՝ քու մենձ կողոր քու անգած գթորգին:

Կ'սէ. - Յոտի գլուխ էլ կորեր ին: Ախճիգ չավդնա, գէլնա տուրս դեսնա՝ խւկարես, յոտն էլ չկան, կ'սէ. - Դէ՛ լավ էղավ; կառնինք իրար, եսանիս մզի համար ամեն ինչ էլ գա:

- Չէ՛, - կ'սէ, - յըս նրադագով ին էգէ, քեզ էլ գդանիմ, չըն թորգի եստեխ մնաս, պայց րդի ին նրադագ դեխ հասում:

Գէլնա յոտ դերի խաս րախչից իննօր գքայէ, ջուր գվերու, եղ ախճան էլ հեղ՝ գէրտա: Գէրտան հասնին վաշառագանի տուն, մեր գուրինա, գենի

աշխարկով; Կոնն խնձոր ու ջուր սինու վուն, դդեն գասնի - գէրտա թակավորի րալար: Թակավոր, օր գդեսնա եղ էլ պերեց էգավ, կ'սէ. - Վըգիր, հնար գդի, յըս գմեռնիմ, գտրակիմ, ըդ ուր ջամպիս գտառնա գիկա:

Վըգիր գէրտա հոր մոր: Կ'սէ. - Յըս իմացեր իմ, օր Անվերան սար գս, թող էրտա Անվերան սար, ընտեխեն մարտ հեղ չիկա, հօն գվերճանա, գալրծնիք - աղաղվոք: Գկանցին դրին: Թակավոր կ'սէ. - Տու ողի էրտաս Անվերան սար: Կ'սէ. - Ո՞րդեխ է եղ Անվերան սար: Կ'սէ. - Յըս էլ չկիդեմ, ողի էրտաս էնտեխաց անմահագան իմնձոր ու ճուր րեցիս, յըս հիվանդ իմ, օր ուղիմ, խմիմ՝ լավանամ:

- Ինչքա՞ն ժամանագ կիդաք, - կ'սէ տղեն:

- Քառսուն օր քեզի ժամանակ, րերիր՝ րերիր, չըերիք՝ քու գլուխ գգըրդիմ: Կ'սէ. - Քառսուն ավուր ծախս վըզորից առեք, տվեք ընձի, օր ես կրամ էրտամ - իկամ:

Վըգրից կառնէ ծախս, գիկա մոր մոր. մոր գպադմէ, օր իինա էլ գուրագին Անվերան սար: Օր կ'սէ Անվերան սար, մերն լաց գենիի: Կ'սէ. - Ընչի՝ գիլաս, ա՛յ մեր, մեզ է, ես էստեխ մնամ՝ թակավոր իմ գուլս գ'կորէ, գէրտամ, էգա՝ էգա, չէգա չէգա: Աեր գալերէ կարմիր էնտ գ'կարէ մադ, կսէ. - Բալիգ ջան, կարող է էրտաս հասնիս էնտեխ, պայց դուրս գալուց չվուագնա՞ս, շուտ չլնաս, մինձն ժամը դասերգուս չըրանա՝ չէլնաս:

Դեն գրադրաստվո, գնատի ծին, գկանմէ գաստված ու գէրտա: Գէրտա, գէրտա, ախշրից գէլնա, ո՛չ քաղաք է, ոչ զյուղ է, ծովէ գընգնա ծովի թերմով գէրտա, գտեսնա՝ մէ տեխ մուխ գէլնա, գքէ, եղ միսի վոա գէրտա: Իրգվաս գողմ է, դուռ գգըրգէ, մէ դերդեր դրւրս գիկա, կ'սէ. - Օրշնյալ տե՛ր, կ'սէ. - Աստված օրշնէ:

- Տե՛ր հայը, խոնախ գընտունի՞ս:

- Խոնախ ասսուն է, ընչի՝ չըն ընտունի, - գնանէ դրին ներս: Կ'սէ. - Տե՛ր հայը, յըս էգեր իմ գէրտամ Անվերան սար, մեր թակավորի համար անմահագան իմնձոր ու ճուր րերիմ: Կ'սէ. - Էկուց գէրտաս իմ մյուս ախապոր մոր, մի օրվաս ճամպա է, կարող է են իմնանա տեղ, ես՝ չկիդնմ: Ախսօր գէրտա, խոնախ գենիի են մյուս ախապոր: Կ'սէ. - Վըլը յըս էլ չկիդեմ, իմ մենձ ախւկեր կարող է իմանա, մեզ օրվա ճամպա է: Գէրտա գիասնի մենձ ախապոր մոր: Էղի կ'սէ. - Լա՛վ, առավոդ քեզի ճամպեն ցուց կիդամ: Գէրտաս ծովի պերան՝ մի մենձ ախպտագ քար կա, գպարցրուս, քարի տագ գըմ է դրուգ, եղ գըմ գթաթիս ջրի մեճ, ծովային ծին գիկա, գգըրգիս ծիու գլուխ, քգի գըցիս ծիու վլեն, զանցնիս են գողմ: Օր անցար են գողմը, գըմ գպոգիս ծիու գլիից, էստեխ էլ կա մէ սիպտագ քար, գդնիս եղ քարի տագ ու գէրտաս քու ջամպով; Եղ ջամպեն փուշ ու գաղաշ է, օր անցար եղ փուշ ու դադաշի մինչով կ'սիս. - Օհա՛շ, ես ի՞նճ անմահագան հոդ գիկա: Էտեխից օր անցար, գէրտաս մէ ախապոր վրեն, լեղի

է, չըս կոնա խմի, գ'կզիս վրեմ, կումմ' գտանիս քու սկերան, կ'սիս. - Օխա՛շ, ես ինձ անմահագան ճուր է: Էնտեխից էլ օր անցար գնացիր, գերտաս դրբայի մոդ գդեսնաս, գել են գողմ է գարած, մակին էն գորմ. խոդ դրուգ է գիլու առճն, դմագ՝ մակու առճն: Կըմը գվերուս դմագ դրիս գիլուն, խոդ գորիս մակու առճն, գտանիս գերտաս: Գերտաս Խաս րախչեն, ուրեմն, խնձոր է, ճուր է, իմշ է՝ գվերուս: Օր գտառնաս՝ դառնալու ժամանակ անփողջ աշխարհ. ծառ, ճուղ, քար ու թուփ գրոռա. «Հողեղեն՝ դարավ հրեղեն»: Չդառնան, քու եղև չնայիս, օր եղև նայեցիր՝ քար գդառնաս: Ընտեհեն օր էգար, գիկաս գիլու մոդ ու մակուն: Կ'սին. - Գե՛լ, մակի, «Հողեղեն դարավ հրեղեն», կ'սին. - Մրժանի՛ է, թո՛ղ դանէ, եղքան ժամանագ մեր գեր փոխուր չկար, եղ մարտ փոխեր է: Գիկա լեղի ախարի վիեն, կ'սին. - Լեղի ճուր, դարավ: Կ'սէ. - Թող դանէ, արժանի՛ է, ընծի գովիդ չեղէ, պայց եդ մարտ ընծի գովիդ է: Գիկաս փշի - դադաշի մեծ, նմանարես, եկի՛ գիկաս ծովի մոդ, եկի գըմ գիանիս, գ'զըրդիս ծովային ծիու գլուխ, նստիս գտանիս էն գողմ:

Եղան դերդեր գպասդմէ իրան, դդեն առավոր գէլնա - գերտաս: Գերտաս, դերդորու սալքիով՝ գերտաս ծովի մոդ, իրան ծին գերախէ, ինք գերտաս սիպտագ քարի դդից գեանմ գըմ, գրաթիւ ճորի մեծ, գդեսնա՝ ծովային ծին գիկա, գզըրդէ գլուխ, գտանիս էն գողմ: Էնդեխ էլ գիանը գըմ, տրէ քարի տագ, ծին գերախէ ծովի մեծ, ինք գերտաս: Գերտաս, իսկարես, փուշ - դադաշի միճով գտանիս, ըմբես փուշ ու դադաշ է, օր մարտ չ'գոնա միճով քելէ, կ'սէ. - Օխա՛շ, ես ի՞նչ անմահագան դրախտ է, ի՞նչ լավ հոր գիկա: Ընդեկից գտանիս, գերտաս լեղի ճորի մոդ, կումմ' գտոնէ կ'սէ. - Օխա՛շ, իմշ լավ անմահագան ճուր է, ընդեխից էլ գտանիս գիլու, մակու մոդ, ըդրանց կերն էլ գիլուխտ, գերտաս մոնի խաս րախչեն, Սնմերը սար: Գերտաս խնձոր գքաղէ, ճուր գվերու, օր իկա՝ մաղի լենտ գնայէ, մեր գընճնա միտկ, կ'սէ. «Իմ մեր ըսեց, մինձն ժամի դասերգուս մնաս հօն, յըս ո՞ւր է գերտամ»: Գմնա էնտեխ, Խաս րախչի մեծ գերտա-գիկա: Էն գդեսնա, օր իրեք աղունիկ ֆոռալե՛ն գիկան, ախարի վրեն գրմին, գիանին իրանց թերուտկնին, գդմին ծաղիկների վրեն: Մենձ ախմիկ գրաթըրնա ծառ, մէ սիրուն երիդասարդ հանդէ ծառի վիեն քնուգ, տղի գէխու տգեն գիանէ գիրկմ՝, գկարտա, ուշկի գպերէ, գերտան ախարի մեծ գլուղճնան, գիկան մդմին սենյագմ', հաց կուդին, նորից դդին գիանին ծառ, գ'քնցուն: Գիրկ գդմին գլխու տագ, գ'քնցուն, գիակնին իրանց թիրուտկնին ու գրոնան - էրտան: Ըդի իրան աճկով գդեսնա դդեն, ժամի դասերգուս օր գլրանա, դդեն գէնա էտեխից, գընգնի ջանաս: Օր գիկա, քար, թուփ գրոռան. «Հողեղեն՝ դարավ հրեղեն»: Կ'սին. - Թող դանէ՛, արժանի է իրան:

Գիկա գիլու մոդ, մակուն, ըդրք էլ ջամպա գիղան, գիկա լեղի ճորի մոդ, էն էլ ջամպա գիղան, գիկա փուշ ու դադաշ գընճնա, չըս խոսս, գիկա սիպտագ քըրու մոդ, գըմ գիաննէ քըրի տղից, գզարգէ ծովային ծիու գլուխ, գընցնի էնտին: Գընցնի էնտին, գիեծնա իրան ծին, էլ դերդերու մոդ չգայնի, գիշեր-ցերեզգ մեզ կէնէ ու գըշէ, արտեն ջամպէն գդավ: Եռեսունինն օրվա վլեն՝ գիասնի դրու: Առավուր խնձորն ու ճուր գտոնէ սինու վլեն, գերտաս: Թակավրոն ու վըգիր, օր գդեսնան դդեն պերեց էգավ, դեղն ու դեղ՝ գմենին: Դդեն գտառնա իկա, մոր գապադմէ. - Այ մեր, - կ'սէ, - շա՞դ լավ էղավ: լավ պրծա, թակավրո ու վըգիր՝ դեղն ու դեղ մեռան:

- Յա՛, րալիգ ջան, րոծար, էղ, օր քու գլուխ թակավրո օյին գիսադեր, ընծի եամար էր, չարուտէնէ սիրդ իրանց պայտիր ը, լավ ործար, րադմէ դեսնանց՝ հ'նալ էղավ:

Դդեն գպադմէ իմալ օր էղեր էր, կ'սէ. - Այ մեր, առա եդ խնձոր ու ճուր րդի իկենք, քու կարած լենտ ընգավ իմ միտք: Ըսի՝ իմնիմ Խաս րախչեն ման իկամ, միճն ժամ լրանա, դեսա իրեք աղունիկ էգան, հանծին իրանց թերուտկնին, էղան իրեք ախմիգ: Մենձ ախմիկ էլավ ծառի գլուխ, մէ սիրուն երիդասարդ եանդիր հօն քնուգ, իմ սիրդ փլավ վլեն, սաղոցուց էդ երիտասարդ, պերեց ցած, լոդցան, հական շորեր, մդան սենյագմ' ջաշեցին, նորից երիտասարդին դրեցին ծառի գլուխ, գիրկ կարտացին, քնցրեցին, գիրկ դրին գլխու տագ ու իրանք հական իրանց թիրուտկնին ու թուան - գացին: Մեր կ'սէ. - Քու աճկով դեսա՞ր, ու արծունք գրապէ աչքերուց: - Այ մեր, ընչի՝ գիլաս:

- Է՛, րալա ջան, էնի, - կ'սէ, - քու հե՛րն է:

- Ծը օր իմ հերն էր, ընչի՝ չսիր, յըս իմ հոր գագաղինք պերենք:

- Չը գոռնէ րերէ, րալիգ ջան, էնի՝ սերով է ընգէ, արտեն հոկին դարեր ին: Ըդ Խաս րախչեն լէ քու պարի Խաս րախչեն ը էղի: Դդեն կ'սէ. - Օր աշխարի քանդվի՛, յըս րդի էրտամ իմ հոր գդմամ, պերի՛ն: Տաղին՝ էդ վաջառագանի մերը, կ'սէ. - Լառ, գերտաս, պայց իմ ցուցմունքով շարժվիս: Կ'սէ. - Գերտաս էնտեխ, միճնչ ի իրանց գալը, ախարի մոդ փոսմ՝ գիտուիս, տահստագներով գծածկիս, հնչքան լավ ծաղիկներ գամ՝ գփոխս վլեն, ուրիշ տեղմ՝ էլ՝ փոսի մեծ լավ՝ կրագ գշինիս ու գիկաս էտեխ գպադդվիս: Հանդէ աղունիկնին օր էգան, իրանց թիրուտկնին գիանին, գդմին էդ ծաղիկների վիեն, գէնան քու հոր գոախցուն, պերին - իկան: Իրանց օր գնգնան ճորի մեծ՝ տու հըմը գէնաս, վիրուս իրանց թիրուտկնին ու տանիս կոխսիս կըագ, մեզ, էրգըրտ, օր գիկաս առճի հադ սենյագ գմնաս, իրմը դարագից գքաշիս չիրուխ, դրիս քու ծոց, օր չիկա մենծ ախմիկ քգի քար

դատու, սերով է: Դդեն կ'սէ. - Լավ: Կ'սէ. - Լառ, օր եղ բոլոր եղավ, իրանք չըն գ'ոնա - թոնի երտա, գեակ-նին իրանց շորեր, գբերիս իկաս սենյազ, ըն մենձ ախճիգ գընգնա չիրուս գեաշը՝ չ'գդնա, հըմը քու ծոցից գեանիս չիրուիս, գգըրօփս սեղանին, կ'սիս. - Սեղան, եսպես սարկով-դազգով եղնիս իմ քեռու, վւա-շառագմանի հայտա:

Դդեն գելնա գընգնա ջամպա, ելի նույն ծևով գիաս-նի Անվերա սար: Դէ՛, փոս շիներ ը, գրազ սարկեր ը, գսպասէ, օր ժամ թըմի: Ժամ գրանա, աղունիգնին գի-կան, գիանին իրանց թիրուունին, գոնին եղ սիրուն ծա-դիգների վու, գելնան դդին սադցուն, պերին ցած: Ի-րանք օր գմդին լողգնալու, հըմը դդեն գելնա վերու թի-րուունին տանէ գոյսէ կրագ, գվառու: Գելնան ըդուր դես-նան օդար իսան, իրանց թիրուունին է՝ չկա: Գիդա դդեն շորեր, գիակնին, գիկան սեղանի դոխկեր նստին, դէ՛, ել չըն կ'ոնա թռնի, թիրուունին կրագ է դվի: Մենձ ախճիգ գընգնա չիրուիս ման գիկա, դդեն կ'սէ. - Սե-ղան՝ չիրուիս իմ մողն է, հըմը գեանէ ծոցից, գգըրօփ-սեղանին, կ'սէ. - Սեղան, եսպես դնիս իմ քեռու հըյատ, ախճիգներ լէ՛ հըյին: Դէ՛, զըսի դների մոդի ախճիգն էլ բերեր է, գսպասին ենքան ժամանագ, մինձն վաջա-ռագման իկա, դէ՛, առուտրագան մարտ է, գուղոյի: Վըլը, գիկա վսաջառազան էլ, գիդա եղ երգու ախճիգ վսաջառ-գանին, կ'սէ. - Եղ երգու իրեղեն ախճիգ քեզ գիանձնիմ, գսպանիս, գըրօգիս, ինճ գենիս՝ երա: Գվերու դնեքու մոդի ախճիգ ու եղ իրեղեն ախճոցից փոքրին, իրան հորն ու մոր հեղ, կ'սէ. - Սեղան, գուղիմ եղնիս իմ պա-րի առանցկա ըսաս րախմեն:

Վըլը, չիրուիս գգըրօփ թէ չէ՛ ենտեխ գկաննին: Յօն գդնին, ուրեմս, ջուիհար գջամսին թակավորին, թէ քու դդեն ու հարս քու ու քոնց էգւս: Պայց թակա-վոր արտեն ծերացեր է, թակուեին նմանարես: Նոր ֆայտոն գջամպէ, իրանց գտանէ դուն: Գմդնան րա-լաղ թէ չէ՛ դդեն գիանէ անմահագման իննօրոն ու ճուր գիդա իրանց: Ռորեգան աչքեր իրանց լուս գիկը, գջահելնան, գեղնին աշխարկով: Գպերին թոռին էլ գր-սագին փոքր ախճգու հեղ, յուն օր ու կիշեր հարսա-նիք գենին, գուրախանան: Իրանք հասան իրանց մու-րմզին, տուք էլ եասնիք ձեր մուրագին:

## **8 (10). ՀՈՒՃԱԳԻ ՀԵՎԱԿՏ \***

Գեղնի, չեղնի, մէ թակավոր գեղնի, եղ թակավորին երեխա չունենա: Մէ դավոհի գիկա խեր-շառ, թուղը կենէ, կ'սէ. - Ես քգի թուղը կենին, քգի երեխա կեղնի, րայց ջանավար կեղնի:

\* Եղ հերիար լսեր իմ իմ հորքուրից, իմ պարին՝ գեղի ոնսն էր, գիավարվեն օդեն, հերիարներ գպաղմեն, իմ հորքուրն էլ սովորուցեր լըմի, երոնք խնուսս հերիարներ իմ: Սեր «մասսակ» կսենք: (Ծան. րանասացի):

Գմնա թուղը կենէ, եղ կնիգ կազադվի: Դայեգնիր հըմեն քոմերին եգէ, դէ՛ գիդեն, օր ջանավար կեղնի: Եղ երեխեն կեղնի, հարի գապնին՝ մէ իրեք - չորս հո-կի կուլդ: Թակավորին խարար կիդան, կ'սին. - Թա-կավոր արդած կենա, քգի երեխա է եղի, րայց գա-զան է, մարտ չիշխնա մողենա: Գտանին եղ երեխին, մէ հոր գիորին, գիծուն մեծ, ինչ կիդան՝ չուլէ, մի-նագ՝ երեխա կուլդ: Եղ թակավոր, ել ինչքամ երեխա կա քաղքի մեծ, իրան խզինեն րացուց, զնեց ու կեր-ցուց, զնեց ու կերցուց, մնաց մէ հաղ ջաղցրուան, գե-դից հեռու կարրեր, երգու ախճիգ ուներ, մեգ հըլալ մորից էր, մեզ՝ խորտ: Կերթան ջաղցրնին կ'սին.

- Զաղցրան, թակավոր խրգեր ը՝ բդի քու ախ-ճիգներ զնինք, տանինք:

- Գացեք ըմ կնգաց ուզեք, յըս իմ՝ կիդան:

Իրան առօնի ախճիգ կիդա: Կնիգ կ'սէ. - Յըս իմ ախճիգ չըն իդա, թող տանէ թակավոր ըմ գլուխ զար-գէ, յըս իմ երեխեն չըն իդա: Ուրեմ, եղ ջաղցրնի ախ-ճիգ կ'գմին, մինչև օսկին, րան կիշորին, իսեր-շառ՝ ախ-ճիգ կերթան գերեզմներ, մոր դերեզմնին կ'սէ.

- Այ մեր, քու տեղ րաց՝ յըս էլ իկամ, ընծի գտա-նին ենին գազանին կեր: Գոնէ ըմ հոկին էլ ա՛ռ, իկամ քու կուշտ, չեղնին գազանին կեր:

Իրեք անկամ գիմնտրվի մորից, մեր գելնա նստի, կ'սէ.

- Ախճիգ ջան, քու գիդն եղ գազանի գլուխ է, թող տանին քգի, մինագ՝ մեգոց - մեզ չքցին քգի հորի նեծ: Կերթաս՝ կառնիս իրեք կոդր հաց, իրեք թիքա էլ միս, մէ հաղ էլ լուցկի: Գնստիս հորի պերան, եղ գազան կի-շէ քու վիեն, ինչքամ կիշէ՝ մէ կոդր հաց գրցիս, ինչքամ կիշէ՝ մէ թիքա միս գրցիս, մինչև եղ իրեք կոդր հացն ու միս գիրցնա, եղ գազանի լեզուն էլ գիրցնա, կ'սէ. - Ախճիգ, արի: Դու չվահիենաս, գիճնաս կերթաս, էնի քգի րան չենէ, քու ճազատագիրն ու ընդուն՝ մեզ է: Եա օր նստար իսոսացի՛: Եղ լուցկին գվառիս, հեղեն գվառիս. հեղեն գշայսի, հեղեն գվառիս, հեղեն գշայի՛ս, տղեն գսաղնա, գտանա քսան տարեգան երիդասարդ:

Ախճիգ գլսա մոր ըսած ու կերթա: Կերթա էս տին, էն տին, իրեք կոդր հաց գճարէ, կերթա դասարների կշտով օր գընցնի, իրեք թիքա միս գառնէ, գտրէ ուր ծոց ու կերթա: Կերթա գիանի եորի պերան, կ'սէ. - Ընծի մ'իջուցեք, յըս ընձնով գիճնամ:

Իմալ օր պաղմեցի, եղմալ եղ ախճիգ գնստի եղ հորի պերան, գագան կիշէ, հեղեն հաց գրցա, հեղեն միս գրցա, օր փրժավ՝ գազանի լեզուն պածվավ. - Դէ՛, իծի՝ ախճի, իծի՝ արի:

Ախճիգ գիճնա, գգըրօփ լուցկին, հեղեն գվառէ, հեղեն գշայսէ, հեղեն գվառէ, հեղեն գշայի՛, եղ գազան կեղնի մէ լավ երիդասարդ: Մողովուրդ կ'սին. - Եղ գայզնի ծեն ընչո՞ւ կերավ, անընդեատ կուդեր ու

կզուրար: Գիկան իշխն, որ սողա ու ախճիգ նալեր ին, գիտսան: Կերթան կ'սին.

- Թակավոր արրած կենա, ջաղցրնի ախճիգ եղ գազանին սահցուցեր է:

- Ի՞նալ սահցուցեր է: Գիկան իշխն, ող հա՛, տղեն ու ախճիգ հնդէ գիտսան: Նոր դիոլ-գուռնով, քեֆով գիանին տղեն - ախճիգ գուանին: Թակավոր յոտ օր, յոտ գիշեր հասնից գէն: Խըրար կերթա ջաղցրնին, թը քու ախճիգ թակավորի տղին սահցուցեր է, թակավորի հարսն է: Կ'սէ. - Ի՞նչ լավ եղավ, իմ ախճիգ պրձավ խորտ մոր ծեռքեն:

Օգի գինդասնա ջաղցրան, րայց խորտ մերս գտրդմի, կ'սէ. - Ընչի՞ յըս իմ ախճիգ չտվր, օր ըդ խորտ ախճիգ կնաց, եղավ թակավորի հարս:

Մէ շապատ գընցու, կընէ ախճիգ ու մեր կսին. - Երթանք մեր ախճան պերինք դսրժք:

- Այ կնի՞ց, ինչ դարձք, ինչ պան, յըս ջաղցրան մարտ իմ, ի՞նչ տանիմ, ի՞նչ ըսիմ, երիսր է, գացէ ուզ բըհստի հեղ, ինչ գաւզիք:

- Չէ օր չէ. - կրավ մարտուն, - իլահի՝ կերթամ ախճիգ պերիմ: Կերթա ախճիգ գաերէ: Իրգուն ախճիգ օր գեանէ շորեր, օր քնի, կ'սէ. - Ախճիգ ջան, թելէ երտանք դրսու եաշիվ,

Ախճիգ օր գնստի՝ լանգեմ՝ կիդա ախճան մեճկին, գլորցու, կ'սէ. - Տու ենիս թակավորի հա՛րս, իմ ախճիգ մնան: Վախտմ՝ գընցնա, գեկա թակավորի տղեն ուր կնիգ տանէ, խորտ մեր ուր ախճիգ կոերտ: Տղեն կ'սէ. - Եղի ըմ ուլգած ախճիգ չէ, յըս ըդրան տեր չըմ կայնի:

Դառնանք ախճան:

Ախճիգ կալորվո, կերթա մէ ծոր, շիվար, մոլոր, ի՞նչ ենէ եղ գիշերուն տգլուք, շոր չկա վրեն: Կրոնա մէ րարագ ճամպա, կերթա: Կերթա գեայնի մէ քաղջի դուժ, կ'սէ. «Անոր է, տգլոր վր՞ո տուն երթան»: Կերթա նդնա մէ վսնքի մեծ: Գտեսնա՝ ժամու մեծ մէ դագադ դրուգ, չարսավ քաշուգ վրեն: Իրգուն օր գիկա, գտեսնա, օր մեգմ՝ մէ սինի լիք ուղելիք պերեց, դրեց եղ դագադի կուշտ ու եեռցավ, Ախճիգ մդածեց, ըսեց. «Ի՞նչ ենիմ, յըս սովուծ իմ»: Տեսավ, օր Արև մեր մոյսվ, ելավ եր մեռել նստավ, րացեց սինին, կերավ ուրին հաց, ու ինք մինչև լուս մնաց սովուծ: Եղ օր ծեռ չտվեց, միսօր ելի նույն պատմություն: Արե օր մեր մդավ, նույն մարտ պերեց եղ սինին լիք ուղելիք դրեց, գնաց: Այսօրգ ըսեց. «Սովուծ իմ, գէնամ պերիմ փշում՝ ընծի ուղիմ, ջայնմին, թէ եղ մեռել ինչ կենա՝ թըր ենա»: Գէնա ախճիգ կերթա եղ ուղելիքներից մէ-մէ փշուր կիսէ կուտէ, գծածկէ, գիկա մղնի ժսմի խորան, վարակույի եգեկ: Տգեն գէնա, եղ մեռել, գպանա եացի սեդան, կ'սէ. «Վա՛, իմ մերն ընծի մոռցեր է, կիսադ հաց, կիսադ ճաշ է խրգէ ընծի»: Օդի մդածմունքով կուտէ եղ հաց: Միսօր՝ ելի եղ պաշմու-

թյուն: Իրեք օր ետպես գէղնա: Տղին կ'սէ. - Չէ, եղ վսնքի մեծ նա րտ կա, իմ մերն ընծի կիսադ հաց չխրգա: Գէնա վերու մոմ՝ Էստին, էնտին գպդու, գիկա, օր եղ ախճիգն է, գտեսնա մէ տգլոր ախճիգ:

- Ախճից, - կ'սէ, - իու սադանա չի՞ս: Կ'սէ. - Չէ:

- Իմ հաց դու է կիսի՞ն ուղիս: Կ'սէ. - Յա՛:

Գպնէ ախճա ծիու, գիկա, իմալ օր ես պադմեցի ծզի, ընալ ախճիգ պադմեց ուրին: Ախճիգ պադմեց իրա գլխու գալիք, ըրը, ըսեց. - Դու օր կենտանի իս, ընչո՞ւ իս եգէ պարգէ ես կուրու մեծ: Ըսեց. - Յըս ել թակավորի տղա իմ, ընծի մեծուցին, տվլու ուսումի, մի օր ել միս ը կուղեք, կերը, օսկոռ գըրգեցի՝ շուշեն ջաղրավ, Արևուն քվեցի: Արև ընծի անիձեց, ըսեց. «Գիշեր սադ մնաս, ցերեգ՝ ըմ արև չտեսնաս»: Յըս Արևուն մեռուգ մարտ իմ, յըս Արևուն երես րդի չտեսնամ:

Ըդ էրգուս մանցին իրար մոդ, ըդ ուղելիքով արրան: Ախճիգ մնաց էրտեխավ:

- Ի՞նչ էնիմ, - ըսեց, - ախճից, յըս էնամ իկա՞ն, հըմք ընծի տեսան՝ ուրանք էլ գմահանան, եամ էլ՝ յըս գմահանան:

Ախճան հանեց տուրս, ըսեց. - Կերթաս, քդի գէղնի մէ տղա, իմալ օր իմ թէկ վրեն նշան է, աստծու նշան է, նույն նշան՝ եղ էրտեխ թէկ վրեն է: Ըսեց. - Կերթաս մեր տուն, մեր ներքին աշխատողներ էնտեխ ին, կ'սիս. - Մեր Յուշագի իստրի համար (տղի անուն Յուշագ կէղնի), ընծի ներս առնիք, ի՞նչ կէղնի: Զգի ներս կառնին, ասսու չավի գպաշտին:

Եղ ախճիգ գէնա՝ երթա: Գէրթա, կառնին ներս, գեուրասիրին: Կազադվի ախճիգ, գէղնի մէ եադ տղա, իստրար գտանին թակավերին, թէ՝ եղ ախճան եղավ մէ տղա, քո տղի նշան՝ հանչէ վրեն:

Դառնանք թակավորի տղի վրեն՝ Արևի անիձուգին: Սէ չորս-հինգ օր գմնա, տղեն թրուտ չիդա, գէղնա - գիկա: Տղեն օր գիկա, իրա հոր շեմքին՝ օդի կէղնի փեղ, համ գիշեր գմեռնի, համ՝ ցերեց: Ախճիգմ գքցէ եղ րարուր ու կ'սէ. - Կերթամ աշխարի պդին, կերթամ ըմ րախտի եետ, մնամ ի՞նչ էնիմ:

Կերթա ախճիգ: Շադ կերթա, քիչ կերթա, կէրթա մէ սարի գլուի, ախսպի ատեճ գեստի, գիլա, գմդած, կ'սէ. - Ես ի՞նչ րախտ էր, իմ մոր գերեզմնից էլ հեռցա, գոնէ երտենք իմ մոր գերեզմնին՝ մէ խորհուրդ իներ ընծի, տեսմենք ի՞նչ գէղներ իմ րախտ:

Գտեսնի երգու եղեկնիգ գիճնան օդի, կ'սին.

- Ախճից ջան, ինչո՞ւ իս մըլուկի, ելի գմա էն Անվերի սարի գլուի, ենտեխ մէ ճզնավոր կա, Արևուն ծեռցին ջուր գրլուա, եթե մէ գդալ Արևուն ծեռցից ջուր րերիս, տանիս լցիս քու րըխտի պերան, գսախսա. հա՛մ գիշեր գսախսա, եա՞ն ցերեց:

Ախճիգ կերթա, շադ թէ քիչ կերթա, կէրթա ելի ըդ Անվերի սարի գլուի, օր Արև գծագէ, գտեսնա՝ Արևու-

ծեռքին ջուր է գլան: Ախճիգ կոյիմէ, կ'սէ. - Եդ ջրեն գոյալմ' տաք, ի՞նչ կեղնի:

- Այ ախճի՛, - կ'սին, - օժն ուր այորդով, հավըն ուր թենկ հոդը զգնվո, տու ի՞նչ հոդածին իս, օր հոդը իս գոյնվո:

Ախճիգ գինտրվի, գպաղմէ ուր գլխու գալիք: Կիդան ախճան գդալմ' նուր, կ'սին. - Դէ՛ գնա՛, հա՛մ գիշեր գսախնա, հա՛մ ցըրեգ, գնա՛, քու բըխտին այիքացի:

Ախճիգ գառնէ եդ ճուր, գիկա: Արտեն քառասուն օր թմեր է: Թառասուն օր տղեն մեռած է, երեխեն էլ բարուր է, տաքեր իմ՝ պային: Թակավորի դիվան լիք լցված ին, ինչ հեքիմներ, ինչ բժշկություն բերեր ին՝ չսահսր տղին: Գիկա ախճիգ, կ'սէ. - Դեն գացեք, յըս գսախցում:

- Է՛, - կ'սին, - հողեր քու գեժ կլխուն, եղան բժշկություն, եղան մարտ չսահսր, տո՞ւ բոյ սահցուս Յուշագին:

**Ախճիգ** կ'սէ. - Ես էլ իմ ցուցմունք կիդամ, սախցավ՝ սախցավ, չսախցավ՝ ես ի՞նչ էնիմ: Գիենեցու բոլորին, գիասնի դագսդի մող, գտանէ բուտովգին կարմ' ջուր գլցէ բերան: Տղեն գակս սրսպել, երգորտ օր գթալէ՛ էվելի, երգորդ օր թալեց՝ տղեն էլա՛վ նստավ: Տղեն էլավ նստավ, պատանկ, շորեր հըմեն թալեց, ըսեց. - Վա՛յ, ըդ ինչքան իմ քնի:

Նոր ախճիգ սկսեց պաղմել:

Խարար կնաց թակավորին, թե՛ եդ գիժ ախճիգ սահցուց քու տղին: Պոնեց ախճան տարավ, - **Ախճիգ** ջան, - ըսեց, քու պերան ի՞նչ շուր գիկա, ըսէ, տանիմ քահ ըմ օսկու խօհինեն, ինչքան գուգիս՝ վերցու: Ախճիգ չխոսա: Տղեն գալամտէ հոր, իմալ օր ձգի պաղմի, ուր գլխու գալած, թե մէ տարի վւսնքի մեծ ինք եղի, եղի իմ կինն է, եդ էլ՝ իմ երեխեն է:

Նոր թակավոր գաերէ քառում օր, քառուն գիշեր դիոլ-գուռնա, հարսանիք կէնտ: Խըրար կնաց աշխրէ-աշխարի: Եդ գագան օր ագաղեր է ախճիգ, են էլ կենտանի է, եդ թակավոր էլ՝ ըորա հեր, եգեր ը քեֆի: Ըղադ եդ թակավոր կ'սէ. - Ըմ տղեն եդ ախճիգն ը սահցուցի, գագան էր: Եդ մեգել թակավորն էլ կ'սէ. - Իմ մեռել սահցուցեր է, ին տղեն է: Եդ երգու թակավոր գվոցին ախճան վուն: Թակավորներ գուգին էլնան կոհիվ իրար ղեմ, վոր մյուսին հախտեց, թըդ ախճիգ տանէ երթա, հա՛մ ընդրա տղեն է սահցուցէ, հա՛մ ընդրա: Վերծ, գիկան գիտնագան մարտեր գընգնան մեծ, կ'սին. - Թակավոր արրած կենա, եթե ծակատագիր է, ընչո՞ւ գտանիս ժողովուրտ ջարդիս, ընչո՞ւ արունեղություն կէնիս: Բիր ախճան կանգու, մէ հադ խալի փատէ ախճան, երգու տղեն էլ թըխ կայնին, ախճիգ թըդ ուր ծեռ ձգա, վոր ծեռաց մեծ գնա՞ց, են էլ թըդ տանէ երթա, էլ րնչո՞ւ ժողովուրտ ջարդին, ընչո՞ւ արունեղություն էնին:

Թակավոր գիասկնա վըգրին, - Յա՛, - կ'սէ, - վըգի՛ր, քու խոսք կէնիմ:

Բերին ախճիգ կանգցուն, թակավորներ գիկան նստին սենադ: Երգու տղեն գկանգցուն, մէ խալի գպերին, օտկից կլուխ գիասան ախճան: Ախճիգ ծեռ կծգէ՛ կերթա գագանի ծեռի մեծ, եդ էլ ուր բըխտն է: Խալին գքանդին, ախճիգ գպաղմէ ուր գլխու գալիք, կ'սէ. - Իմ մերն է ընծի ըսի:

Նոր օդի թակավոր դիոլ-զուռնով, փեշքեշով ախճան գտրէ ծամպու, կ'սէ. - Քու տղեն էլ երեր ը կենտանի, իմ տղեն էլ գագան էր՝ սահցուցեր է, բըխտն ու ծագատագիր օր եդ է, ի՞նձ էնիմ:

Նոր կառնէ աղճիգ եդ թակավորի տղեն ու կերթան: Զեգ էլ աջողություն էնին, իրա՞նց էլ:

## 9 (xx). ՄԱՐՐԻ ԽՐԾԻԳ

Կեղնի, չեղնի, մէ թակավոր կեղնի: Եդ թակավորին մէ սիրուն ախճիգ կեղնի: Օրմ' գիկա հավուզի վուն վլացվո, գէլի ծառ: Կիշէ՛ բոշեկ էգան, էգան - նստան եդ հավուզի ջոի բոլոր, իշիմ՝ մէ սիրուն ախճան նգար ինդը մեծ: Մէ բոչի ախճիգ էգավ, ըսեց. - Ի՞նչ սիրուն ախճիգ իս, արի՛, արի՛ իծի ցած, նստի, փշում, խոսանք: Դը՛ բոչի երես է, գատիրէ, շադ գիւնտրվել, ախճիգ գիճնա: Բոչի ախճիգ գգըրգդ լանգով, թըլէ ճուր: Գիկա թակավորի տղեն, տեսնա՝ ախճիգ չկա: Տու մ'ըսի, ախճիգ ըորա հեղ ժամատրվեր է, ըսէր է. «Գերթամ ֆլան ծառի վուն գէլնամ, տու արի՛»: Տղեն գիշէ ծառ, մէ բոչի կըճկը իընդը օն: Բոշեն կ'սէ. - Արի՛, արի՛, ընչո՞ւ և եդ քաշվար, չէ՛ յըս քու սիրածն իմ:

Տղեն գիերառի, կ'սէ. - Տու ըմ սիրած չիս, էմի սիրուն էր, տու ընչո՞ւ իս իըմլա մոտլոշ:

Կ'սէ. - Ըմ հոր սուլու օչիւար ընցավ, ընքան կանչեցի՝ ըմ նոտներ էղավ իըմլա:

Կստիրէ ախճզգան, կ'սէ. - Ըբը ընչո՞ւ իս իըմլա սև: Կ'սէ. - Յըդը ժամմ' - էրգուս՝ ծառու գլոհն իմ եղի, արև վառիր է, սկցիր իմ:

Ի՞նչ կէնտ, բոչի ախճան վուն չկ'ոնա: Վերծ, գտիրէ, գառնէ եդ ախճիգ երթա: Օրմ' եդի կերթա ջոի, ջոի միծից մէ մեռի ծեռոք գէլնա: Կ'սէ. - Ախճի՛, մեռնի՛ս, արրիս՝ մեռելի բոյ ռաստ իկաս:

Գիկա պաղմէ, տղեն կ'սէ. - Ես քգի բաց գթողիմ, օր բոյ մեռելի ռաստ իկաս՝ բաց գթողիմ: Բոչի կըճկեն գթողէ օցի հեռենա: Տու մ'ըսէ, եդ թակավորի ախճիգ, օր ընգեր է հառիգ, դառեր է գուլ-ժաղիգ: Օրերուց օրմ', տղեն գիկա օդի գլոհնա, կ'սէ. - Ես թըդ երթա եդ ծաղիգ քաղեն: Գքաղէ ծաղիկ կիշէ՛ եդ թակավորի աղջիկն է: Կ'սէ. - Բոչի կըճկեն ընծի էնքան համոգեց, ես ծաղի ծերից իծա, ինք ընծի իլունից, տվեց ջուր, մգա եղեր իմ գուլ - ծաղեգ: Գտա-

նիս, դու գինաս, չտանիս՝ դու գինաս:

Տղեն գառնէ եղ ծաղիգ, գիկա: Գմնա մէ շապատ, էրգուս, եղ ծաղիգ գէղնա ախճիգ, գէլի էրթա ջրի: Օվ գիկա՝ իրան հերտ գառնէ: Ախճիգ օր վեղրոն գորէ, գտեսնա՝ մեռելի ծեռք ջրի միճից գէլնա, կ'սէ. «Ախճից, մեռնին՝ աբրիս՝ մեռլի ռաստ գիկաս»: Ախճիգ վւսլսվխելով գիկա տղին գպաղմէ: Իրեք օր կէրթա ջրի, իրեք օր էլ նոյն պաղմություն գէլնա եղ մեռելի ծեռք, կ'սէ. «Մեռնիս՝ աբրիս՝ մեռլի ռաստ գիկաս»: Գիկա, էլի գվլսխենա, տղեն կ'սէ. - Գտանիմ քդի, օգդիմ հեռենամ, քաղքից գէլնամ, օր մեռել չտեսնաս:

Գտան ախճիգ ու գիեռենա: Շատ գէղթա թե քիչ, գէլնան մէ Անվերի սարի գլուխ, մէ հսու շենք ը: Տղեն զըրգից դուռ՝ չքացվավ, ախճիգ օր ծեռ ավեց՝ դուռ էդ կնաց: Ախճիգ մնաց նես, տղեն՝ դուրս: Են՝ էն կողմից, էն՝ էն կողմից լաց, հնչ էրեցին՝ չքացվավ; Ախճիգ կնաց էն տին իշեց, էն տին իշեց, տեսավ մէ կուրքի կա, մարտմ՝ հընդը մեճ: Տղեն ըսեց. - Իմցու եղ մարտ, բոդ իգա բանա տուր:

Ե՛, մեռել ո՞ւր իկա: Օդի տղեն շադ լաց, մոմոաց, ախճիգ է՝ օն, ի՞նչ էնին: Շադ մնաց, թե քիչ, այդէն կնաց ուրին, ախճիգ մնաց: Ախճիգ մնաց ներս: - Ի՞նչ էնին, - ըսեց, - րոդ նսահմ, պայիմ եղ մեռել, եղ էն է, օր ըսեց. «Մեռնիս՝ աբրիս՝ թըդ մեռլի՝ ռաստ իգաս»: Ախճիգն էլ առավ թաշկինագ, նստավ էդ մեռլի գլխուն, ճանջեր քշեց, թը քընի տարի տևեց, աստված գինա: Օըմ' էլ տեսավ, բոշեկ էլի եգան, գըրգվան դուան:

- Էլի՛, էլի՛, մադ, ասեդ, ֆլան-բեֆան: Ախճիգ թըդեց մեռել, էլավ ըսեց. - Ընձի մադ, պան պետք չէ:

- Ծը ընչու ի իս մացէ մինագ օդի: Ըսեց. - Մատեր իմ, մեռել գպայիմ: Ըդ ախճիգ պաղմեց ուր գլխու գալիք: Կըճկեն հըսկըցավ, ըսեց. - Աըդ՛ տու փշում՝ վլացվի, յըս գիկամ պայիմ ըդ մեռել, չթողիմ ճանջեր իճնան, մինչն իկաս: Ախճիգ տիրավ տուր, ասսու իրամանով տուր պացվավ, ախճիգ էլավ տուրս, րոշեն եգավ ներս: Բոշեն առավ թաշկինագ, ճանջեր քշեց: Դը՛, բոշը է, ընգավ էն տին, էն տին գողուրյան, ճանջեր լցվան մեռելի թիթ-բերան: Մեռել էլավ նստավ: Ըսեց. - Թու տուն շիկվի՛, թը ինչքա՞ն իս քնի, յըս մեռա, թը քընի տարի ճանջեր գքշիմ, մէ րորվա մեծ էլար նստար: Խսսացին: Բոշեն սուդ-սուդ պադմեց, ֆլան-բեֆան: Ախճիգ եգավ, եգավ գարմացավ, մղածեց ըսեց. «Էսքան տարի պայեցի՝ չսաղցավ, րոշի կըճկեն ի՞նալ սադցուց»: Ախճիգն եգավ կաննավ օդի: Ըդ մարտ օր սաղցեր էր, ըսեց. - Ըդ օ՞վ է, ըսեց. - Ըդ էլ զմ քոծն է: Մանցին օդի, շադ մանցին, թե քիչ, օրմ' էլ եղ մարտ ըսեց. - Գէլնամ էրթամ քաղքաք, ի՞նչ առնիմ: Դը՛, բոշը է, ըսեց. - Դը՛ էն առ, իր էն առ: Կնաց մարտն քիչմ' ճամպա, ըսեց. «Ես ըդքան պան ըդրան առնիմ, ըբը ըն ախճգան ի՞նչ աբրիմ»:

Եգավ ըսեց. - Քուրո՛ ջան, ըբը տու ի՞նչ գուզիս, ըմ կնիգ ըրքան բան ուզեց, քզի ի՞նչ բերիմ: Կ'սէ. - Յըս մենագ մէ Սարբի իրծիգ գուզիմ, օր իսոսամ հեր: - Է՛, - կ'սէ, - բան ուզե՞ բերիմ: Կ'սէ. - Չէ՛, բան ընձի պետք չէ, մինագ եղ է հարգավոր ընձի:

Կէրթա կառնէ ըմեն բան. շորից, օսկուց, արձեից, խուրցին լիք գլնա, թալէ խուրցին թևին ու գէլնա քադքից, կ'սէ. - Վայ, էն ախճիգ մէ պան ուզեց, մէ խուռուշի պան էր, յըս թըդ տառնամ, էրթամ պերիմ, մեղկ է:

Գտառնա իկա խանութչուց գիարցու. - Սարբի իրծիգ ումին: Կ'սէ. - Յա՛, ի՞նչ կենիս:

Կ'սէ. - Աւ հադ տո՞ւր ընձի:

Կ'սէ. - Կիդամ քդի Սարբի իրծիգ, բայց ըդրա տեր շադ զըրոյլու է, բոդ տու կաննիս, եղի իլուս խրծիգի հեր: Միծև վերջ օր իսոսաց, օր վսրծին րոբեն չպունիր՝ կամ էսի՛ գարաքվի, կամ՝ ախճիգ:

Կառնէ եղ մարտ իրծիգ, գիկա: Բոշի կըճկեն ինչ խնդացավ ու ինչ ուրախացավ, ըբը ըսեց. - Իդա ի՞նչ է: Ըսեց. - Էս էլ բերեր իմ քոծին, մեղե է, ուզեր է:

- Չէ՛ օր չէ, բոդ չիդամ, բոդ ճարտիմ: Բոշի կըճկեն ընգիր է կլիխու:

- Այ կնիգ, մեղե է, մեր աշխադիդմ է, տու ըսիր, եղ մէ իրծիգ ի՞նչ է, օր գարտիս, մէ խուռուշի րան է:

- Չէ՛, րոդ ջարտիմ: Կ'սէ. - Տու եղի ջարտիս՝ յըս քու շորեր իցմե՞ն գվարիմ: Ըդ խանութչին ըսէր է, կիդամ խրծիգ իրա տիրուն, բայց պահագ գկայնիս մինճն վերճ, օր իր գլխու գալիք պաղմէ, թէ չէ՛ գտրաքվի: Վերճ, բոշի կըճկեն գիլէ մարտու մողից խուրցին, կ'սէ. - Ա՛ռ, ուղէ քու օրուս: Եղ մարտ իրծիգ կիդամ ախճգան ու ինք գէրթա պատընդի: Բոշի կըճկեն էլ գկայնի պահագ, տեսնա՝ ի՞նչ գիսոսա: Ախճիգ գպադմէ, կ'սէ. - Սարբի իրծիգ՝ յըս թակավորի մեգումար ախճիգն եք, եգա էլա ծափի գլխու, բոշի կըճկեն ընձի իսապեց, քցեց ջուր, եղա՝ գուլ - ծաղիգ, ըն սիրած եգավ, տարավ ընձի, սադցա, առանք իրար, մէ ժամանագ անցուցի: Եգա օրմ' ջուր գտանենք, իմ վեղըն դորի ախարի առօճ՝ մէ մեռելի ծեռք էլավ, ըսեց. «Մեռնիս՝ աբրիս՝ մեռլի ռաստ գիկաս»: Ըսեց. - Սարբի իրծիգ՝ յըս պահրի՞մ թէ՝ տու: Իրծիգի հերն է գիւռսա: - Սարբի իրծիգ՝ միսօրն էլ գացի ջրի, նույն մեռլի ծեռ էլավ ըսեց. «Մեռնիս՝ աբրիս՝ բոդ մեռելի ռաստ իկաս»: Անգած չէրեցի: Իրեք օր եգա, իրեք օր էլ եղ մեռլի թաթիգ էլավ, ընձի վախեցուց, ըսեց. «Ախճի, մեռնիս՝ աբրիս՝ բոդ մեռելի ռաստ իկաս»: Յըս մեռելի ռաստ եգա: Սարբի իրծիգ, յըս պատընդի, թը՝ տու: Ըսեց. - Ըմ ամուսին ընձի առավ, քաղքից տուրս եգավ, էլանք քաղքից, ըսեց՝ մեռել չտեսնաս: Ըսեց. - Եգանք իդը Սարբի սարի գլուխ: Ինք ծեռ տվեց, դուռ չքացվավ, յըս տվի՛ րացվավ, մղը ներս: Ըսեց. - Սարբի իրծիգ՝ սո՞ւր է, յըս

պաղոիմ, թե՝ տու: Խրծիգին է զպաղմէ իր գլխու գալիք: Ըսեց. - Յըս ծեռ տվոր, ինք տվեց՝ չրացվավ, ինք էն յան լաց, յըս՝ էս: Թե շադ մնաց, թե քիչ, ինք գնաց, ես մանցի ես սենյագ: Եղ մէ մեռելն էր էտեխ դրուգ: Ես նստա յու տարի պայեցի եղ մեռել, քշեցի ճանջեր, եղ մեռել չգարտնավ, Սարրի խրծի՞գ, - ըսեց, - յըս պաղոի՞մ, թե՝ տու:

Բոշի կըճկեն քաշեց, չրողէ: Ըսեց. - Մէ ըրովս մեճ րոշեն էգավ, ընծի համոզեց, ըսեց. - Արի՛: Տիրավ դուու, դուու պացվավ, ընծի ըսեց. - Գնաւ փշում վացվի, յըս զպայիմ մեռել, հարի իկաս: Առավ իմ յայլուր, նստավ, յըս գնացի տուրս, թը ինչ էդավ, ինչ չէդավ՝ րոշի կըճկեն սադցուց եղ մեռել: Սարրի խրծի՞գ, յըս պաղոի՞մ, թը՝ տու: Կուկըեն տրակկւաւ, էդավ հարուր կդոր: Տղեն էդենն պոնեց րոշի փեշ: - Թը՛, կ'սէր յը՞ս իմ պայի: Բրախեց րոշի կըճկեն, առավ եղ ախճիգ: Ըդոնք հասան իրանց մուրագին, դու էլ՝ քում:

## 10 (12). ՕՅ

Մէ նախրորդ կերմի, խեղջ, քսսիր նախրորտ, իրեք ախճիգ կունենա: Եղ նախրորտն է, գիշէ նախիր գիկա ախարի վրեն, գնսաի օդ, ջուր կիմէ, կ'սէ. - Օ՛ֆ, իմալ իմ դաղորի: Գտեսնա՞ մեզօմ ախարի ագից գէնա, կ'սէ. - Ինչո՞ւ կանչեցիր ընծի: Կ'սէ. - Յըս չըմ կանչի քգի:

- Ըրը տու չ'սեցի՞ր Օ՛ֆ, յըս օֆն իմ, մզա քգի օդի գսպանիմ:

- Ընծի մ'սպանի, նախիր գմնա րըուըդի, կորի խըլի մալ, ի՞մալ կերմի: Կ'սէ. - Ընծի իրեք ախճիգ կա, արի, վըր մեզ ախճիգ գիավմիս՝ իդամ քգի:

Կ'սէ. - Լավ՛: Կէրթա: Բիծեն գքշէ նախիր, կէրթա տուն: Կնգան կ'սէ. - Կնիգ, մզա մեր ախճգան մարտ գիկա՝ տանք: - Ի՞նչ մարտ է:

- Վըլը, անժանոք մարտ է, գացի ախարուր ջուր խմի, ըսի՝ օ՛ֆ, ըսեց. - Օֆ յըս իմ, քգի գսպանիմ, ըսի. - Ընծի մ'սպանէ, խլի մալ գմնա տուրս, արի, ընծի իրեք ախճիգ կա, վըր մեզ ախճգան գիավմիս՝ տար: Մզա գիկան: Կնիգն էր. էլավ գեղեց վերը-վերիք: Թաթախսվէ, ծում է գիկա, տեսավ՝ թը՛փ, թը՛փ, րացին մլան: Ըսեց. - Էգա՞ը, ըսեց. - Դա՛: Ըսեց. - Դը՛, վըր մեզ ախճիգ գիավմիս՝ տար: Ըսեց. - Մենձ ախճիգ գտանիմ: Սուավ մենձ ախճիգ, ընգուց էնեվ, էգավ: Տարավ, տարավ եղ ախճիգ, նը՛ տուն, նը՛ տեխ, նը՛ խեր, նը՛ շառ, տարավ մէ փոքր քուստիգմ՝ բացեց, տեսավ լիք ջանդակ էր կախուգ: Ըսեց. - Միաճի՛, իրոք ջանդաներ գտեսնա՞ս: Ըսեց. - Դա՛: - Մզա գաերիմ պուդուգմ՝ միս ուղիս, թը կերար ըդ մի՞ս, կէդմիս ընծի կնիգ, թը չկերար՝ իդը ջանդաներու պես՝ քգի գ'կախիմ: Առավ ախճիգ էգավ, կնաց աերեց տաշտմ՝ հում միս, տրեց ախճգա առեճ, ըսեց. - Դը կի՞ր, յըս կէրթամ որսի:

Թողեց կնաց: Ըդ ախճիգն էր. միս էնեց կդոր-կդոր, փոտիգ-փոտիգ, պաղի ծագ կոխուց, ազ կոխուց. Ջերճարես, կորցուց եղ միս: Իրգուն թը՛փ, թը՛փ էգավ, էգավ ըսեց. - Մի՞ս, ո՞ւր իս: Ըսեց. «Ագն իմ, ակուգեն իմ, պաշն իմ, պաղի ծագն իմ»: Միս էլավ լեգու:

- Դա՛, ախճիգ, չըս կե՞րի, քել էրթանք:

Տարավ ախճիգ, չանգավ գըրգեց ծձերուց կախուց ջանդաներու մեճ: Մնաց էրգու - իրեք օր, էլավ կնաց մյուս ախճգա էդէ: Թը՛փ, թը՛փ կնաց: Կնաց, ըսին. - Օրի՞ իս էդի: Ըսեց. - Զու ախճիգ խալիմ՝ է հիճի, գործեր է թիգմ՝ - էրգուս, ինք լէ հիվանդ է, ուր քուր գ'կանչէ, տանինք, օր էդ խալին գործէ:

- Ախապե՛ր, - կ'սին, - Մեր ախճիգ օր ախճիգ էր, խալի չգիներ գործեր, խալի գործել զու իրեք ավրու մե՞ջ սովորավ:

- Չէ՛, - կ'սէ, - հիճեր է ահակին, գործեր է, րայց հիվանդ է, ուր քուր գ'կանճէ: Գէլան իդան միճնեց ախճիգ: Գիրնգուու էդն, սուս-փուս պերէ իկա, պանը գտուր, ցուցու ջանդաներ, կ'սէ. - Ախճի՛, գտեսնա՞ս իդը ջանդաներ: Կսէ. - Դա՛: Կ'սէ. - Յինը լէ քու քուրու ջանգագն է, թը պուտուգմ՝ հում միս կերա՛ր, քգի կէ-նիմ ընծի կնիգ, թը չկերար, քգի լէ քու քուրու պես գ'կախիմ: Ե՛, Անվերի սարի գլոխ, ինք ու էդ մարտ, ի՞նչ էնէ: Պերեց, էգավ տաշտմ՝ հում միս տրեց ախճգա առեճ, ըսեց. - Դա՞ն, դու կուտիս, յըս կէրթամ: Եղ ախճիգն էր.. էլավ միս էնեց կոդր-կդոր, փոտիգ-փոտիգ, կոխուց էն տիխն, կոխուց էն տիխն: Էգավ իրգուն, ըսեց. - Դա՛, միս ո՞ւր իս: Ըսեց. «Ագն իմ, ակուգեն իմ, պաշն իմ, պաղի ծագն իմ»:

Էգավ, ախճգան ըսեց. - Ախճի՛, չըս կէ՞րէ միպ, կոխուր իս պաղի ծգդան, դը՛, քել էրթանք:

Պերեց էգավ, գըրգեց աշբերուց չընգըլ՝ կախեց քրուն կշտին: Մնաց մէ չորս - հիճու օր, էլավ կնաց մյուս քուրուն էկևնեն: Կնաց: Ըսին. - Ընչո՞ւ իս էդի:

- Վըլը, ըսեց, - խալին գործեցին էրգու քուրով, մանցեր է մէ փշուր, ուրանք չըմ պարարի, գոնէ իկա հաց - րան էնէ, յըս ուղիմ, ուրանք խալին գործին: - Ախապե՛ր, - գընգնան մղածմունքի մեճ, - թը մըր ախճիգներն ի՞ն, խալի չըն գինա գործի, ըդ ի՞նճ է կսէ խալի, խալի: Վերծ, գստիրին պգի քուրուն, կ'սէ. - Յըս չըմ էրտա, ըդի ըմ քուրվդանց գլոխ պամ՞ը խաղցեր է: Գէնին, չէնիմ՝ չէրթա: Վերծ, շադ գստիրին ախճգա վրեն, գէլնի - էրթա, մէ կաղվու ծակ գ'գոնա, գտրէ ուր ծոց ու կէրթա: Կառուն էդ ախճիգ գիկա, գպանա տուր, կիշէ էրգու քուրուն ջանդաներ իդնդին կախուց:

- Ախճի՛, - կ'սէ, - գտեսնա՞ս քու քուրվդանք, միս իմ տվէ չկերեր իմ՝ կախեր իմ: Դու լէ չուտիս, քգի լէ հմլա գ'կախիմ: Գպերտ տաշտմ՝ հում միս, գտրէ ախճգա առեճ, կ'սէ. - Դու կի՛, յըս կէրթամ որսի:

Ախճիգ կէնէ էդ միս փշուր-փշուր, կերցու կադ-

վին, զմնա մեգ-էրգու թիքա, գտեսնա՝ եգավ; Կ'սէ. - ԱՄՇՈՒ Ո՞ւր իս: Կ'սէ. «Տա՞ք-տա՞ք ջիգարն ին»:

- Ախճի՛, - կ'սէ, - տու ընծի կնիգ, յըս քահ մարտ, հըղը յոտ տարի, յըս հըղդքան որս իմ էնի, մեց ընծի կնիգ չեղի: Դր՛, - կ'սէ, - նստի օդի, յըս իմ գլուխ դիմք քու չոքերու վրեն, քնիմ, իմ քուն առնիմ, նոր գելիմ: Գդրէ գլուխ ախճա չոքերուն, գքնի: Ախճիգ ի՞նճ էնէ էլավ գլուխ դրեց գետին, ըկտին իշեց՝ ուշ չկա, յոտ սենյագ է. յոտ լէ՝ փագ, լցեր է ջրնրվար, մարտ, ինչ ըսիս, փագեր է: Ընգավ էն տին, էն տին, ուր զըրգվավ՝ փագ էր, եգավ նստավ, խաղցավ մուրկի հետ, տեսավ բալնըներ հնդին մեճ: Մրավ էր յոտ րալնիք, գնաց րացեց եղ դուներ: Օր դուռ րացեց՝ հրմեն սաղցան, էլան փախսն: Էրգու քուր էլ ստոցան, էգան: Քուրվանց ըսեց. - Տուր գացեցք, ըդի յոտ օր գընի, յոտ ավուր ամեց մարտ ուր ճամպախի գ'կորտ, գմնան յըս ու րմ րախու, տեսնամ րոդի ի՞նչ օյյատ գիաղա իմ գլուխ, ի՞նչ կենէ: Կերթ - տեսնա՝ օսկերիչմ' հնդէ սենյագ նստուգ: Կ'սէ. - Օսկերի՛չ, յըս քահ սաղցեր իմ, տու էլ ընծի րոդի սաղցուս:

- Ի՞նալ ստոցում:

- Կ'սէ. - Ընծի էնէ մէ թելի կոջ, իմ վրեն քաշէ օսկերուր, էնէ մէ կոջ: թա՞լ թոր էրթա: Յնս լէ կգլորիշմ, կերթամ: Օսկերիչն էր. Վըլը, քտշեց ախճա վուն օսկերուր՝ ուր մագեր, ուր քան, էնեց մէ հաղ կոջ, ըսեց. - Ինալ օր տու ըղբան ջընրվար ու մարտ սաղցուցիր, աստված էլ քահ սաղցու, ընգի քու ճամպախի ու գնա:

Դառնանք Օֆին: Օֆն էր. քնավ յոտ օր, իմցով, ի՞նչ իմնտւ. նը՝ ախճիգ, նը՝ մարտ, նը՝ մըրդք, յոտ սենյագ սադ դարդգվեր ին, մնաց ինք մինաց կաննուգ:

- Ջեյ վլո՞ի, - ըսեց, - ըդ տիմճիգ ի՞նճ օյին էր հանց իմ գլուխ:

Գէլնա-մինա, գէլնա-մինա, րա՛ն չկա, գացեր ին, կիշէ մէ հաղ կոջ է. կգլորի ու կերթա, գքֆրէ կ'սէ. - Էղքան քոմեցի, ի՞նչ էրի, օք եղ կոջ վերցում ի՞նչ էնիմ: Գլորու կերթա մէ յան: Եղ ախճիգն է. կգլորվի կերթա, շադ կերթ, քիչ կերթա, աստված գկանչէ, կուանա էլի ախճիգ, կերթա գէլնա մէ ծառի գլուխ: Թակտվորի ծիան էգան ջուր գիմին, ախճատ շադի հնդէ ջրի մեծ, մէ հուռնիգ-հրեղեն ախճիգ:

- Ախճի՛, - կ'սին, - արի՛ ցած, ի՞նճ հոդածին իս: Չիճնա: Կերթան թակավորի տղին կ'սին. - Մէ հուռնիգ-հրեղեն տիմճիգ հընդէ ծառի գլուխ նստուգ, կենինք թօ չէ՝ չիճնտ: Կնա՛, տեսնինք կ'ոնտ՞ս իճուս, քահ լայեր ախճիգմ' է:

Թատկավորի տղեն գիկա՝ ի՞նճ իշէ, շադի հնդէ ջրի մեծ, մէ հուռնիգ-հրեղեն ախճիգ:

- Ախճի՛, - կ'սէ, - ինչո՞ւ իս էլէ ծառու գլուխ, կառնի՞ն ընծի, իմի էրթանք:

- Հա՛, - կ'սէ. - տու թակավորի տղա իս, րայց խելք

չկա քու գլուխ, յըս իդմլա ի՞նալ իճնիմ, ընգնամ քու եղի, իկամ: Թակավորի տղա իս, գնա դիոլ-զուտնա, գուսան, պան հարսնքով, ուրախությունով գտանե ախճիգ: Ծադ ու քիչ զմնա, կազաղվի կեղնի ուրին մէ տղա: Վասիտմ' էլ գընցնա՝ Օֆ գիկա եղ քաղաք կ'սէ. - Ի՞նալ էնիմ, օր իմ հըյիփ եղ ախճաց առնիմ: Գինա՝ ախճիգ եղ քաղաքն է: Կերթա եղնի մէ հրեղեն ծիու քուռագ, թակավորագան հրեղեն ծի, կ'սէ. «Թակավորի տղեն գիկա առնէ, կերթամ իմ լաղակով եղ ախճա հախեն գիկամ»: Թակավորի տղեն կիշէ՝ մըյդին կլուխ՝ մէ հրեղեն ծի է. Կերթագիկա, կերթա-գիկա: Մշկներուն կ'սէ. - Կերթաք հինը ծիու քուռագ պոնիք, պերիք ընծի:

Ախճիգ գընգնա կիխու, կերթա կսէ. - Թակավորի տղա՝ մ'առնէ եղ ծիու քուռագ, շադ վնաս գիասու քդի, դէ՝, ախճիգ գինա: Թակավորի տղեն կենէ-չենէ՝ չքողէ առնէ: Գմնա մյուս օր, մյուս օր լէ՝ կեղնի մէ հադ խալի, փոփուր՝ եղ խալին թակավորի ստոդ դիվան գայուն: Գիկա թակավորի տղեն, կ'սէ. - Եղ խալին թակավորագան խալի է, տանիմ փոխմ մըր դիվանին:

Ախճիգ էլի կ'սէ. - մ'առնէ, քահ վնաս գիկտ:

Դէ, կնգա զոր էլ շադ է, քօց մարտուն: Չառնէ: Մյուս օր լէ կեղնի մէ մենձ պղինձ՝ յոտ կանտեն: Թակավորի տղեն գիկա կ'սէ. - Եղի թակավորագան պղինձ է, րոդի տղնիմ: Ծախոր կ'սէ. - Եղ պղնձով, օր ճուշ էնիս, ինչքան օր թուկավորի մարտ կա, զորք կա՝ ուղին, ըղրա միծու ճաշ կես չեղնի, իսկական թագավորի պան է: Ախճիգ էլի կ'սէ. - Մ'առնէ, ըղրնէ քահ վնաս գիկա:

- Այ կնի՛զ, - կ'սէ, - ըսի քուռագ կառնի՛մ չքողի՛ր, իսալի՛ն չքողի՛ը, պղինձ կառնի՛ն: Ինք ուրին կէպէ առանց կրագի, կերցու թակավորի սադ գորք, կես լէ գմնա մեծ, չըն թո՞րգի, չէ՛, ես անկամ ըմ խոսքն է կառնի՛ն:

- Դէ, - կ'սէ, - Ա՞ն, քու մեղք քու վոգ:

Գառնէ եղ պղինձ, տանէ տուն, պար լէ գիավոնի, կ'սէ. - Լա՛վ իս էնի:

Դառնանք Օֆին: Ա՛խօր կեղնի մէ գոռդ-քոսոտ գիսկ: Անծրնէ ցուրդ, գիկա օչյորի մոդ գվղվդա, գիանին թալին տուրս, էլի գիկա, էլի գթուին, կ'սիմ՝ օչյուար գքոսոդի, գիանին, քընի գթալին՝ գիկա, վնըք, գիկա մդի օչյորի մեծ:

- Ծիա՛ն, - կ'սէ, - Աղա թակավորի օչյորի մեծ, իմ հըյիփ գիանին եղ ախճաց: Գմնա օդի, կիշեր գէլնա էրթա, պղինձ դուրս կեաի, ախճա գիկա կ'սէ. - Էլի՛, տու իմ քընի տարվա աշխասդանք կերեր իս, ըդ օյին հուներ իս ըմ գլուխ, քահ րոդի քցիմ պղնձի մեծ:

Ախճիգ կ'սէ. - Թո՞ղ, էրտամ ըմ աստված կանչին՝

իկամ: Կերթա իշեւ սաղ քնուգ ին, ինչ կենէ՛ չիմնան: Գիշմէ, թակավորի տղեն չիմնա, կ'սէ. - Աստված, տու ընծի Օֆի ծեռքեն փրգին, յոտ կանտեն պղինծ հանդէ գեափի, ընծի գրալէ ծուր էակ: Ժողովրւրտ, իմալ յըս փրգեր իմ ծզի, տուք փրգեր ընծի, ըդ պղնծի մեծ չէափի: Գիկա: Օֆ, կ'սէ. - Ղը՛, քելէ՛: Կ'սէ. - Աստված կանչել իրեք անկամ է, կայնի մեզ էլ երթամ կանչին: Էլի գիկա կանչէ աստծուն կ'սէ. - Ըքքան հոկի իմ ազադի, տու էլ ըմ հոկին ազադէ: Գիկա էլի կ'սէ. - Զելէ՛:

- Կայնի՛, - կ'սէ, - Վերծին անկամ կանծին՝ իկամ: Կերթա զըրգվո թակավորի տոի վրեն՝ քնուգ է, ինչ կենէ չիմնա, սաղ քնուգ ին: Վերծի անկամ աստված գկանծէ, կ'սէ. - Ծովերու ծզնե՛ր, սարերու արձ ու գիլանք, յըս ծզի փրգեցի, տուք էլ ընծի ագարե՛ք, Վերծի անկամն է, ընծի գրալէ պղինծ, կեակ: Ծուգմ' գելնա, կ'սէ. - Կրո՛դ, ցա՛վ, կնա՛, ծըր տան ժողովրափ քուն առեր է, քընցուցեր է, հընդէ շուշի մեծ լցուգ, փողան կախուգ, կնա զըր շուշեն ջարդէ, ժողովրւրտ գիմնան, տոի անգաջ լէ՛ քնի իլու է քց: Օր տու ըղքան մարտ ու ջընվար իս փրգէ, տու լը գիրգվրս: Ամիմի գիկա կիշէ՛ հնդէ լամպուշկի կոդ կախուգ, գարգէ՛ շուշեն կենին հազար կորո, ժողովրւրտ գիմնան: Թակավորի տղեն գիմնա, կ'սէ. - Յոդա զցավա, մեզ կ'սէ իմ թե զցավա, մեզ կ'սէ՝ հոդա գմոնուա, ընքան օր ախմիգ կցնուտեր է ուրանց: Օֆ էլի տառավ գիսկմ', կնաց մդավ օչխրի մեծ: Կիշին՝ ծուր րըխկ, րըխկ կեափի, յոտ կանտեն պղնծի ծուր րիմկրիսկալեն կեափի, ախմիգ կսէ. - Ըդի Օֆ ըմ համար է սարկի, օր թալէ ընծի մեծ՝ էակ, օր ըսի մ'առնէ, չկոցա քու վրեն:

Նոր ախմիգ գպադմէ ուր գլխու գալած, իմալ օր պաղմեցի: Կերթան է գիսկ պերին քըն պղնծի մեծ, օսկրահան գէայի՛ն, նոր ախմիգ օդի կագաղվր, գիասնի ուր մուրագին: Դուք էլ հասնիք ծըր մուրագին:

## ՀՀ (13). ԱՄԿԱՏԱԳՐ

Կեղնի, չեղնի, մէ հաղուստ վաջառագան կեղնի, երեխը չունենը, ինքան կեղնի՝ գմահանան: Կ'սին. - Այ մարտ, էկ՛ քաղքից, քու շեմիգ փոխէ, քգի երեխա կեղնա:

Գէլի եղ վաջառագան, ուր եղած-չեղած, տուն գծախէ, գէլի քաղքից դուրս: Մարտ ու կին շադ կերթան թե քիչ, կնիգ գկայնի ցավեր: Կնիգ ցավեր գքաշա, գտեսնա՝ երգու իրիշտագ գկաննին, է չոլի մեծ կագաղվր, իրեշտագներ՝ կողքի հեդ: Էլ երեխին գվերցուն, պորդ գ'կորին, րան կենին, գտըխն կնգա գիրկ, կ'սին՝ դէ՛ կնա: Կնիգ ու մարտ քիչմ' տեղ գիկան, մարտ կ'սէ. - Այ կնիգ, ըմ դանագ մնաց էնտեխ, կայնի երտամ - պերիմ: Կնիգն կգրկէ րարուր, գնստի, մարտ գէլնա իկա կնգա ագաղվելու տեղ: Գիկա տեսնա՝ հըիշտագներ հանդին նստուգ:

- Այ իրիշտագնիր, տուք գացիք, ընչո՞ւ իք էգէ ետեխ նստեր իք: Կ'սէն: - Եգանք քու երեխի ճակատագիր գ'կրինք: Գրեցինք:

- Ի՞նչ գրեցիք իմ երեխի ճագատագիր:

- Գրեցինք. «Քու երեխեն գմեծնա, քգի գսպանէ, գաննի իրանոր»: Էդ մարտեր գանհայդանան: Էս վաջառագան տիսուր - տրդում գիկա կնգա մոդ: Կ'սէ. - Իմ երեխի ճագատագիր էսայնս գրեցին:

- Ղէ՛, - կ'սէ, - Օր եղախ րան ին գրի, այ մարտ, էդ երեխեն մ'զի հարգավոր չէ, քընք ետեխ երթանք:

Գ'քցին էդ երեխին օդի, գալուլին դնին տեղմ' ու գերթան: Գմնա էդ երեխեն օդի, խժա, խժա, խժա: Մէ հովրկ էն կողմից գիկա: Գգըրգվր էս կողմ, գգըրգվի էն կողմ, աստված, - կ'սէ, - իդա աղոտրնին ի՞նծ երեխի ծեն է գիկա:

Գբողէ օչխար, շան եղեվեց գիկա, կայնի երեխի վրեն: Գիկա տեսնա՝ մէ րալուլ, կ'սէ. «Ի՞նչ էնիմ, ջայնամ, թէ օչխար չկորի, յըս րոդ տանիմ էս երեխեն, հըսում իմ տուն, նոր իկամ»: Ինք էլ էղու կենին, կսէ. «Տանիմ իմ լամգներու հեդ պահիմ. իրեք ին, թըտ էդինի՝ չորս»: Գտանէ կ'սէ. - Այ կնիգ, աղոտրնի հեդ մեր խըսմատ գեեր ինք, մզի տոդեմ՝ լը պերեր իմ, քու երեխեն կողը ծծից, ըղրան պայտ:

- Այ մարտ, ես իմ երեխին շադ պայիի, հիմա եղոր պայիմ. յեսիմ՝ հառ երեխա է, քըտի՛ է:

- Չէ՛, - կ'սէ, - չայախս՝ գսպանիմ քգի:

Վերծ, գպայէ էդ երեխեն, կենին չորս-հինգ տարեգան, կերթա խաղալու: Երեխեք կ'սին. - Չոլի պայուոգ լագո՛դ. էգիր իս մզի՝ գգըրգիս: Երեխեն գիլա, գիկա, կ'սէ. - Մամա, ընծի չոլի՛ց իք գրի, ընծի կ'սին՝ չոլի գորոց լագոդ: - Չէ՛, լառ, օ՞վ է կ'սէ: Կ'սէ. - Երեխեմք: Սեր գիամոգէ, գիանգստացու, միսօր կերթա՝ էլի կ'սին: Իրեք օր ըղենց կ'սին, երեխեն գիկա մոր կ'սէ, օր երեխեք ընծի չոլի լագոդ կ'սին, յըս րոդ կենից երթան: Մեր գիսնտրվր, գաղաչէ. - Այ լառ, մ'հավդնա, երեխա ին, սուտ կենին:

- Չէ՛ օր չէ՛, - կ'սէ, - յըս րոդ երթան:

Լալով՝ մեր գտոր ճամպու: Էդ երեխեն կերթա:

Դառնանք վաջառագանին: Գէլի քաղքից, հեռու տեղմ', շենքմ' գշինէ, կաքրի: Կերթա էդ երեխեն էդ պահի տագ, հով տեղմ' գընի: Աերն էն յանից կիգա, կիշէ էդ երեխի վրեն, գիլա, կիշէ՛ գիլա, կ'սէ. - Չոլնա՝ քու տիրու ամկեր, էդ ի՞նծ երեխա է, էգ ըմլա իդը պադի տագ քնի:

Գառնէ - երթա: Գտանէ - երթա, կ'սէ. - Այ մարտ, երեխեն էգ, քնէ մեր պադի տագ, ճանցեր թափիր ին վրեն, հըմալ ըմ սիրդ գմիկդա էդ երեխի վրեն (դէ՛, անդեր մնա, ջիգար է): Մարտ ու կնիգ գիլան էդ երեխի վրեն, կ'սին. - Ընչո՞ւ իս էգի քնի օդի: Կ'սէ. - Անդեր երեխա ին. հեր, մեր չունին:

- Ղէ, օր անդեր իս, քգի գպայինք, գենինք մզի

տղա, էրեխա չունինք:

Գպային էդ էրեխին, գմեծցուն: Օրմ' էլ գտրին բային պահազ, գտրին բաղի առեճ: Կնիգ կ'սէ. - Այ մարտ, էրեխեն չ'կոնա բաղ պայտ, գենքմ' տուր, էրեխեն գենքի հեղ գիսաղա, գշիշլցու, գոռեղ գիտինին:

Կիդա: Օրմ' էլ հեր կ'սէ. «Էրտամ տեսնիմ էրեխեն կոնա» պայէ, օղո՞րտ գվախենա, կոնա» կրագէ»: Գէլնա - էրթա, օրտողի տաղ գլխոցու - շխոցու, հաղող գքաղէ, եղ էրեխեն գենք գքանը: Թը՛պ, հեր սպանվավ: - Կէնե՞ր գողություն, - կ'սէ տղին: Գիկա իշէ, օր իրան պայողն է: Գիլա, գ'տպէ գլխուն, հրվար գքցէ, թէ սպաներ իմ իմ խըգեին: Ե՞, ի՞նչ էնին: Տարան թաղեցին: Եղ կնիգ ըսեց. - Տղա՛ջան, էլ ո՞ւր էրթաս, մանցի էս բաղին ափրություն էրա, տեսնինք ի՞նչ գէղնա:

Տղեն զմնա, տեր կէղնի բաղին, կէղնի քսան տարեգան, օրմ' էլ էդ կնգան կ'սէ. - Ես կառնիմ քգի, են օր էդ ունեցվածք կէղնի ուրիշի՝ հըգուր, ես էրեխա վսիստից պակեր իմ, յըս գ'կայնիմ քու տան ու տեխին, տու էլ ընձի:

- Տղա՛ջան, ախր ես մենծ իմ, քու մոր բայն իմ, տու էրեխա տղա, յըս իմա՞լ առնիմ քգի:

- Չէ՞ օր չէ՛, ըստ առնիմ քգի:

Բար կդրավ: Մի անկամ ըսեց, էրգուս ըսեց, մոր իսելք լցվավ: Ծսեց. ճիշտ է, ըստ էրեխեն, օր էգեր ը այայեր իմ, բաղին տեր է եղի, թող էնի էդ ունեցվածքին տեր, յըս մենծ իմ, գմահանամ, ինք զըելը ո, զմնա գէղնի ունեցվածքին տեր: Մերն է համոզվավ: Օրմ' էլ ծնոքեց՝ ըդոր ծձից կաթ հոշվավ ուր քիթ ու րերան, եե՛ղ կանավ: Սէ իրեք անկամ փորձվավ: Էղանս էրավ, տղեն հեղ քաշվավ: Ըսեց. - Տղա՛ջան, արի՛ տու քու գլխու գալիք ըստ, տեսնինք էդ ի՞նծ է կէղնի մեր մեծ:

Տղեն պաղմեց, թէ՞ էսպես իմ էղի. ընձի չոլի գդուգ էրեխա ին կանչի: Սէ ավուր ծնված իմ էղի, տարեր ին պասիի, թողեր իմ հետեցի: Էղի տղեն պաղմեց: Մեր էլ ըսեց. - Էրեխա չունենք, երիշտագ էր, թէ ինչ էր, օկնեցին, էրեխա ունեցա. ըն ցավեր պրնեց չոլի մեջտեղ, դանագ մոռցա օն: Ներո գնաց ըդոր տեր կայներ դանգին՝ հրիշտագներ ըսին. «Քգի էրեխա կէղնի, բայց գսպանէ քգի, կառնէ քու կին»: Եղ էրեխի ծագատագիրն է՝ «Կսպանն ուր հեր, կառնն ուր մեր»: Ուրեմն, տու իմ էրեխեն իս, - կ'սէ մեր: Նոր օդի էղան մեր ու տղա, նիատուվան, լաշին:

Բագատագիր եղմլա բան է, ուր կոնաս փախնիս, լառ:

## 12 (14). ԳԵԶԻ ԲԱԼԻ ՀԱՎԱՏԱԳԻՐԸ

Կէղնի մեգ բագրգան, գիկա մէ գեղի կշտին վլան կգարկա: Կտիսնա գեղ իրմեն քնուկ ին, մէ տուն կա, էտոնց ճրագ կվասոի չուրի լուս: Նեռվանց կիրիշկա, կասա. «Կա - չկա, էստեղ ավսգակներ ժողվեր են,

կուգեն իմ ապրանք գողնան»: Լուսու դեմ կտիսնա, իրեք սիվտակ շորիրով մարդ գիկան՝ մեկ էրեխա ուրանց գիրկ: Կասա. - Տու ի՞նչ մարդ եք: Կասա. - Ես տան կնիկ իրկուն ագատվեր ա, մենք էտա տղի ծակատագիր կրինք, տու լէ քու վլան՝ էս կիշիր գարկիր, քու թակավորի աղջիկ տի տաս էնոր:

Բագրգան ուր գինվորներին կասա. - Կտանից էս էրեխեն կմորթեք, շորեր արնոտ կպերեք:

Էտոնց կտանին էրեխին, կտնեն մեկ մեշի մեջ, շորեր կթաթիւն մեկ ուլու արնով, կպերեն: բագրգան գէնի կպտուտա, էլ ետ գիկա էտ գեղի կշտի խետ: Էտա գեղ մեկ պառավ կէղնի, ենօր մէ խատ էծ կէղի, լավ կաթով էծ կէղի, օրվան՝ չորս լիտր կաթ կտա: Օրմ' էլ պառավ կիրիշկա, օր իծու պլոկներ կաթ չկա, կեթա չորներու վրեն կոփի: Չորներ էրթում - իսեխսում՝ մենք չենք կրտ: «Պառավ օրմ' էլ գրնկնա իծու եեղն, կերթա կիրիշկա, օր ուր էծ կեթա մեշի մեջ, պլուկ կտնա մեկ էրեխու պերան: «Պառավ շատ կուրինա, կառնա էրեխեն գիկա տուն, կպախա, անուն կընա Գեչի բալա: Եդ Գեչի բալեն կցողնա, կէղի տասմինգ տարեկան: Օրմ' էլ էն բագրկան գիկա էտա տեխն կասա. «Էրտամ էրկու գինվոր էտ գեղից պերեն, թո իմ ապրանք պախսեն»:

Տու մի ասա, էտ տղեն շատ անունով: ղոշախտդա կէղի, ժողովուրդ կցուցեն էտ Գեչի բալին: Էտոր ոնցիկ կտա, կտանա ուր խետ: ճամբիին բագրգան իսարց-փործ կէնա տոյին, տղեն կպատմա ուր գլխու գալած: Կասկած գընգնի սիրտ, կ'կանչա ուր գինվորներուն, կիսարցու: Էտոնք կասեն. - Վալա, էտի էն տղեն ա, քեզի խարեր ենք, մեղքացինք, չէ՞ էնոր ծակատագիր մենք կրեր ենք:

Բագրկան կ'կատղի, մեկ թուղթ, կ'կրա, կտա տղին, կասա.

- Տղա՛ր, էս թուղթ թակավորին տու: Դըմա թղթի մեջ կկրա, օր տղին խետ հասնելում՝ սպանին:

Տղեն շատ ու քիչ կեթա, կիսասնի թակավորի էրկիր. Իըմա թաշկուկ կէղի, կպառկի լուսամուտի տակ, կընի: Թակավորի աղջիկ լուսամուտից նամակ կտիսնա, կիանա էտ նամակ, կ'կարտա, կմեխկա էնոր: Կվերցա կվառա, թագա կ'կրա, օր էտ աղջկան տան էտ տղին: Տղեն կգարթի, նամակ կտանա թակավորին: Թակավոր կ'կարտա, աղջկան կտա էտ տղին, խարսնիս կէնին, կուրիսնան: Բագրկան օրմ' գիկա թակավորին խոնախ: Գիկա կտիսնա՝ գարմանք կթափի ուր վլան, կասա. «Վալա, էն մարտեր ծիշտ ասին՝ էս, էլ էնոր ծակատագիրն էր»:

## 13 (15). ՄԻՆԱՄ ՀԱՎԱՐ ՀՀԿՅԱՑ

Ժամանագով գէղնի մէ խեղջ գնիգ, մէ դղջ գունենք: Ըղ իսեղջ գնիգ ոչ մի աբրուստ չունենք. օրեգան

գերտես իրանց թիթրեն հօվոքեն, պերեն: Ըր մեզի չեղներ, գիշվկեն ըդ թիթրեն դանեն, ըր իրանց մէ թիկը հաց իդեն: Մի օր էլ գերտան լու, ուրեմն, գկղնան մէ սիրուն թերուրկ, թը ինձ թենուրկ ը իրանք ըն իմանը: Գպերին իկան դուն, գտրին լուսամուր, իրանց փոքր քոյսմ' գէղնի, գարին ըդ լուսամուդ: Իրգուն օր գէղնի, առանց ջրակի ըդ թերուրկ լուս գիդը: Ըդ ժամանագ գիկը թակավորի վըգիր, գընցնի ըդուց դան մոդով, գդեսնը, որ ըդրանց դան մեծ լուս ը գվատի, թը հ՞նձ լուս ը մարտ չկինը: Գտառնը եղ, գըսը. - Թակավոր արրած կենաս, մէ իւեղ գնիգ, իրա լուսամուդ պասմուդ տրուգ, գվատի, լուս ը գիդը, հօւր գանճը րառվու դդին, դիս ըդ հ՞նձ լուս ը:

Գըստը գըսը. - Բու դդին թակավորն ը գ'գանճը: Բառար գըսը. - Թակավոր հ՞նձ կորդ ունը մըր իիդ, մըկ իւեղ ընդանիք իք, հ՞նձ գըսը ըմ դդին:

Գէլի ուղարգը դդին. - Բալը, կնը հօւր նայը՝ հ՞նձ գըսը թակավոր:

Գէրտը: Թակավոր գըսը. - Դդա ջան, քու լուսամուդ հ՞նձ ը գվատի: Գըսը. - Թակավոր արրած կենաս, երեգ յս ու ըմ մամ կացիր ինք թիթրենի, մէ հադ ըըրուլ իկ կդի պերի, պայց չըք իմանը ինձ ը, տրիր իք լուսամուդ, լուս ը գիդը: Գըսը. - Կնը թերուրկ պի՛ աըի: Գտառնը դդին ուդարգը, գիկը թերուրկ պերը իդը թակավորին: Թակավոր գտրը պայլատի լուսամուդ. իրգուն օր գէղնի, ըմբեն գլուսավորը ըդ շենք, հօդրես՝ փայլ գիդը աշխորիե-աշխարի: Ըդ վըգիր, ուրեմն, ըդ օրվանից գնահաւննվի, գըսը. «Ուրեմն, թակավոր ըդ դդին ավելի շադ գսիրը, գընտունը, քան ընծի, յս հ՞նձ ենիմ, որ ըդրա կլուխ աղամ»: Գմբնի թակավորի մոդ, գըսը. - Թակավոր արրած կենաս, եսի թերուրկ ը, որ ըդկան լուս գիդը, ըրօր ըդրա դեր ենիմ՝ ինչքան լուս գիդը: Գըսը. - Ըրը ըդրա դեր հ՞նձ հնարով դդի եղնի, օ՛վ գպերը: Գըսը. - Թակավոր ջան, թերուըկ պերոդ ըդրա դեր լը գպերը:

Գէլի թակավոր ըդ իւեղ դդին նորից գ'գանճը, գըսը. - Սնպայման ըդրա դեր դդի պերիս: Դդեն լը գըսը. - Թակավոր ջան, յս ո՞նց պերիմ ըդրա դեր, ըդի րադահագան կացիք թիթրենի, յս ըմ իւեղ մեր, կեդին քցուգ էր, կդիր ինք, ըրը յս իրա դեր ո՞ւրդից պերիմ: Գըսը. - Ըն հաշիկ չէ, քառուն օր քգի ժամանագ, պերի՛ պերիք, չէ՝ քու կլուխ գգըրդիմ: գէլի դդեն լալով իկը մոր քով: Մեր գըսը. - հ՞նձ եղավ, ընծի՝ գիլաս, այ՛ րալամ: Գըսը. - Թակավոր գըսը անպայման ըդրա դեր դդի պերիս: Գըսը. - Լառ, կնը ըսը. - Թակավոր արրած կենաս, դուք թառասուն դեք, քառուն պեռ պրինձ, իրանց պեռներով, դուր ընծի մէ ծի, իրգար օսկի, պայծ դդի վըգիր փոդեն եղնի, քու փոդեն եղնի՝ չըն էրտը:

Սեր իմաստուն գէղնի, հըսկցա՞ր, գիմանը ըդուր:

Վըգրի իյորամանկությունն ը: Առավոդ թակավոր գրադրաստը ամեն ինճ, մեր գմնը օդի, ղղին թամրը գէնը գըսը. - Գէրտան ըմ կինը որ սար, (անուն ղվիրը ըմ հայրիգ, պայծ յըս մոռոցիր իմ), գէրտան ըդ սար, ըդ կմեք գմորտիս, իրանց փորիր լոիկ գթայիս, ըդ պրինձ գլաս ըդուց վորու մեծ, տու լը մեզի փորի մեծ գմնիս, պահիկվոս, ըն վախտ օր պոլուր ղշիր գիկան, Սինամ հավք լը գիկը, երգու անգամ գտրը - գընի, երրորդ անկամ ըը տրից չըռնի. ըդ ժամանագ ուրիշ ղշիր իրան րադիկ գէնին, ըդ վախտ՝ ծեռդ գըրլիս պոնիս Սինամ հավքի օդկից:

Սեր ինչպես թըմրը գէնը, ինք լը ըդենց գէնը: Գէրտը ըդ սար. պրինձ գլը ըդուց փորու մեծ, գդեսնը՝ Սինամ հավք իճավ էրգու անկամ ծափ գիդը, գնստի - գընի, երրորդ անկամ գիշընի պրնը, վոագ գէլի նստի իր ժին ու հայդէ: Ուրեմն, եռունինն օր անցիր ը, ոդի քառուն օրվա վուն՝ պերը Սինամ հավք իդը թակավորին: Եռունինն օրվը իրգում՝ գիշընի իրա մոր մոդ, մեր գըսը. - Բալը, դար դուր, արի: Գդանը իօգուն իդը: Թակավոր դուշ գտրը իը շենքի մեծ, իրգուն օր գիկը, ըմալ գճլվը, օր սադ քադաք գգաըմանան ու գգվաըմանան: Սինամ հավքու համրավ գընգնի աշխորէ-աշխարի, գգարմանան՝ թը Սինամ հավք ո՞նց ին պրնի:

Վըգրի օր էգավ դեսավ, օր թակավորի պալատ Սինամ հավք տրվավ՝ պվելի պայտավ - մեռավ, ըսեց. «Ինձ ջար ենիմ, որ ըդ մարտուն կործանին»: Էգավ ըսից. - Թակավոր արրած կենաս, ես պալատի իիդ, ես Սինամ հավքի իիդ քու շենք չսագը, ըդրա իիդ դդի քու շենքի րադիր երնի ֆլի օսկոից:

Ըրը. - Ըդի ո՞նց գէղնի, օ՛վ գպերը: Գըսը. - Սյ մարտ, Սինամ հավք, օր էրգուց պերը ը, ըդի չգը՞ննը պերը:

Էլի գ'գանճին ըդ դդին, թակավոր գըսը. - Բդի էրտան Ֆլի օսկոս սերիս, ըմ շենք Ֆլի օսկոով շարիմ: Էլի լալով դդեն գէրտը դդին, գըսը. - Նիմը լը ֆլի օսկոս ը գուզը: Սեր գըսը, - կնը ըսը, - թակավոր ջան, դդի ընծի քառուն դարվաս կինի պերիս, իցուն ծիու պեռ՝ կինի: Ուրեմն, լա՛ո, ըդ կինին գդանիս, էրտան մէ ամայի դաշտ, (մոռոցիր իմ, ահյո, ըդուց աննիր, դդի մարտ հիշը, օր լավ ենիմ, թը ո՞ր էրգիրն ը), գլաս ըդ կինին ախարի կոների մեծ, հանդը դեսօրվա շոկին՝ արտեն ըդ ֆլիր ծառավ ին, (ֆիլ, կինա՞ս, փիղն ը) գիկան, ուրեմն իմին ըդ կինին, սադ գ'գիտին, գընգնին: Ըլ գէլիս գքերտիս, իրանց օսկոնիր գպանաս ծիու վրեն ու գիկաս:

Դդեն ըդ ծեվով գէրտը ըսը թակավորին: Թակավոր մուտ ու լուս գրադրաստը: Պայծ գըսը՝ վըգրի փոդեն եղնի:

Դդեն առավոդ շուտ, ըդ էդած գդանը էրտը. թը քրնի օր, թը քընի ժամ, գիշընի ըդ աշխարի: Գլը մաքը ճրի կոնիր, ախարի ագ գիդը մէ յանի վուն, կինին

գլը կրնեցու մեծ ու ինք գպախսկվի: Գդեսնը՝ գեսօրվա շոկին ըդ փոփր լրիկ վազ-վազ էգան, խմին, հայրան ու լցվան կեղին (քամբախ եղնի հըկյատ, հա՞): Դեն էր, գէկի քերտը Ֆլիո, օսկրնիր պատնը ծիաներու վիեն ու գիկը: Գիկը, ուրեմն, էտունինի իրգում՝ գիտնի քաղաք, գդանը թափօ թակավորի տուռ: Սոավոդ գէկի վզգիը, օր գդեսնը պէրիր ը, ավելի գտրակվի, ավելի գմիոնի, գըսը. «Սստված ջան, ի՞նձ էնիմ օր ըրբա կլուկս ուղիմ»: Գէրտը էլի թակավորին գըսը. - Թակավոր ջան, էս Ֆլի օսկոհ իիդ բդե շմշադ փեդ էդնի, օր քու առիկ ծածկը: Գըսը. - Ըբք ըոն օ՞վ պերը:

- Մխապեր, - գըսը, - մ'հարցու, Մխնամ հավը պերոդ օդի լո բդի պերը: Էլի գգանճին ըդ դդին: Սէ խոսքով, օդ խենք դրե՛մ մէ բերուըկով ընազվ գըսագ: Գ'գանճին, ուրեմն, դդին գըսին՝ շմշադ փեդ բդի պերիս: Գէկի դդեն էլի տխուը. էրտը մոր քով: Միր գըսը. - Լառ, ցրան գուգիս հըզար օսկի, մէ հադ լավ ժի, մինագ ըսը՝ Վըզը փողեն էդնի: գէրտաս Ֆլան էրգիր. էրգու փարչ գիդամ բգի, էրգուս լը՝ ծագ, գդանիս, օդի մէ վորուգ բառաք գանը, ինկ մարտ ուդոդ ը, բգի օր գդեսնը՝ գուըխնը, գըսը. - Լա՛ն, աըի՛, աըի՛, գիյուրասիրը, պան գէնը, պայց տու ըսը. - Չէ, մամ ջան, յըս ծառավ իմ, էս վարչ դար, ճուը լից սիկր արի՛. ճուր իկակ հաց ուդիք: Յընդը փարչ օր դարավ-կնաց, ծագ ը, մինչև ինք խաղը իիդ, ըլը՝ տու մէ ծիբոտ, մէ հադ ծառի ջուր պոգիս, էլ քու էրկի չնայիս, մինչև մըս սաեման ընցնիս: Սոավսդ շուրդ դդեն գէկի ընգնի ջամպը, թը քընի օր, գիտնի ըդ աշխարի, գիտնի ըդ բառվու մոդ, դէսնը, օր բառաբն ը. օջախ վասիր ը ու մարտու յը գսպասը: Յըմօր դեսավ դդին, ըսեց. - Ո՞ւ, լառ, ըմ ամկերու վըն էգար, տու ո՞ւրդից էգար, լառ, պարով էգար, թաշկուգ իս, սոված իս, քելը՛, քելը՛ հաց ըլամ, գի՛:

Գըսը. - Չէ, մամ ջան, ծառավ իմ, էս վարչ դա ը, մէ քիշ ճուը պիծ խմին, ճուը նստիք խաաք, ուդիկ հաց:

Վըլը, բառաք գանը փարչ, ուրախ-ուրախ վըզը ախապը վիեն, քընի գլը՝ տարդագ ը, քընի գլը՝ տարդագ ը, քընի գլը՝ տարդագ ը, գըսը. - Սստվսծ, ըդ ի՞նալ ը, (էլ չտա՞դը, օր ծագ ը): Սէ խոսքով, գգաղով, դրեն մէ եադ ճիրոտ գայոգը, գնստի ծին ու եա՞յդէ, մինչև իրանց սահման եղ չտառնը. բառաք թըխ էրտը ընդեն դարգվի: Գիկը իրանց սահման գանցնի, գտառնը էրկ, ի՞նձ տառնը՝ կերան շարվիր ը էդիկ գիկը (քամրախ էդնի սիկր), գպերը ուրեմն, հըլը իրիք օր բագաս իրա պայմանից, գիտուր թակավորի պալասի տուռ. գշարը կերնիը, գէրտը իրա դուն: Սոավոդ վըզիր, օր գիկը դեսնը, գըսը. «Այ մարտ, ջար չկը, օդի օր ըն վորուգ բառվուց բըձավ էգավ, ըդուր ջար - իլաջ չկը, ի՞նալ էնիմ»: Թակավորի պալատ գսարկին, ինչ որ րետկն ը, աշխրէ-աշխսը ծեն գիդը, թը՝ թակավոր էդրես պալատ ունը,

էգրես Մխնամ հավը ունը, էս ունը, էն ունը:

Էլի գիկը վըզիր նախանձությունից գըսը. - Թակավոր ջան, էս շենքի իիդ, Զախչախ թակավորի ախճիգն ը քգի բետկ, բդի ընդուր ախճիգ պերիս, ըդ շենքի իիդ վայելիս:

Գըսը. - Օ՞վ գպերը: Գըսը. - Այ մարտ, օր գըսիս օ՞վ գպերը, յըս գգարմանամ, ըդ դդեն, օր հավըն ը պերի, ըդի բդի պերը:

Էլի գ'գանճին ըդ խենք դդին գիկը, դդին գըսը. - Բդի էրտաս Զախչախ թակավորի ախճիգ պերիս ընձի: Դէն էլու գէրտը, մեր գըսը. - Ի՞նձ եղակ, լառ: Ըբք, - գըսը, - բդի էրտաս Զախչախ թակավորի ախճիգ պերիս ընձի:

- Լա՛ն, ըդի մնաց տու քու աստված, գնգա սեր ը, ըդե չըմ կինը, կնը էրգու հըգար օսկի, մէ հադ լը բլու ուզգը՝ արի, պայօ ըսը՝ Վըզը փողեն էդնի: Գէրտը ըդքան գուզը, առավոդ շուրդ պաղրաստ գէղնի, գէրտը դդեն վերու, աստված գանճը ու ընգնի իրա ճամպեն էրտը: Սէ խոսքով, բառաք լը գտառնը հարուստ, ըդ փողով, օր իրանց դվիր ին, իրան լը պալատ գսարկին, դդեն լը ուրախ - զվարը գէրտը: Գէրտը շադ, քիչ, գիըսնի մէ աշխարի: Գդեսնը՝ կեղեն ջորուգ ը. դդեմ' լը անգամ արիր ը վրեն: Գըսը. - Ի՞նձ իս տրի քու անգամ ըդ ջորնի վրեն: Գըսը. - Այ դդա, հըլը յոտ դարի մէ հադ ասեդ ը ընգի ըդ արանկով, հըլը գշնգը ու գէրտը:

- Է՛, քու դուն շինվո, քու սդերուն, ըդ ի՞նալ յոտ դարի ընգավ օդի պսիդ ու հըլը ծեն լը գիկը: Գըսը. - Այ մարտ, ըդե շա՞դ դժվասը ը. գըսին՝ Մխնամ հավը, էրգնկից ին պոնի, ըդի գարմանք չէ, ըդ ասդի ծեն քդի զարմա՞նը ը: Ըբք, - գըսը, - ըդ Մխնամ հավը յըն իմ պոնի: Ուրեմն, գըսը. - Յըս քդի ախպեր, ո՞ւր ը գէրտաս: Գըսը. - Գէրտամ Զախչախ թակավորի ախճիգ պերիմ մըր թակավորին: Գէկին էրգու կենին ընդեր, էրտամ: Շադ ու քիչ գէրտան, դեսնան մէ մարտ նստիք ը ծառու դագ, գվիճը, ըդ ծառի տերևնից գիսադան ծառու վրեն: Էլի գգարմանը ըդ դդեն: Մյուս դդեն գըսը. - Այ մարտ, Մխնամ եավը պոնի ին էրգնքուց, ըդըա վոե՞ն գգարմանաս: Էլի գըսը. - Յըս իմ պոնի: Գըսը. - Յըս լը ծգի ախպեր: Գէրմին իրեկ ախպեր, գէրտան, շադ ու քիչ գէրտան, գիանդիին մէ մարտու. գդեսնամ՝ յոտ ճադագ գըշիւղե, յոսի ալուր լը գուդը, գէկի գըսը. - Սովուծ իմ, մետը սոված:

- Է՛, - գըսին, - քու փորու ջրակ չիճնի, ըդ ի՞նալ ը, յոտ ճադագ գլիգիս, գըսիս սոված իմ: Գըսը. - Ըդ ի՞նձ տժվար պան ը, սոված իմ, օր օր Մխնամ հավը պոնի ին էրգնքից պերիի: Գըսը. - Յըս իմ պերի: Եդան չորս ախպեր: Գէրտան, շադ ու քիչ գէրտան, գդեսնան մէ մարտ իրա էրգու վըտկից գախիջ ը ճադացի քար ու գֆոցու, գըսը՝ թեթիկ ը, ուրիշ քար պերեք: Էլի գգարմանը դդեն, գըսը. - Ըդի գարմանք չէ,

զարմանք էնք, օր Սինամ հավը էրգնքից պերի ին: Մէ խոսքով, ըդ Սինամ հավքի ծեն ընգիր ը աշխրտաշխարի: Ըղրանք էղան իհնգ ախապեր: Գերտան շադու թիչ, գդեսնան, մէ մարտ նշան ը պոնի գգըրգը:

- Ո՞ւր ը գգըրգիս:

- Է՞, ֆլան քաղաք, նշան իմ տրի, բոյ գըրգիմ թոում:

Գըսը. - Է՞, քու վոկի ջրակ չիճավ, ըդ սփիր ո՞ւստոյ յը, ըդ ի՞մալ ըդ դեխեն օնի գգըրգիս: Գըսը. - Ա՞ մարտ, ըդ ի՞նծ տժվար ը, իհմը գըրգիմ թռում, ըբը օր Սինամ հավը էրգնքից իհն կոի պերի?: Ըբը յըս իմ: էղան վոյ ախապեր: Գերտան, գերտան՝ ի՞նծ դեխնան. մէ մարտ դվիր ը սելավ առած գիւմը, գելի գըսը մեռը ծառավ,

- Օ՞, քու ջրակ չիճավ, ըդ ի՞մալ ըդ խոջը առուն գիւմիս ու գէլնիս ըսիս յըս ծառավ իմ: էդ լը գգարմանը, գըսը. - Սինամ հավը էրգնքից պոնիր ին, զարմանք չէ, ըդի գարմանք ը: Գըսը. - Յըս իմ պոնի: Ուրեմն, յըս լը ծգի ախապեր: Էղան յոտ ախապեր:

- Ո՞ւր գերտաս, ախապեր ջան:

Գըսը. - Յըս բոյ էրտամ Զահիշախ թակավորի ախափի պերիմ ըմ թակավորին: Գըսը. - Դը՛ քելե՛ք:

Յոտ ախապրով գերտան: Գերտան, գերտան, հըսնին թակավորի քաղաք, գերտան նստին թակավորի ինամատորի վոեն: Թակավորին խըրար գդանին, թը յոտ գդրիծ դդը էգիր ին նստի ինամատորին: Ըբը. - Կնացեք պայման տբեք իրանց առած, ըդ պայման գաղարեծի՞ն, ախմիգ գդանին, չէ չէ: Ըբ՝ ի՞նծ պայման, ըրը. - Սըր ախմիգ իիվանդ ը, բոյ էրտան անմահագան խնձոր պերին: Սզնը լը ուզող գը, օվ շուտ պերից, ախմիգ իրան: Ըդ դդեն, օր ծաղցի քար գֆոցեր գըսը. - Տուք մացեք հօս, յըս գերտան:

Ըղուր հիդ ծծում հեծնոր բառար մը գտրին, գէլին ընգնին ջամագը: Ըդ բառար խստրի գէղնի, գըսը. - Լա՛, արի նստի, վշշում՝ հանգստանանք, քու կլուխ իշիմ, նուր էրտանք, ի՞նծ գվուազնաս, թակավոր նը էլի, օր ըսից ի՞նծ:

Գէլի իսապր որին, իճու, նստցու իրա չոքերուն ու քնի իլուն թըլը անգած: Ուրեմն, ըդ սադի անգածուող, չէ օր յոտ դարի ըդ ծենն ը լսի, գըսը. - Դդե՛ք, մըր ընգերոց իծուց բառար, քնի իլուն թըլից անգած ու կնաց: Նշան տրոդ գըսը. - Տու սուսե՛ք, յըս իհմը գթոում ըդի իրա անգցեն, ըդ դեխ նշան գպոնը: (Է՞, քու սդերու խեր լո գորի), գթոու անգցեն ըդ իլուն: Դդեն գէլի՝ բառար չկը, գէլի հիդ էղևեն, ուրեմն, թը ուր գիւնի ու գընցնի: Բառար գթոու թըլը՝ անգած չէնք: Մէ խոսքով, գերտը պեր իհնձոր, իհը թակավորին: Թակավոր ըղդեխս համածայնություն գիյոյ: Պայժ ըդդեխսի մէ նախանձ մարտ գէղնի, գըսը. - Թակավոր արրած կենաս, մէ պայմանով ախմիգ գիդա՞ն, էլ պայման տի ըդուց առած: Ըբը. - Ինծ պայման տրիք: Գըսը. - Պերիք իսապիք ըսիք՝ քեֆ գենիք, թույնավոր-

ցուք ըդուց, ախմիգ ո՞ւ զիդաս դանին: Սսդի անգցտրոդ իմաստուն ը, գըսը. - Դդեք էղբես պան ը գէնին:

Փոդ չալոդ, օր տերևնիր գիւադցու, գըսը. - Ըդի ըմ հոկու բարտկ էղնի:

Սեղան օր գսարկին, գպերին տարելկեք տրին, գդէսնը, օր իրանց տարելկեք թույնիր ին, մյուսնիր մաքուր ը: Գըսը. - Թակավոր արրած կենա, մզի օրենք ը, բոյ հար ուրելու ժամանագ՝ մէ հար բլուլ չալիք, նուր հար ուրիք: Գըսը. - Չալե՛ք: Գ'չալր. տարելկեք գիւանը օդ իսադցու, ըղրանց մաքուր տարելկեք գպերը իրանց առած, իրանց լը ըդուց:

- Դը՛, - գըսը, - գերե՛ք: Գուդին, իրանց սեղանի նստողնիր գ'մեռնին: Ըդ չար մարտ թակավորին գըսը. - Ղեսա՞ր ինծ էնցին, ինչքան վնաս դվին մզի, արի դանիկ ըղուր ըլաք մէ մարակ, ծուր թոդիկ իրանց վրեն, թըլս ուրին - մեռնին: Գդանին թոդին, ուրեմն, յոտ ախապեր մէ մարկի մեճ, ծուր վերևեն գ'գարին իրանց վրեն: Ըն դդեն օդ ծուր գիմեր, պերան գիդը առած, մինչև լուս ըդ ծուր գիմը, (Է՞, սդերու բարգ), առավոդ գէլին իշին, օք՛ չուր, ըըմաք, յոտ ախապեր իըդրար, սըլըմաք էլան տուրս: Միյաբեր, - գըսը, - ըդուց ջտր չէդնի, ի՞նալ էնիք: Թակավոր գըսը. - Ա՞ մարտ, հըլըթը ըդրանք գդրիծ մարտ ին, յըս ըմ ախմիգ գիդամ թըլս դանին. ի՞նծ գէնին, թըլս էնին: Գէլին ախմիգ իդան: Վըլը, թակավոր առոք-իսառոք գտրը ըդուց ջամպու, գիկան: Սմեգ ախապեր, ուրդից օր հանդիր էր ըդ դդին, ամեգ իրա դիիս գգայնի, իրա պոստի վոեն:

Դդեն գիկը, ախմիգ իդի, գիկան հըսնին իրանց քաղաք, ի՞նծ դեսան: Գիկը դէսնը, օր վոգիր հանդը թրիք շըլագ, շըլգիր ը գոտով գդանը թավլը, ուրիշի նոքարություն ը գէնը: Թակավոր լը՝ մահացիր ը: Գպերին սադ քաղաքով տրին դդին թակավոր, ախմգան էնին թակուիի, յոտ օր, յոտ կիշեք էնին հարսնիք, հըանք հըսին իրանց մուրագին, տու լը հըսնիս քու մուրագին:

## 14 (16). ԲԱՌՎՈՐ Թ-Ա-Ջ

Գէղնի, չէդնի, մէ իսեդը բառար գէղնի, գունենը մէ թոռ: Ըդուք մէ հավ գունենան. օբեգան թոռ ըդ հավու հավգիր բոյ դանը բագաք, ծախսը, իրանց հաց պերը՝ արրին: Սմեն օր մէ դըվուշ բարամ՝ ը գառնը ըդ հավգիտ, թը բագաք դաս կոպեգ ը, ինք քսան գիդը, առնը: Թոռ գիկը, իրա տադուն գըսը. - Տադի ջան, մէ դըվուշ բարամ՝ ը մըր հավգիտ գառնը, րագար դաս կոպեգ ը, ինք քսան գիդը, առնը:

Պայժ ըդ տադին գիըսկնը, գըսը. «Ուրեմն, ըդ հավգտի մեճ մէ պան գը, օդ ըդ դըվուշ բարան գառնը»: Օրմ' չէ, երգուս չէ, մէ քընի դարի ըդբես գարընին, մէ օր լը թոռ գըսը. - Բդի անպայման ըդ հավ դանիմ ծախիմ: Բառար գըսը. - Ա՞ կառնուգ, մ'դանը,

ըդ հավն ը մզի բըհող:

Գըսը. - Չէ՛ օր չէ, բդի դանիմ ծախիմ: Ի՞նձ գենը բառաբ՝ ըղրա վրեն չգրոնք: Գդանը եավ, էլի դըվրեց բարան գիանդրի, թը հավ բազար քսան մանետ ը, ինք՝ քառասուն գիդը առնը: Դդեն իյտրի գէղնի. գնայը դըվրեց բարային, գըսը. «Ղեսնամ հավ ո՞ւր ը գդանը»: Գդանը ֆոնչու մոդ իդը, պըսը. - Ֆոնչունչի ջան, էսի գարմրցուս, մինչև յըս տառնամ իկամ բագարեն:

- Յա՛, - գըսը, - աչքիս վիեն: Վըլը, ըղրա էդակից դդեն գէրտը, մէ հաղ ուրիշ հավ գառնը, դդեն լը լավ իյտրի գէղնի, գայերը իդը ֆոնչուն, գըսը. - Ֆոնչունչի ջան, ջամպորդ դդը իմ, ը՞ն գարմրուգ հավ դու ընծի, էսի ա՛ո, գարմրցու, տի դեն:

- Այ մարտ, - գըսը, - չէ՛, չէ՛, ըդ մարտ հավ պերի ը, իհմը էգավ՝ չջանճնը իրա հավուն:

- Այ մարտ, - գըսը, - հավ՝ հավ ը, ա՞ն էսի գարմրցու, տիր ընդեի, ընի դուր ընծի, յըս վիագ իմ, ջամպորդ գէրտամ, ըմ ընգիրնի կացիմ՝ չըմ երսնի:

Սէ խոսքով, շադ իյնտրելուց՝ ըդի գառնը ըն հավ, ըդ հավ գիդը իրան: Գդանը էտր շադ եեռու, ըդ հավու փուր գպանը, դեսնը՝ մէ լավ, սիրուն մադմիք ըդ հավու փորի մեծ: Ուրախ - գվարտ, գառնը մադմիք վըզը երտը տադու քով:

- Տադի՛, - գըսը, - եամ եավ պերեցի, համ լը մէ մադմիք իրա վորոհի հանեցի:

Գառնը տադին մադմիք, արտեն կինը, օր ըդի կախարդագան մադմիք ը, գառնը տրը իրա մադ, գդեսնը, օր քառասուն դըվրեց գգայնին, գըսին. «Քանդի՞ք, թը՝ շինիք աշխարի»:

- Ոչ քանդեք, ոչ շինեք, էս ըմ թակավորի պալատի նման մէ եադ պալատ ընծի սարկիք:

Սոռավոր, օր բառար գարտի, ի՞նչ գարտի. պալատմ՝ իմ սարկի, օր չուրիս, չխմիս, նայիս, թակավորի պալատ ի՞նձ ը, օր երսնի ըդրան: Ուրեմն, թոռ գըսը. - Տադի ջան, էսքան հունար օր ըդ մադմիք ունը, տու բդի երտաս թակավորի ախճիգ ուգիս ընծի:

- Յա՛, բալը, - գըսը, - գէրտամ, արտեն մ'կի գարրիկ՝ իմալ - օր բետկն ը: Գէրտը բառար թակավորի պալատ, նստի իմանաատոի վիեն: Գիկը թակավոր գըսը. - Էս բառար օ՞վ ը, ի՞նձ ը նստի էստեն: Գըսը. - Թակավոր աբրած կենաս, էգիր իմ, օր քու ախճիգ իդաս ըմ թոռին: Թակավոր գըսը. - Էլի՛, էլի՛ կնը դու նեխից, յըս ախճիգ օ՞նց գիդամ քդի, տու ախկադ իս:

- Չէ՛, թակավոր աբրած կենաս, յըս ախկադ չի՞մ, ըմ պալատ քու պալատից լա՞վ, ըմ աբրուստ քու աբրուստից լա՞վ, տու օ՞նց չըս դեսի:

Գըսը. - Այ բառար, տու ըն փոքր քոխի մեծ չէ՛ գարրիս:

- Չէ՛, - գըսը, - եօլը տու էլի նայը՝ ըմ պալատն ը լա՞վ, թը՝ քում:

Գէլի թակավոր գնայը, զարմանք գգդուը, գըսը. - Այ մաբտ, քը՞նի օր էսի սարկից, էսի յը՞պ սարկից խըբար չէդը: Մէ խոսքով, գըսը. - Քառունն օր ժամանագ գիդամ քու թորին, ըմ տոնից մինչև քու տուու, ծառ ու ջուղ սարկը, իյալի-իյալիչը փոքր, օր ըմ ախճիգ օդ իսալու վրայով կիզ ձըր դուն: Գէրտը, ուրեմն, քառասունն օր չէ, մէ քընի ժամվս մեծ, մադմիք գտրը մադ, քառասուն դըվրիշ գգայնիմ՝ ի՞նձ ը, ըրը. - Էս մըր պալատափից մինչևս թակավորի պալատ լայլի-խալիչը, ծառ ու ջուղ էնեք: Թը քընի ժամվս միհ, էտ լը աստված իմանը, թակավոր գէլի դեսնը. ի՞նձ պալատ, ծառ ու ջուղ իսալու վրայով կիզ իյալին, ուրեմն, ախճիգ գիդամ, եարսնքով, քեֆով - ուրախուչունով գդանին:

Տառնանք դըվրիշի վիեն: Դըվրեց րաբան գիկը, իրա հավ ուզը ֆոնչու մոդեն: Ֆոնչունչին գվերու հավ իդը. ըդի գկասկաձը, գըսը. - Էսի իմ հավ չէ, ո՞ւր ը ըմ հավ: Գըսը. - Դըվրեց, ասսուց բրիհմ, քգնից չըմ գըսնը բրիհը, մէ դդը էգավ, շադ յալվար ընգավ, պերից ուրիշ հավ դվրց, ըն հավ դարավ:

- Կա՞յ, քու վոր քու դագ մնը, տու օ՞նց ըմ հավ դվեցիր: Գէլի դըվրիշ բարան. ի՞նձ էնը, օր ընգնի աշխրէ-աշխարի, կինը ըդ հավու դանոդ: Գէլի, ուրեմն, մէ սումկը գ'կինը. գուց, ասեղ, ելու, մարջան, արրջան, տո յըսիմ՝ հարսի գըսք, ըմբես պանիր գչը մեծ, օր ջրիել-ջրուլնիր առնին: Գառնը ընգնի աշխրէ-աշխարի: Մէ իյոսքով, գիկը ըդ պալատի տոներով գնցնի, գըսը. - Այ լավ ուլո՞ւմք, մարջա՞ն, արրջա՞ն, ասե՞դ: Ըդ հարս լուսամուղից գէլի կլուս քցը տուրս, գըսը. - Յօ՞ս արեք, հօ՞ս արեք: Մէ խոսքով, դըվրիշին գգանը դանը նիրս: Բառար դունն ը, պայշ դդեն դուն չէ: Կո՛, ջրիել ը, գթըվի ըդ իլներու վիեն, էղաններու վիեն, գիըվըը վերու գըսը. - Ի՞նձ արժը: Դըվրեց գըսը. - Յա՞ս ջան, ի՞նձ ըսիմ, է՛, եօնք գախուզ մադմիք իդաս ընծի, էս սումկեն լրիկ՝ գիդամ քդի: - Յա՛, - գըսը, - գիդամ: Բառար ընդեխնեն գրողը. - Չէ՛, - գըսը, - օ՞նց գիդամ, ըդի ըմ թորի մադմիքն ը: Դը, բառար կինը, հասս չկինը ինճ-ինճոց ը: - Չէ՛ օր չէ՛, տադի՛, գիդամ առնիմ ըդ գրգսիր ընծի, էսքան գուգս՝ քընի սախ իմ, ընծի բոլ ը, մադմիք ի՞նձ գէնիմ, էլի գառնիմ: Մէ խոսքով, բառար ինճ գէնը՝ հարսի վիեն չգրոնք: Գիդը մադմիք դըվրիշին. դըվրիշի քեֆին - քեֆ չիօսնի, իօմը գէլի տուու՝ մադմիք գոխս մադ: Դըվրեցնիր գգամին. «Քանդիք, թը՝ շինիք»: Գըսը. - Ոչ քանդեք, ոչ շինեք, էս պալատ իմալ օր գը, վերցեք յուտ գգուոնք տուեք:

Իրգուն դդեն գտառնը իկը, ի՞նձ դեսնը. ոչ դո՞ւն, ոչ դի՞իս, փոշանունց ը: Յեյ վա՞իս, էս ի՞նճ գուլում էր էգավ ընծի:

Թակավոր խըբար գէղնի, օր իյանց փեսի դուս կախարդական դուն ը էտի, գ'գանը փեսին գըսը. - Զգի ժամանագ երգու ամիս, շննք էդավ եսու՝ էդավ,

չեղավ՝ քու կլուխ զգըրօգիմ: Գէլի դդեն՝ լալով ընճնի ջամպը. ոչ հաց ը, ոչ ծուր, ոչ փո՞ն, սովուծ-ձառավ գընգնի աշխրէ-աշխարի: Թը ուր հըսնի, բեզրի, երտը մէ իսեղջ րառվու դուռ, եղնի խոնախ:

- Նանի ջան, - գըսը, - գմտունի՞ն ընծի:

Գըսը. - Խոնախ ասսուն ը, րալը ջան, հաց չունիմ, ծուր չունիմ, տու լը արի ըմ գողկին կուջուրի:

Իրգուն օր գտինի, ըդ իսեղջ որեն ի՞նծ էնը գըսը. - Նանի ջան, մէ քընի գոռշ ունիմ, երտամ հաց պերիմ՝ ուրիշը: Գէլի երտը րազար, գդեսնը մէ նարտ հընտը գքորը. «Աստանդամ փոշման, սատանդամ փոշման», որրես առնոդ լը փոշման ը, չսոնոդ լը փոշման ը: - Այ մարտ, - գըսը, - ըդ ի՞նծ ը, օր առնիմ լը փոշման իմ, չառնիմ լը: Վըլը, գառնիմ:

Գառնը պերը իշը՝ մէ հադ մուգ ը: Ըլ հաց չպերը: Գպերը իկը, րառար գըսը. - Է՛, կառնուգ, ի՞նծ գէնիս ըդ մուգ, տու ընծո՞ւ հաց չպերիր, սովուծ իք:

Գըսը. - Նանի ջան, ալան չէղի, հըլքը պանմ՝ գար, օր ընծի ըսին առնոդ լը փոշման, չառնոդ լը: Յըս լը առը:

Իրգուն ըդ մուգ գտրին մէ քոշի վրեն, իրանք լը մէ յանի վրեն գկուջուրին: Առավոր օր գլունը, գդեսնան, ի՞նչ էնսնան, ըդ մուգ էսքան օսկի յը պերի տիգի: Գուրախնան, պայծ դդեն սիխուր ը, օսկին ըսկի աչքին չէրկը: Ուրենն, ըդ յոտ ծովը գքորն ըդ դեխեն գէրևը, պայծ շադ հեռու յը: Գէլի դդեն էլի երտը րազար: Մեզմ' էլի գրողը. - «Աստանդամ փոշման, սատանդամ փոշման», գըսը. - Վըլը, է՛ն լը գառնիմ: Գառնը իշը՝ մէ հադ գաղու յը: Գպերը գաղուն լը գիկը, րառար գմեղանը, գըսը. - Լա՛, գաղուն մգան դրոշման ը, ընծո՞ւ պերիր: Գըսը. - Զ՛, Նանի ջան, գիսուդան իրար իհո, պան չէղնի: Գաղվին գթողին ըդ դեխ, ոչ մի պան լը չէնը մգան: Գէլին առավոր դեսնան, ի՞նծ էնսնան, մէ քառսուն կիլո լավ չադ, լիսփա մսիր, պերիր ը: Գեպին իրանց ջաշ ուրին, պայծ դդեն էլի դիլիսոր ը: Գէլի էլի երտը րազար, գդեսնը մէ նարտ էլի գրողը. - «Աստանդամ փոշման, սատանդամ փոշման»: Էդ լը գառնը գդեսնը՝ թագի յը: Գպերը էդ լը իկը: րառար գըսը. - Կառնուգ, ըդ իրեկին վսնդագ շինը, առանձին-առանձին տիր, օր իրար չմնասին: - Զ՛, մարտ ջան, - գըսը, - յըս ընալ գէնիմ, օր իրար իհո յոլը երտան:

Օրմ' լը գըսը՝ գայնի երտամ ծովիւ րոռուգ. գառնը ըդ իրեք ջընըվրդանք, երտը ծովիւ րոռուգ: Գնսի ծովու րոռուգ, գիլը: Ջընըվրդանք գիկան, իրանց լեզվով գիրսկցուն, թը՝ ի՞նծ ը էդի, գիլաս:

- Է՛, - գըսը, - ջընըվրդանք, կացե՞ք ըն յան, տուք ըմ դրորին ի՞նծ դըրման րոի էնեք:

Շադ գնգնին հոկու իհո, շադ յալվար գընգնին, գըսը. - Է՛, ըն ծովու գգրոնք ըդ գդեսնեք, ըդի ըն շենքն ը, էսենց-էսենց պան էդավ. մադնիք ունեք, ըմ ընդա-

նիք դվոր ը ուրիշի: Յիմը շենք իմն ը, դանի՞մ՝ ըմ կլուխ չըն զըրգը, չդանիմ՝ թակավոր ըմ կլուխ գգրոզը: Ուրենն, ըդ իրեք կենտանին, գառնին իրար, երտան ծովու պերան. թագին գըսը. - Յըս ծզի ծրից ըն յան զընցում, թը հունար ունեք պերեք: Մուգ գըսը. - Յա: Գադուն լը գըսը. - Յա, յըս լը գընամ պերիմ: Մուգ գըսը.

- Օր պերիմ, ըմ նոդ մնը, տուք չառնեք ծըր մոդ:

Գպայմանավորվոն, գընցնին ծուց, ըն յան, գըրտան մդին պալատ, ի՞նծ էնսնան. դըվրեշ իընտը քնուգ, գնիգ լը քնուգ ը գոյսկ: Պայծ իսեղջ րառվու կլուխ գրոիր ին, լամպին տրի ջրակոյիր, լամպի դիի ին սարկի: Գուսնան՝ դըվրեշի պերան պաց ը, մադնիք իընդոյ գիկիլը: Մուգ տու մուգ, գդանը վրազ րոչ իսանը մեղի մեծ, գդանը գոյսիր դախուեղի մեծ, պերը մոդու դըվրեշի քիթ: Դըվրեշ մադնիք պայմանի ան գուշու մեծ: Վը վս՛ի, - ի՞նծ էնին: Գէլին ծրեն տուրս. ներ արտեն հըզրի գէդնի, օր պերին թըլին ծովու մեծ, գըսը. - Էս ի՞նծ գուկում էր էնեցեք, հըրի իկմը, ախր, ընդեխ էլի ջաց գար, պերեցեք - քցեք ծովու մեծ, յըս ի՞նծ էնին: էլի գառնը տիխուր ըդ իրեք կենտանին, իկը դուն: Բառար գիարցու, գըսը. - Բալը, ըսօր րիտուն ո՞ւր իս էդի: Գըսը. - Նանի ջան, ըմ դըրդից վսզն արի: Ի՞նծ ը էդի:

Նուր գրադմը րառվուն, գըսը. - Էսենց, էսենց պան ը էդի, պերեցին մադնիք թըլին ծովու մեծ:

Բառար գըսը. - Աստված ոտրումած ը, լա՛, էլի աստված ջարմ՝ գէնը:

Մէ շըպատ գանցնի, դդեն գէլի վերու ըդ իրեք կենտանին, երտը ծովիւ րոռուգ, գդեսնը՝ ծգնորսնին էգիր ին, ծուգ ը որսան: Քընի մէ անրետկ ծուգ գթըլին՝ ոչ շուն գէրտը վրեն, ոչ թագին գիրսնի վրեն, մեգ գգրոցը, չըռու մոդենը, մյուս մարտ գըսը. - Ա՛ մարտ, էսեան ծուգ դվեցիր՝ ներ չէղան, ըդ մէ ծուգ ջընըվրին տուր ը էգի, թըլի դանը, իրան հըլալ էդի:

Վըլը, գվերու թագին ըդ ծուգ ու հայդէ՝ դիրոն մոդ: Գրադին, հանին մադնիք ըդըա փորեն, ուրախուրախ իկան րառվու դուն: Իըիգուն գգրոգը մադնիք իրա մադ: Գըսը. - Այ թանդեք, ոչ շինեք, էս պալատ ուրդից վերցիր եք՝ օն տրեք:

Մէ խոսքով, մինչև դղեն գիկը հըսնի դիխ, պալատ հընջը նույն ծեվով, նույն հալով, պայշ դըվոնշ ու իրա գնիգ հըլը հնդին քնուգ: Գէրսը թակավորին իմաց գիղը, գըստ. - Թակավոր արրած կենաս, արի տու քու ծեռքով քու տադ էնը, յըս ոչ տուրն իմ պացի, ոչ նիրս իմ մդի: Թակավոր գիկը իրա վըզիրներով, նեժիշտներով, պանան տուր, գդեսնան, օր իրա ախճիգ ու դըվիշ քնուգ ին, խեղ բառվու կլուխ լը՝ գդրիր ին: Վըլը, գաերը ըր ախճգա կլուխ լը, դնվուշին լը գիղը վերճացնիւ, գաերը մյուս ախճիգ րազգը ըդ դդի վիեն, յուտ օր, յուտ կիշեր գէնին հարսնիք: Իրանք գիշսնին իրանց մուրազին, տու լը հըսնիս քու մուրագին:

### 15 (17). ԲՅՈՒԺ ԱՆԴԵՐ

Սարստ մի կեղմի, գումենը իրեք տղա. ուր բախճի մեծ կեղեի մեգ խնձորի ծառ: Ըդ խնձորի ծառ տարին իրեք խնձոր գպոնէ, էվել չպոնէ, հընա ամեն տարի գէդ խնձորնիր կգողանան, մեգ լէ խսմաք չէդինի տիրուն: Տարին լէ հեր գըստ:

- Տղե՛կ, տուք իրեք տղա, իրեք խնձոր չըք կը՞՞նը պայի, գացեք օրագան մեգդ պայեք գէդ խնձորներ:

Առջի օր մեծ տղեն կերտա, կպայէ խնձորներ, վախտո՞ւ լէ քուն գիկա գընի, գէնի տեսնա՝ խնձոր չկա: Օլոր - օր միհնեկ տղեն գիկա գպայէ, միհնեգ տղեն գըստ. «Ի՞նչ էնիմ, օր ըդ խնձոր չտանին»: Կրագ գվառտ հօն, կնստի, հընա ուր քուն լէ կտանէ, գ'քնի: Գէնի տեսնա՝ մէ խնձոր լէ չկա: Բգդիգ տղեն գըստ. - Բդի երտամ, գէդ մեգ խնձոր յըս պային:

Կրակ գէնա, կնստի կոդ, մեգ կընի, մեգ գիմնա, մեգ լէ կտեսնա՝ էգավ դև մէ, գէդ վերծի խնձոր լէ տարավ, Բգդի տղեն շաշկեն կըաշէ եղեն կերտա, գմդի դևի տուն մէ՞ծ հորը մը մեծ: Կտեսնա՝ դևի կնիկ հընդը իմաց.

- Տղա՛, քու տուն ավրի, դև իսնի հոդ առավ, տու սախ չըս մնը, կուլոր զքի:

- Յըս լէ էգիր իմ գէդ դև սպանիմ, - գըստ տղեն: Դևի կնիկ գըստ.

- Քաշէ դևի շաշկեն՝ կըարի կաըասն է, թը հանիր՝ կ'ոնաս սպանիս:

Տղեն կըօշը, կսպանը մեծ դէին, գընցնա միհնեգ դէին, գէն լէ գմորտէ, մէ հադ լէ գգըրգէ ոգդիգ դէին: Բգդիգ դև գըստ. - Մեգ լէ գը՞րգ:

- Յըս ըմ մամուց հաղմ' իմ ծնվի, մեգից ավել չըմ գըրգի:

Իրեք դևերու կմգտիք իրեք քուր ին էդի, դևիրն ին ըղուց փախցի: Տղեն գվերու ըղուց, գիկան, օր հորից էնին:

Ախարդանք շրիդ գքին, մեծ ու միհնեգ քուրե-

րուն գիանին, գմնան ոգդիգ ախապեր ու բգդիգ դևի կնիգ: Ըգի գըստ. - Արի՛, առած տու էլի, թօչը՝ քու ախարդանք քգի չըն հանը:

Դըմը տղեն սվտը ախճգան գիանը, ինք գմնը ներս: Ախճիգ գըստ. - Տու գմնաս, գընգնիս Սև աշխարի: Գիկան իրեք խոճ. մեգ սև, մյուս սպիդագ, մեգ լէ կարմիր, թը կըռնաս՝ քգի քցէ կարմիր խոչու վուն: Կարմիր գըըլը քգի սև խոչի վուն, սև գըըլը ճերմագ խոչի վուն, ճերմագ՝ գիանը զքի լուս աշխարի: Տղեն չքաշարէ իրան թըլէ կարմիր խոչին, գըլէ սև խոչին, սև խոչ գըլէ մութ աշխարի, մէ քադրի ճոր: Տղեն գէրտը մէ պառարի տուն ճուր գուզը: Պառաբ գըստ.

- Այ րալամ, հուշապ ճրի առեճ առեր է, օրագան մէ ախճիգ գիդան ընոր: Ըսօր լէ թակավորի ախճգան հերտն է:

Տղեն գըստ. - Տարե՛ք գիս ըտտեղ, կէրտը օդի, կիշը որ թակավորի ախճիգ պերին, օր հուշապ կլցու ճուր ինը ժողովրտին: Տղեն թակավորի ախճգան գըստ.

- Յըս ըմ կլուխ կդմիմ քու չոքին, զր հուշապ էգավ՝ տու գիս իմցու: Չուշապ ըր գիկա, ախճգա լեզուն կառվի, չկըռնը խոսը, գիլա, արցունք գրափի տղի վուն: Տղեն գիմնա, գվերու ուր թվանք, գգըրգը հուշապին, գնը երգու շերդ, արուն ու ճուր կիսառվոն իրար:

Ախճիգ կըըրգէ ուր ծեռք մըճ արճին, կգըրգէ տղի մեծկին: Ճուր գվերու զքադաք, ժողովեւրտ ուրախությունից չկինը ինչ էնը, գըսին. - Ըդ ինչ հրաշք ը, օ՞վ սպանից գըդ հուշապ, փրգից գմ՞գի: Ախճիգ գըստ.

- Սադ ժողովուրտ օր հըվքըվին, յըս տեսնամ գնանչնան էնոր:

Ամփող ժողովուրտ գիըվըքին պերին, ախճիգ գըստ չէ: Ըլ քադաք մասրտ չմնը, օր չըն պերի, գըսին.

- Ախճի՛, քադաք զր մասրտ չմնաց, մեգ տղա կապառվու տուն, չէդին՝ էն ը:

. Կէրտան պերին տղին, ախճիգ կտեսնը ուր զըրգուգ նշան, գըստ. - Հա՛, էդ ը: Թակավոր տղին գըստ.

Տղեն գըստ.

- Քու թակավորություն րումրըըք էդի քգի, տու ընձի հանը լուս աշխարի: Թակավոր գըստ. - Յըս ո՞նց հանին քգի լուս աշխարի:

Տղեն կրողէ գիկա, մէ ծառիմ' տագ գպառգի: Կիշէ՝ օծ մէ գլւնա արձվու պուն, օր ծկներ ուրի: Տղեն գգըրգէ օծուն գսպանէ, ուր կցորդանք գվերո, քցէ արծվու ծկներուն: Արծիվ գոռալով գիկա, օր տղի ածկեր հանա, ծկներ գ'սին.

- Մէնէ՛, ըդի մըր փրգիչն է: Արծիվ գիկա, տղիս հով կեմէ:

- Տղա՛ ջան, ինչ ուգիս կիդամ, ամեն տարի օծ կուտեր գըմ ճուդեր, ըս տարի տու փրգիր:

- Պան չըմ ուգի քգնէ, - գըստ տղեն, - մինագ հան:

ընծի լուս աշխարհ, թը կըռնաս: Մրծիվ տղին գըսէ:

- Քառսուն հաղ դմակ պի, քառսուն լիոյ լէ յոտ տարվան գիմի, զբգի հանիմ լուս աշխարհ: Տղեն գըսէ. - Ելնամ տիմիմ թակավրորին: Թակավոր ուրախությամբ կիրա ուր ուզած, տղեն կառնէ գիկա: Մրծիվ գիոտ թևեր, գըսէ.

- Զըրի տասավորէ իմ մեծկի վրեն, տու լէ նստի մեծկիս. հայ կենիմ՝ մէ լիոյ գիմի թըլ, հուց կենիմ՝ մէ դմակ թըլ ուրիմ:

Արծիվ կթռնա, կես ժամվա ճամպա է մացտ, օր հանե լուս աշխարհ: Տղեն մէ դմակ կթալէ՝ արծիվ չկռնա րոնա, տղեն կ'կրտէ ուր թուրկից, կիրա արծվոն: Արծիվ գտրէ ըդի ուր լեզվոր տակ ու գիանէ տղին լուս աշխարհ: Գիճնա տղեն մէ ախարի վրա, օր ճուր խմէ, արծիվ գտեսնա որ տգեն կրոփլա, գըսէ. - Տղա ջան, ընչի՝ կրոփլաս: Գըսէ. - Պան չկա: Գըսէ. - Մու քու թուրագ, տիր քու ճվոր վրեն: Տղեն կառնէ կիմ: Արծիվ կիրա մէ թերուր, գըսէ. - Զըր քդ թերուր ախարի ճրի մեծ ու քսէ վրեն:

Տղեն կզարգէ թերուր ախարի ճուր ու կ'քսէ ճոին, կեղնի մորեն մեզ ու գրնզնա ճամպա ուրանց տուն: Կտեսնա, օր ախարդանք փոքր դեկի կնզան օր - արև չըն իդա: Գզըրգէ գերգու ախարեր ու գերգու քուր լէ գսպանէ, զվերո զփոքր քուր, գերտա մէ ուրիշ թակավրությունն՝ ուրախ կարրի:

## 16 (18). ՔԱՉԱԼՈՔ

Կեղնի, չեղնի, մէ տղա կեղի, եթում կեղի, ինքն է քաչալ կեղի: Կելի - կեթա, կասա. «Էրթամ ինձի աշխատանք գտնիմ», կհանդի մեկ հարուստ մարտու: Էս հարուստո՞ խարիր խոզ ունի: Կասա. - Քաչալ, տու ի՞նչ ես պտտում: Կասա. - Աշխատանք եմ պտտում: Կասա. - Չկանաս իմ խարիր խոզեր պախես, թեզի փոդ կտամ: Տղեն կհանածայնի, կ'կանի տրա խոզերի հ'առեց: Անիս կրմի, խոզեր կծնին, կեղի խազար խատ: Յըմա խազար խասից, պտի խարիր խատ տա քըլին, էղպես պայմանավերված ին: Յարուստ կմստածա, կասա. «Խարիր խոզ օր ծնին, կեղի խազար խատ, խարիր օր տամ քըլին, էլ իմ խոզեր չի պախա, կայնի ետոր խարեն»: Էտ հարուստ մարդին մեկ ախչիկ ունի, շատ սիլուն: Կեթա կասա. - Քաչալ, արի իմ ախչիկ տամ քեզի, իմ խոզեր պախա: Տղեն կասա. - Ինչու կխարես ծի, տու մէ հարուստ մարդ, ես մէ քաչալ, հ'երում մարդ: Յարուստ պայման կ'կրա, օր ախչիկ տամ քըլին: Քաչալ կուրինա, երկու ջոջ վեղոր կվերցա, խոզերին կջրա, կեթա դաշտ խոզեր արցոցու: Կտիսնա՝ տուրս ամպեց, երկինք գետին կմթնա, անձրև կ'զա: Քաչալ ուր շորեր կխանա, կտնա մեկ վեղորոյի մեջ, կշորա ու տկլող կնստի վեղ-

ոի վրեն, օր շորեր չտգկի: Կարկուտ կզարկա քըչի ջան կ'կարմրցու, մոմոց կընգնա ուր ջան: Տուրս կպարզա: Քաչալ կխագնի շորեր, կտանա խոզեր, ճամրիսին կհանդրի մեկ նազար ենողի, ետի կասա.

- Քաչալ, իհ՞նչ եղէ, օր տու չտգկեր եւ: Քաչալ կասա քզ ի՞նչ:

- Քաչալ ջան, տու ընծի ասա՝ ի՞նչ էրիր քու շորեր չտգկվավ, ասա, ես քզն պետք գիկամ, քզի նազար ենել սովորցեմ. երկու խոսք կարդամ՝ քու ծեռ կայի քարին, երկու խոսք էլ կարդամ կփրցի: Կելի քարին կասա խզեց-ոզէ: Էտ վախտ քաչի ծեռ կ'կայի քարին, մեկ էլ կասա՝ խզեց-ոզէ, ճզէ-ոզէ, ես հաղ քըչի ծեռ կփրցի:

Քաչալ էլ կպատմա, թե իմալ էրէ, օր չտգկէ, շատ կուրիսնա, օր փեշակ սորվավ, գելի կեթա խետ ուր խոզերուն: Օրմ՝ էլ կտանա խոզեր, կտիսնա, օր կեղ խարսնիս ա: Կասա. - Ես ի՞նչ խարսնիս ա: Կասեն. - Քու խազնի ախչիկն ա: - Լավ, - կասա, - ուրեն ենի խարեր ա ծի, ուր պայման մոռցավ, կայնի ետոր խարսնիս թրոլեմ, նազար կպուցեմ ենոր:

Գելնի - տանա խոզեր գոմ, զիկա խարսնիսի թամաշա: Փեսի մեր կասա՝ - Կնա քու նշանած տես: Տղեն կեթա օր տենա, քաչալոն կասա. - Կայնի երթամ տղեն. ախչիկ կպուցեմ իրար: Էն վախտ, օր փեսեն կուզա ախչկան պազա, քաչալ կասա՝ խզեց-ոզէ, ետոնք կ'կավին իրար: Քավորկին գիկա տիսնա ախչիկ-տղեն գրկվուկ, կասա.

- Լավ, ամոք ա, խլղեր զիկան ի՞նչ կ'սին:

Գիկա, օր ախչկան պազա, քաչալ ետոնց էլ կ'կպուցի իրար: Խարսնիսի տեր կտիսնա, օր ուշացան, մեկ օսկի խլղաթ կուտա դիոլչուն, կասա. - Գացեք - տեսեք ի՞նչ եղավ, Չուռնչին ու դիոլչին կեթան կիրիշկին իրար գլխու քոնած, կմոտենա խարսնին կասա՝ շարա՛շ, կուպալ կ'կայի խարսի զլխուն: Կասեն.

- Վա՞յ. մեր խարսնիս նազար ա կպէ:

Քավոր կասա.

- Մեր խարսնիս նազար ա կպէ, երթամ մոլլին, յա տերտերին րերիմ, օր իրարից փոցցա: Կիրիշկա-տիսնա՝ քաչալ կպտուտա, կասա.

- Քաչալ ջան, մեր խարսնիս աչքոել ա, գնա մոլլին ասա, թո զա մեզի իրարից փոցցա: Քաչալ ուրախ-ուրախ կեթա մոլլի տուն: Կեթա, դուռ կտփա, մոլլի կուս կզա: Քաչալ կասա.

- Իմ խազնի ախչիկ ուզած են, խարսնիս ին էրէ, նազար ա դպէ, մոլլեն թո զա ազատա, ի՞նչ ուզա՝ կտանք: Կասա. - Մոլլեն գացեր ա արտասայման, ուշ կիզա: Մոլլի կմիկ կմտածա, կասա. - Ես մոլլից սորվեր ին, ես կիզամ: Կվերցա մէ կիրք, կզարկա դոշին, կ'կա քաչի խետ: Տու մի ըսա՝ տեղաց կարմունց քանդվեր ա, գետ ելեր ա:

Կասա. - Մոլլի կմիկ, օր ետենց ա, ես կխանիմ իմ

շորեր, կանցնիմ, եետո առ խանա քու շորեր, ընցի:

Մոլի կնիկ շորեր կխանա, կփաթթա ուր կլուխ, գընցնա: Քաչալ կասա իսկէ-բգէ: Մոլի կնգա շորեր կ'կպի ուր գլուխ: Կասա. - Մոլի կնիկ, շորեր տի խագի, ամոր ա: Կասա. - Տղա՛, նազար կպավ ծի:

Յըմլւս տկլոգ կ'կա: Խարսնիսի տեր կասա. - Մոլի կնիկ, էտ ի՞նչ ա:

Կասա. - Նազար կպավ ծի: Կասեն. - Քաչալ, դէ կնա Սարդարաբատու տերտեր բէ: Կասա. - Չէ, չեմ էթա, չէ տու պայման տրից՝ աղջիկ տեր ծի, ընչի շուկիր: Փեսի խեր կասա:

- Տու քու ասկւսծ, մեզի ազատա, տու տար էտ ախչիկ:

- Լավ, - կասա, - ես ծեզի կազատեմ, օր ասիմ՝ խզէ-բգէ, ճզէ-բգէ կփախմիք:

Կասեն խա: Քաչալ կասի. - իսկէ-բգէ, ճզէ-բգէ: Սադ կ'փորցին փախմին: Քաչալ կառի էտ ախչիկ, տառնա սադ խոգերու տեր: Ինք ուր խելքով՝ խասավ իր մուրազին:

## 17 (19). ՔԸՆՈՒԹ

ԺԱՄԱՆԱԳԻՆ ԳԵՂԻ մէ հարուստ վաջառագան մարտոմ: Էս մարտը գուգէ էրտա հըջ\*: Մի փոքր աղջիկ գունենը, մէ եադ է հասունացած տղը: Գվերու տղեն, իրան ընդանիքի եեդ կերտա հըջ: Ախճիգ փոքր է, գրորդէ մոլլի հուսին, մոլլին զաբերէ տան մեճ, որբես ախճան դաս իդա: Իրանք օր կերտան, մէ օրվամ' ճամպա գեետենան, մոլլեն միդկ կավիրէ, գիկա իրգուն ախճագա մոդ: Ախճիգ կ'սէ. - Մոլլա՛, եդ գիշերով ընչո՞ւ իս էգէ:

Կ'սէ. - Էգեր իմ, էսօր քու մոդ քնիմ:

- Այ մոլլա, դու ընձի եր տեդ գիկաս, ամուտ է, իմ հեր վստահ էդավ քեզի, հանձնեց տուն քեզի, տու էգեր իս ի՞նճ է կ'սիս:

Ի՞նչ գենէ՛ չեղնի, ճար գ'կողի, մոլլի ծեռքից պրծում չկա, կ'սէ. - Լավ, ջուր տաքցում, քեզի լոդգում, նոր:

Գիսապէ մոլլին. ջուր գտաքցու, տաշտ գտնէ, մոլլին գնստըցու մեճ ու գլուխ լավ գսարնէ, օր գսարնէ, առեճ խոշոր, ծանոր պինծէ թասեր կար, եդ պինծէ թասով քանի կ'ոնա մեճ գիակցու մոլլի գլխուն: Մոլլին գուշաքափի գընգնի տաշափի մեճ: Ախճիգ հըմը գմդնա սենյագ ու դուռ գիազէ: Մոլլեն ուշկի գիկա, արնի մեճ կորուգ, վերծ, գմակրտ իրան, գիակնի շորեր, գիկա: Ե՛, ախճիգ ըսկի դուռ գպանա: ճար գ'կողի, մոլլեն գընգնա քաղցի մեճ, մէ ջադու պառավ կնիգ կ'գդնա, կ'սէ.

- Պառա՛վ, էսքան օսկի կիդամ քեզի, մինագ իկաս

\* Երգիր հըջ կ'սեն, ինչքես մարտ էրտա էրուսաղեմ: (Ծանրանասացի):

Եդ ախճան խապիս, համոզիս, դուռ բանաս, յըս էրտամ ներս: Պառավ կ'սէ. - Լավ, մոլլա, մինագ բոդի քու մուրութ խուզիս, քու թեխեր թրաշիս, էրտաս քզի մէ լավ ախճագա շոր իդաս կարել, որբես իմ ախճիգն իս, օր յըս կոնան քզի տանիմ էնդեխ:

Մոլլեն գերտա, պադրաստություն գդեսնա, գշին-կի, պադրաստ գիկա, դէ, չէ՝ մոլլեն պառվուն ըսեր է՝ ախճագա անուն, հոր, մոր, բոլորի աններ: պառավ գիկա, ծեն գիդա ախճագան, կ'սէ.

- Բալա՛մ, յըս քու հորկուրն իմ, քունա իմ աճկեր, իմ ախպեր, օր կնաց հըջ, ըսեց - կերտաս իմ ախճագան գիանորիս, յըս էլ մոոցեր եք, ըսօր ընգավ իմ միդք, էլա էգա:

Օր էղաւս կնգանագ գխոսա, ախճիգ գիշէ, օր մէ պառավ կնիգ է, դուռ գպանա, գմդնա ներս: Գմդնա ներս, կ'սին իրանց համար, շադ-քիչ գխոսան, պառավ կ'սէ.

- Բալիկ ջան, - կ'սէ, - էրտամ, մեր տուն մարտ չկա, իմ ախճիգ մինագ է, էրտամ իմ ախճիգ պերիմ իկամ, բորգիմ քու մոդ քնի, օր չվախենաս, յըս գերտամ մեր տուն:

- Լա՛վ, - կ'սէ, - համածայն իմ, քէլէ ցույց դուր քու ախճգան: Գպոնտ թակավորի թևն ու գդանէ ընահու սենյագ: Գդեսնա՝ վըրուեն քըշուգ է, ախճիգ վըրուի եդեն է, մէ սեղան կա դրուգ, մէ ատոռ, էլ րան չկա: Վաջառագան դըվրեշին գրուէ եդեխ, գէրտա: Գէրտա, թակավոր գմդածէ. - Այ ջանմ', ըդի րերեց ընծի րանդարգելու, ըդ ի՞նձ էրեց: Մեզ էլ գդեսնա՝ վըրուի եդեխ մէ սիրուն ախճիգմ' գէլնա իկա:

- Բա՛րև, - կ'սէ, - դավը՛շ:

Կ'սէ. - Բա՛րև, հագա՛ր րարի:

- Խե՞ր ը, էգիր իս:

- Չկիդեմ, ես տան դեր րերեց ընծի հոս:

Ուր բախչից կես ինձոր կերա, բոյ հալալ էներ վրես, էն էլ կ'սէ՝ օմ ախճիգ բոյ առնիս. եամ քո՞ է, համ քըզլ է, եամ էլ քոտեկան յարեք թապէ վրեն: Օը կ'սէ՝ ախճիգ գժիղոյա: Կ'սէ. - էդ ախճիգ ես իմ: Օը կսէ՝ ես իմ, թակավորի սիրո գիանգստի: Գիանգստի, զպերին էրգուսով սեղան գշինին, կուտին - գիսմին, գէլնան պարզին քնին: Առավոր օր գէլնան, թակավոր գիան իրան թևի փեշադուզ գոզբանդ, գիդա ախճգան, կ'սէ. - Ախճին, - կ'սէ, - ես գոզբանդ գիդան քեզ, յըս թակավոր իմ, կիդամ քեզ, եթե օր առ էրեխովնաս, աղա էդին՝ ես գոզբանդ գ'գարիս դդի թև, ջանի վրեն, իսկ եթե ախճիգ էդին, որ մեզ թակավորին օր տանիս, ընի դերոց գիասու: Գիկա հասնի ընծի, ըն ժամանագ քեզի զպայիմ դրահսփ մեծ:

Դամաժայն գէդինի, գիդա եդ գոզբանդ ախճգան, ու գէլնան էրգու դըվրեց տառնան իրանց քաղաք: Գիկան իրանց քաղաք, վերծ, օրեր գանցնի, ամսիներ գանցնի, ախճիգ կագաղվի, կէդին մէ հադ աղա: Դէ, հելյատի դդա է, օրեցօր գպարծոնա, գէդին ահակին դրա, բայց որ էրեխի հետ գիսադա, գլուխի՝ մեզի վըզ զջարտէ, մեզի թև տեղից գիան, մեզի գլուխ զջարտ: Գելին իկան զաջառագանի մոդ բոդոք, կ'սին. - ես քու որպան մեր էրեխսերի գլուխ էդ օյններ գիան:

Ե՛, ի՞նձ էնէ: Դոհն գէդին դասնեխնգ դարեգան անուն չկա, րիցո՞ է գկանչին: Դոեն զառվի, կ'սէ. - Այ ջանմ, րիցու անուն չկա, ես ի՞նձ պան է ընծի րիցու գկանչին: Գիկա կ'սէ. - Այ մեր, իմ հեր ո՞ւր է:

Ե՛, ի՞նձ էնէ ախճիգ, ուր հոր ցուց կիդա:

Կ'սէ. - էդի քու հերն է, իմ պարեն է, յըս իմ եերն է գուգիմ: Շադ կորէ վրեն, ծար գիտի, գրեր գոզբանդ ցուցու, կ'սէ. - Բալա՛ ջան, մէ թակավոր էսինչ աարին էգիր է էստեդ, մանցէ իմ մոդ, էտեր իս դու, հիմը եդ թակավոր ո՞՛ էրգիրն է, չկիդեմ, քո գոզբանդ դվեր ը, օր գարիմ քու թէին:

Գգարէ դդի թէին, դոեն կ'սէ. - Ուկստ էդինի, յըս բոյ էրամ՝ իմ եեր գընամ:

Տղեն գընգնա ճամպա, դէ՛ բարամ՝ կնա: Շադ գէրտա, թիչ գէրաա, թը ոնց գիանոդի, գէրաա եդ քադաք, օր իրան հոր քադաքն է: Գէրաա մէ խամուաի դրան առն զկայնի: Խամուան էլ՝ ջիուտի խամուա է, եսասգով մարտոմ' է: Էդ խամուա, ուրիհս, ամփող քադաք էդ խամուա առնտուր գէնէ, որիստ գպացվի, իրգուն օր ջիուտ դուր գիագէ, օր էրաա, գդեսնա՝ դդեմ՝ հանդէ օդի:

- Այ դրա, ի՞նչ դրա իս:

- Անդեր դրա իմ, հայրիգ:

- Դէ կ'սէ, - յըս դդա չունին, եգո քեզ դանին էնին ընծի դդա: Գվերու դդին, գոանէ դուն, որբես իրան դդա: Մյուս օր դդին գպերէ խամուա, մինճէ իրգուն խամուա առնդուր է: Գէլնան մյուս խամուատպաննիր

գիկան թակավորի մոդ պոդոք, թէ. «Զիուտ մէ խանուտ է պաժի, ամփող քադաքի առևդուր էնդին է գէնին, իրան աբրանք գծախվի, մեր՝ գմնա»: Թակավոր գգանցէ ջիուտին, թէ՝ ըդ ի՞նձ պան ը: Զիուտ կ'սէ. - Թակավոր աբրանք կենա, նույն աբրանքն է, ինչ որ իրանց մոդ, օր գիկան իմ աբրանք առնին, յըս ի՞նձ մեղկ ունիմ: Ըլ գըողէ գիկա: Վերծ, օր գվսաահանան, ամիսմ՝ էրգու գանցնի՝ ջիուտ դդին կ'սէ. - Քերիմ իմ սենյագներ բանամ, ցուցում քեզ, յըս մարտ իմ, ըմ ժըմանագ ընցէր է, եա էդնի, դուն գիաննիմ քեզի:

Գէրաա, սենյագների տրներ գպանա, կ'սէ. - Էդի օչյիրին է, էդի՝ դավորին է, էդի՝ ժիանն է, էդի՝ մյուս մյուս, մէ սենյագի դուր չըանա: Եդ դուր օր չըանա՝ դուն գընգնա գլխու, օր մէ բան կա: Կ'սէ. - Ջայրիգ, էդ մէ սենյագի դուր ընչի՝ չըացիր: Կ'սէ. - Ե՛, բալիգ ջան, էդ սենյագ մարտ չկա, դարդագ է: Կասկած գընգնա դդի սիրո, կ'սէ. «Էաեդ մի բան կա»: Ի՞նձ էնէ, օր կ'ոնա բալնիք պոգէ, ջիուտի բալնիք պոգէ: Զիուտ բալնիք գկուիկ մուրքի մեծ, գընի: Օրմ՝, էրգուս, իրեք բալնիք գ'գողնա, դուր գպանա, դեսնա՝ մէ նգար պադ գըրգուգ, չուդիս-չիմիս, էդ նգարին նայիս, Դունյա-Գուգալի նգարն է, հըմը տեղոցտեղ՝ դդի ուշկ գէրտա, դդեն գընգնա: Զիուտ գգարսի, զնայէ՛ բալնիք չկա: - Ծիը՛, - կ'սէ, - ըմ լուս քոռնա, վըլը դդեն գացէ, ուշկ ընցեր է: Գիկա իշէ՛ դդեն ուշաքափ ընգիր է: Գպերէ ջուր գգոցգէ էրես, գիանէ. - Այ բալամ, - կ'սէ, - ես չըսի՝ օր էստի բան չկա, ի՞նձ էրիր: - Ջայրիգ, - կ'սէ, - ես նգարի դեր՝ բերիս ընծի:

- Այ բալամ, - կ'սէ, - էդ նգար էսքան տարի է էդեին է, յըս լը ըմ կ'ողի կիդ էդ նգարի դեր, եիմա յըս ո՞ր դեիսից կդնամ պերիմ:

- Ջայրիգ, - կ'սէ, - յըս բոյ էրտամ էդ նգարի տեր գդնամ:

Ե՛, ի՞նձ էնէ: Զիուտ գգերէ թե քանի ջորու րիո աբրանք կիդա, աեակին փոդ կիդա, կ'սէ. - Դէ գնա: Գէլնա - գէրտա դդեն: Աեակին հարց ու փործով, էն գոդմ, էն գոդմ, գդեսնա՝ յըտ ճամպու ճոթ մէ մարա նսաուգ է: Գէրաա կ'սէ. - Բա՛րև հայրիգ:

- Բա՛րև, հագար բարի:

- Դունյա Գուգալի դեիս գիդէ՛ս:

- Ե՛, բալա, - կ'սէ, - իմ երիդասարդ ժամանագից ման է գիկան, չըմ գդէ, հիմա էլ չըմ կ'ոնա էրաա, բայց սալիսով՝ Դունյա Գուգալ ծովի էն գոդմն է: Օր կ'սէ ծովի էն գոդմն է, դդեն կ'սէ. - Ուրիհս, արտեն գդա: Գընգնա ճամպա գէրաա, գէրաա գիաննի նավերի մոդ. նավաբեկին գիմարէ, աբրանք գպարծէ, գընցնա ծովի էն յան (Ե՛, փոդ ունի, մուննաթ փոդին): Գէրաա քադրի մեծ, գէրտա իսան, իսանչուն ահակին փոդ գիդա, աբրանք գլցնէ մէ սենյագի մեծ, գիագէ, բալնիք գդնէ ջեր: Զորին էլ կիա խանչուն, կ'սէ. - Ինչ որ

քու վայրծն է, կիդամ քեզ, - ու գէլնա երտա քաղքի մեճ: Գէրտա էս զողմ, էն զողմ, գէրտա մնին ջաշարան: Ինչքան երիտասարդ օր կա ջաշարանի մեճ, բոլորի դիմաց՝ ինք փող կիդա: Ըղոնք էլ ամեն օր գիկան, ամեն օր էլ՝ կիդա: Մէ մարտմ' գմդած, կ'սէ. «Մէ բան կա, օր է մարտ եղան փող գթապէ»: Կ'սէ. - Այ երիդասարդ, ետ ի՞նծ նրադագով է եղան փող գթապիս: Կ'սէ. - Յըս էգեր իմ Դունյա Գուգալի համար: Կ'սէ. - Լա՛վ, օր էդպես է, յըս քեզի խրադ գիդամ. Դունյա Գուգալի մարտ՝ Ուստա Նաջարն է, իրան իսանուտ ցուց կիդամ: Գէրտաս իրան մոռ, կ'սիս. - Ուստա Նաջա՛ր, յըս մէ ախրիգ իմ հավնէ, էգեր իմ քու մոռ, օր մի հադ մադանի շինիս: Ինք մադանին գշինէ, տու մ'հսօր գտանիս, կ'սիս. - Ուստա՛, Վըլը տարա, ըմ նշանած չիավնավ, ա՛ռ էդ մադանին, տուր քու կնգան: Երգբորտ անկամ, - կ'սէ, - բիլագուգ կիդաս շինել, երրորտ անկամ՝ քըմըր կիդաս շինել, էլի գտանիս կ'սիս. - Չիավնավ, տար քու կնգան, ինչքան փող էլ օր գուգէ շինելեմ՝ տուր:

Էդ մարտ, ուրենս, իրենք էլ գպադրաստէ, ինչքան փող գուգէ կիդա. մադնիքին՝ դաս օսկի, բիլագուկին՝ հիցուն օսկի, քըմըրին՝ հարուր օսկի, ու գուգէր եդ կիդա: Էդ օր եդ կիդա, Ուստա Նաջար կ'սէ. - Այ մարտ, տու էդքան աբրանք շինեցիր տարար, քու նշանած չիավնավ, արի՛ քու փող իդամ:

- Այ տնաշեն, ի՞նծ զենին փող, ընքան ունի՞ն, տար ըդրանք դուր քու կնգան: Գաանէ ուստեն կիդա կնգան: Կնիգ գլխու գընգնա կ'սէ. «Էստեդ մի բան կա»: Արտեն քըմըրն էլ դվեր ը, էն մարտն էլ ըսեր ը, օր իսանուտի բոլոր ֆուա, ուրիշ տեղ չըստաս: Օր քըմըրն էլ կիդա, գկարէ, իրան մեճկովն է, մարտուն կ'սէ. Ըըր էդ մարտ օր բերեց եղան փող թապեց ու փող էլ եդ չառավ, դու չկ'ոցա՞ր էդ մարտուն բերեցիր տուն պադիվ:

- Վըլը՛, - չըս ըսէ:

- Այ մարտ, ամո՛տ է, անհարմա՞ր է, ինչքան ժադ մարտ իս. Էսքան օսկի է թապէ, բիր գոնէ էդ մարսին՝ թամսգմ' ջուր խմէ քու տուն:

- Ե՛ լա՛վ, կ'սէ. - Երտամ րերիմ: Գէլնա յոտ դու գիկագէ Դունյա Գուգալի վրեն, գէրտա: Գէրտա դեսնա՝ տղեն ինդէ իսանուտի տուր գայնուգ. բարև կիդա, բարև կառնէ, կ'սէ. - Գխսդրվին, արի՛ մեր դուն խոնախ: Տեխն չեմ-չում գենէ: Գգորէ վլոն՝ գէլնա իկա: Գիկա տեսնա՝ օդրորտ, յոտ տուռ է գիկակէ կնգա վլոն: Յոտ տուռ օր գիկագէ, գտեսնա մէ սենյագ է՛ փըրդեն քըշուգ սերան, աստո՛ն ուրիշ բա՛ն չլա: Ուստա Նաջար գընցնա փարոդ էդէ, կ'սէ. - Դունյա Գուգալ՝ կ'սէ. - Զու դուն չավորի, էդէ, կ'սէ. - Դունյա Գուգալ, րերեր իմ դդին, այան-ման շինէ, տանին թըր ուլէ:

Գտանէ լավ ճաշեր, բաներ, գոնէ սեղնին, դդեն մող չիկա, կ'սէ՝ ճաշի վրայից նոր էլս, ախրժագ չունիմ: Կէրտա կ'սէ, - Դունյա Գուգալ, չուդէ, ի՞նծ էնին:

- Այ մարտ, - կ'սէ, - ըբը տու մարտ ի՞ս, էս մարտ հարուստ վաջառագան մարտ է, խո քու հացի կաբոդ չէ, հա՛, ակերեցիր, ընենք կացի բազարից. իսանի է, տանձ է, ծմերուգ է բերի, հավեսի համար գոնէ շերդմ' կուդեր: Գիկա դդին կ'սէ. - Վըլը, քու սիրդ չմնա, յըս գէրտամ դուրս, հըսնիմ բազար՝ դառնամ: Գէլնա - գէրտա, էլի յոտ դուռ գիկագէ, գէրտա: Դունյա Գուգալ գէլի փարոդի էդնեն, չուդիս - չխմիս՝ վրեն նայիս, գիկա բարև կիդա դդին, կ'սէ. - Եդ ի՞նծ խաղ իս իսանց Ուստա Նաջարի գլուխ: Կ'սէ. - Եդ բոլոր օր շինել իմ տվէ, հարուգ քեզի համար եմ շինէ, յըս քեզ համար իմ էգէ: Կ'սէ. - Ղեմ չիմ ըդրան, յըս էլ կասկած տարա, օր ըմ համար իս շինէ, բայց ո՞նց էնինք, օր կ'ոնանք էս դեխից դուրս իկանք: Յըս քայ խրադ գիդամ, օր դու եդ իրադով՝ կ'ոնաս դեխս' ջարիս: Կ'սէ. - Ուստա Նաջար օր բան գպերէ, ախրժագով կուդիս, ըդ օր բան չսիս: Միսօր գէրտաս իսանուտ, կ'սիս. - Ուստա Նաջար, տու ընծի մենձ ախապեր, յըս քայ փոքր ախապեր, յըս գիսնտրիմ քու սենյագի գողին ընծի դաս մետր հոդ իդաս, յըս ընդեդ սենյագ շինին, ըմ արրանք տրիմ էնտեիս, ըմ առուդուր էնիմ: Էն ժամանագ էդ տան միծից թունել գքցիս, մինճև իկա իմ սենյագի տագ՝ դուրս իդա: Էտպես գիանդիքինք, նոր կ'ոնանք պայման գարինք՝ իմալ փախնինք:

Դըմ զդեսնա Ուստա Նաջար առճի դուռ պացեց, Դունյա Գուգալ գմդնի փարոդի էդէ, դդեն էլ գլուխ գդնէ սենինին, որրես քներ է: Գիկա դեսնա՝ դդեն գլուխ դրեր ը սենինին, կ'սէ. «Լա՛վ է»: Դունյա Գուգալից խարար չէ, այնինչ իրանք պայման գարեր ին: Գէրտա շինէ սեղան, դդեն ախրժագով գլուէ, գէլնա - գէրտա: Գէրտա ջաշարան, գիսնան՝ ընգերներ էգան, դէ՛ թադի սադ երիդասարդներ կերցտ - իսցեր է, գապեմէ, օր հողամաս է ատ, գուգէ տուն շինէ: Ըդոնք կ'սին.

- Ե՛ քու գործ չէ, իրգվա լուս՝ քու սենյագ գայնուգ գէդինի: Գէլնա երտա իսանուտ, կ'սէ. - Ուստա Նաջա՛ր, յըս վաջառագան մարտ իմ, էգեր իմ է քադար. տուն չունիմ, տե՛դ չունիմ, գուգիմ ընծի տաս մեար հոդ իդաս քու սենյագի գողին, իմ արրանք դնիմ հօն, ծախիմ, յըս քայ փոքր ախապեր, դու ընծի՝ մենձ ախապեր: Գմդածէ: Իդա - չիդա, գէրտա Դունյա Գուգալին գիարցու: Դունյա Գուգալ կ'սէ. - Զու դուն չավորի, էդ մարտ եղան լավություն էրեց, տու տաս մետր հոդ ի՞նծ է, օր չըս իդա: Վըլը, գիամածանվի, դդեն գէրտա ընգերներուն կ'սէ, նույն րորեցին գիկան, կոլեր գգորին, գիորին, ֆուրդունչին ավագ գպերէ, մեգ ցեմենդ գպերէ, վերծ, մէ օրվա մեծ էդ շենք գկայնցուն, գծածկին, գպադրաստին: Արտեն գտեդավորիվ էնտեիս: Գէրտա էն ծանուտ ընգերոն լէ գպերէ, գաղտնի թունել գքցէ, օր մինագ էրգսով իմանան, ինք գէրտա գործի: Թունել գքցին, գդանին Դունյա Գուգալի սե-

նյագի դագ դուրս գիանին: Դունյա Գուզալ գտասավոր, իյալին գքց վոեն, Ուստա Նաջար ըսկի հյաւբար էլ չէղնի: Դեն արտեն գտեղավորվի էղեխ. «Ի՞նձ էնին, օր հասնին իրար»: Գերտա, որբես թե հարևանի ախճիգն է գուգէ, էն մողիդ ընգիր իյորուրտ գիդա իրան, կ'սէ. - Գյանիս Դունյա Գուզալի մաղմիք, ցուց գիդաս, կ'սիս. - Ուստա՝ Նաջար, եսօր մէ մաղմիքմ' իմ առի բազարից, դարեր իմ, ոմ զմիգ հավեեր ր, դես տու էլ գիավնի՞ս, էն օր կ'սէ. «Դար, բարով մաշիք իրար», բիլազուկ լէ էղաւս կենի՞ս, քրմր լէ: Դեն զվերու Դունյա Գուզալից մադանին, զաքեր ցուց գիդա Ուստա Նաջարին, կ'սէ. - Նե՞ս գիավնի՞ս: Ուստեն զշշմի: «Այ մարտ, էդի իմ շինած մադանին է, օր շիներ իմ, իրա նշանած չիավնէ, դվեր ր դարեր իմ իմ կնգան»: Լա՞վ, - կ'սէ, - դու նստի հօս, յըս էլնամ դուրս իկամ: Օր գէլնա դուրս, վւազ-վւազ գէրտա դուն, յոտ դրու գրանա - փագէ, մինչև գիասնի Դունյա Գուզալի մող, արտեն դդեն իրան տան միծով՝ գիասու մաղմիք, գդնէ Դունյա Գուզալի մաղ:

- Դունյա Գուզալ, հօ՞ղ իս, - գրոռա Ուստա Նաջար: - Յա՛, ի՞նձ է:

- Յրմ պի՞ր դեսնամ քու մադանին:

- Խսո՞ւս, քրիստո՞ս, այ մարտ, մադանին իմ մաղն է:

- Այ Դունյա Գուզալ, էդ մարտ պերեց մադանիմ' ցուց դվեց, ըսեց բազարից իմ առէ, ոմ նշանած հավներ ր: Նայեցի, էդի իմ շինած մադանին էր, օր չիավնավ, եհմի հանդէ քու մաղ:

- Այ մարտ, մինագ տու ի՞ս ուստա, էլ ուրիշ ուստա չկա, բրլքի ուրիշից ր առէ, գնա՛, գնա՛ հրլրէ վրեն, րու՛ պարով մաշիք իրար: Վրլը գէրտա կ'սէ. - Մէ պարծի ծերանա՞ք, պարով վայելիք իրար: Ախօր գաերէ բիլազուկ, էլի էդ տեսակ, էլի գիկա - կերտա, բիլազուկ հանդէ թեն, երբորտ օր գաքերէ քրմր, գիկա՝ երնդէ կնգա մենկ: Էլ գշիվրի գայնի. «Այ մարտ, էս ի՞նձ պան է»: Երգու օր գանցնի, դդեն գիկա, կ'սէ. - Ուստա Նաջար, եսօր իմ հարսնիքն է, տու էլ, որբես մենձ ախաբեր, ոդի իկաս ներգա էղնիս: Դուն գորկին է. դր, ըմբիս է գազմագերբէ, որբես թէ՝ հարևանի ախճիգն է: Դունյա Գուզալին արտեն դարեր իմ էդ դունը: Ուստա Նաջար գիկա դեսնա. «Յա՛, Դունյա Գուզալ հանդէ օդի, գտանա գիկա»: Յրմը ուստեն գիասնի դուն, առծի դրու գրանա, Դունյա Գուզալ քունելով գէրտա իրան դեխ գայնի: Կ'սէ. - Դունյա Գուզալ հօ՞ղ իս:

- Այ մարտ, իսո տու քու իշեթ ըս կորցէ, ո՞ւր բդէ էրտամ, յոտ դրու իմ վրեն փագեր իս: - Այ կնի՞գ, - գէրտամ էնդե՞ղ, տու էնդեխ իս:

- Այ մարտ, - կ'սէ, - էլ իմ նման Դունյա Գուզալ չկա», յըս մինա՞գ իմ: Կերծ գիամոգէ, գիւսպէ: Գիկան, գնստին սեղան, կուրին - գիմին, հարսնիք կենին, ուստի սիրդ թբուտ չիդա, էլի գէլնա - իկա, գիշէ՛ հանդէ տուն:

Գերտա հարսնքդում՝ հանդէ օնի, էլ վրիստեր բայտի, ի՞նձ էնը: Էդեսով մէ ամիս գանցնի, դդեն կ'սէ. - Ուստա Նաջար, արտեն իմ արրանք ծախեր իմ, ես էլ պսագվեր իմ, գուզալ քորիմ, էրտամ իմ էրգիր: Ուստա Նաջար էլ գուզեր, կ'սեր. «Աստված ջան, եա էդի կերտա, իմ սիրդ հանգստի»: էլ չգիտէ, թր դդեն ու Դունյա Գուզալ ինձ է գիանին իրան գլուխ: Փեղից մէ նգար ին շինէ, իսկական Դունյա Գուզալ, նույն շորերով, չուչելմ' ին շինէ, հանդ դանիք՝ գանցցէ: Դեն գիկա, կ'սէ. - Ուստա Նաջար, ֆայտոն բերիմ, բդի ոմ նշանած առնիմ, էրտանք: Ուստեն գիշէ՛ նշանած ֆայտոնից, թունելով գիկա իրան դեխ: Գերտա ներս. - Դունյա Գուզալ, հօ՞ղ իս:

- Այ մարտ, բբ որդե՞ղ իմ, յոտ դուռ վրիս փագիր իս, բբ ո՞ւր իմ, հանդիմ էստեղ:

Վերծարես, բրլքի դաս անկամ գէրտա-գիկա՝ չիամոգվէ: Դունյա Գուզալ կ'սէ. - Նէ օր տու չըս հավադա, յըս գէլնամ դանիք, տու դրսից գնայիս, օր ես հանդիմ դանիք: Ուստի սիրդ քիչմ' գիանգստի: Էլի գէլնա տուրս, գդեսնա՝ Դունյա Գուզալ հանդէ ֆայտոն նստուդ, գնայէ ֆայտոնին, գնայէ դանիք, գդեսնա, օր գնիգ հանդէ դանիքն է: Փառը քեզի աստված, - կ'սէ, - Դունյա Գուզալ դանիքն է, իսկաքիս, գարող է էղեխ պաներ շադ գա: Գնստին ու դէ բաբամ, գէրտան ծովը պերան: Արտեն նավլսեղն հեղ իյոսացեր է, գտեղավիրվն, իրանց արրանք գրանան: Ուստա Նաջարն էլ գդնէ իրանց նավ, կ'սէ. - Ոէ, բարի ճամպա ճեզի, գնացիք, բարով վայելեթ իրար:

Ըդոք գնստին նավ, գէրտան, ինք գնստի ֆայտոն, եդ գիկա, գրոռա. - Դունյա Գուզալ՝, ի՞նձ իս կայնէ, արի՝ ցած: Դունյա Գուզալ չիկա: Գէլնա դանիք, երմը ծեռ գիդա՝ բրոր՝ պրնգնա: Գիշէ՛ փեղ է, ինք էլ էնդեխ սիրդ գպայտի, գմեոնի:

Թողնինք Ուստա Նաջարին մեռուգ, դառնանք ջիուդին: Տդեն օր գիասնի տեղ, ջիուդ կ'սէ. - Դունյա Գուզալ ի՞նձ է, յըս իմ էդի պաջառ, օր տու կնացեր իս պերի: - Այ ջիուդ, - տու մենձ մարտ, տարիքով մարտ, ես իմ կացի, եղքան չարչարանքով պերի:

Կ'սէ. - Ես օր փոդ չիդենք, տու ո՞նց գէրտեր:

Վերծ, ջիուդ գէլնա էրտա թակավլորի մոդ պողոր:

- Թակավլոր աբրած կենա, - կ'սէ, - օ՞վ է դէսէ, դդեն էլնա՝ մոր սիրտ: Թակավլոր զգարմանա. - Էդ իմ ճիուկ է:

- Յա՛, - կ'սէ, - իմ դդեն էլի, իրան մորդ գսիրէ:

Թակավլոր մարտ գուղարգէ, գիկան դանին դոյին: Գտանին - էրտան, թակավլոր կ'սէ. - Այ դդա, էդ ի՞նձ բան է, տու դնչի իս ես մարտու ընդանիքին սիրէ: - Թակավլոր աբրած կենա, ես էդ մարտի ընդանիք չեմ սիրէ, եդ իմ ընդանիքն է: Ոէ, ջիուդ վասջառագան մարտ է, օր

գգորե, գկանճին ջալլաղմին: Թակավոր կ'սե. - Դարեք, ես երիտասարդի գրուս կդրեք: Գտանին դուրս, գտգոցուն, օր զըրգին, գտեսնան թակավորագան գոգրանդ հանդէ թև կարուգ, գդանան եղ զպերին, կ'սին. - Թակավոր աբբած կենա, մեք իրավունք չունինք, չընք կ'ունա ես մարտու գրուս զըրգեք:

- ከምዬታ፡

- Հանդէ թակավորագան գոգրանդ կաբուզ: Կ'ս.

- **ԲԵՐԵՑ ՄԵԽԱԿԱ:** Գայերին, գնայէ, օր իրան թակա-  
վորագան գոզբանդն է, կ'ստ. - Այ տղա, եղ գոզբանդ  
քեզ ո՞րդեխից: Կ'ստ. - Իմ մամն է տվէ:

- Քու մամ որդե՞իսն է, կ'սէ՛ էսինչ տեխ:

- Հա՞, - թակափիր գընգնա զլխու. «Ես ինչ տարին  
ես մէ ախճգա հեղ մացեր իմ»: Դըմը կ'սէ. - Տարեք, ջիու-  
դի գլուխ կդրեք: Նոր դդի վրեն զստիրտ, զպաղմէ, թէ՝  
հալ-հեկիատ եղաբես եղավ. յօս օր ծնվեր իմ, ընծի բիջոն  
գկանճեն, օր եղա դասնիհնգ դարեգան, օրմ' ըսի՝ բի-  
ջո անուն չկա, ընչո՞ւ ընծի բիջոն կ'սին: Ըսի օրմ'. - Ալ  
մեր, ո՞ւր է իմ հեր: Իրան եռոր ցուց դվեց, ըսի. - Ըդի քու  
հերն է, բը իմ հերն ո՞ւր է, ըմ հոր տեղ ըսաւ: Նոր պադ-  
մեց, օր մէ թակավոր է եգէ՝ դավրեշ բարայի շորերով,  
գիշեք մանցեր է իրան մող, եղ գոզրանո՞ ի՞նք է դվլ: Օր  
եղաբս գ'սէ՝ թակավոր գիշատտվի դդին, գիամպուրէ,  
գուրիխնա, գջամպէ իրան ընդանիկն էլ գաերէ իկա, նոր  
տղին էլ Շունյա Գուզալի հեղ գզարկէ, թագն ու պսագ  
գենին, իրանք գիշանին ուրանց մուրագին, տուր է՝  
հասնիք ձեր մուրագին:

## 22 (24). ԱՐԱՄԱՅԻՒ

Սէ պառավ գնիգ գեղնի, մէ դրեմ գունենը, անուն՝  
Արամայիս: Շադ քըսիր գեղնին. դրեն գերտա ամեն օր  
մեշից փեղ զաբերէ, գտանէ բազար ծախտ, բերէ մոր  
պայէ: Օրմ' էլ գտեսնա՞ ծառի վրից մէ դրւշ գթոնա, գել-  
նա ծառ գիշէ, անի մեծ մէ հաղ հավզիտ կա, գառնէ եղ  
հավզիտ դնէ ծոց, շըլագ գշլէ, գիկա դուն: Գառնէ եղ  
փեղ ու հավզիտ գերտա րազար: Աէ ջիուդ գիկա, կ'սէ.  
- Այ դղա, եղ եավզիտ ծախտ՝ է: Կ'սէ. - Հա: Ըրը կ'սէ. -  
Ի՞նձ իդամ: Ա՞չ, ցերւդ գտեսնա, օր երի անկին քար է,  
դրեն բանից բեխարար: Կ'սէ. - Աղա՛, ինչ - օր իրա գիշօ-  
է, է՛ն բդի իդամ: Ձեռւդ գինա, թե դրեն գինա, օր երի  
անկին քար է: Կ'սէ. - Օսկի՞ իդամ կիդա՞ս:

- Ե՛, - Ա'սէ, - Արա՞, ի՞ս սո՞ո ծա՞ոո կեցիս:

- ԶԵ՞ - կ'ստ. - օսկիմ՝ կիդամ: Դեն ուրախ-ուրախ գառնէ օսկիմ իկա, մոր կ'ստ. - Այ մեր, եսօր դարը են հավզիտ մէ օսկով ծախտեցի: ԶԵ, մերն էլ քըսիր կնիգ. զգինա, թը աճկիմ քար ը, կ'ստ. - Այ րալամ, թէ կոնաս՝ եդ ոշին րոնէ բեր - եգո մեր տուն, շինենք խւփուզ, տնինք մեծ, մեր տան մեծ կածա, հեղեն՝ գծախինք: Վորո, ողեն գերտա, ողուշ երնդէ բնի պրեն, փա-

յամ' գքց՛ բռն ղուշ իկա տուն, գշին խափուզ՝ դմենք, ամեն օր հավդիտմ՝ գտան ծախս, ել չերտա մեշեն: Ամեն օր, եղ ջիութ մեգ-մեզ օսկով՝ կառն եղ հավդտներ: Յարուր օսկի կիդա կառն հարուր հավգիտ, դէ, անկին քար է, գմղածէ, կ'սէ: «Ո՞նց էնիմ, օր եղ տղին խայիմ, եղ դուշ առնիմ ծեռքեն»: Ինչ գէնէ, դդեն ղուշ չիդա, գէնա երտա թակավորի մոտ պյուղոք, կ'սէ: - Թակավոր աբրած կենա, եստեղ մէ դդա կա, անուն Արամայիս է, քըսիր կնգամ՝ դդա է, մէ դուշ ունի, օր անկին քար է կածա, եղ դուշ քեզի է վայել, քու սենյագի մեճ անգին քար կածէ:

Թակավոր գկանչէ Արամայիսին, ողեն գելնա էրտա:

- Թակավոր աբրած կենա, - կ'սէ, - ըՆչի՞ իս ըՆծի  
կանչէ: Կ'սէ. - Լսեր իմ, մէ դուշ կա քու մող, եղի իմ  
պալարդին է արժանի, գերտաս պերիս:

Դղեն գլխու գընզնա, օր էդի ջիութի բաներն է, ճար  
գկորի, դէ՛ թակավոր է, ըսեց՝ ըսեց, գերտա թերէ լուշ.  
Կիդա թակավորին: Թակավոր գվերու էդ դուշ, խափուգ  
կընմ էնտեղ, օրագան մէ անկին քար կածէ, շադ գու-  
րախսնա, կ'սէ. - Ըս խըգինեն անկին քար չունեք, ի՞նչ  
լավ էդավ: Դղեն շադ գմդածէ, կ'սէ. յըս բոհի իմ հըյիֆ  
հանիմ, դէ ջիութի դված օսկեք իրան մոդն է, գտանե  
ծեռքմ' լավ վաջառագանի շոր գիդա կարել, գիկա  
գսկսէ գողուտուն էնել: Գերտա թակավորի խըգինեն  
գկորէ: Գէնին թընձ՝ չոն կ'ոնա գող բոնի: Ուրիշ թակա-  
վորներ ածիծանա եդ թակավորի վրեն. - Այ մարտ, դու  
ի՞նչ թակավոր իս, օր քու քաղքի մեծ մէ գող կա, քու  
խըգինեն էլ կորեք ը, դու չըս կ'ոնա բոնի:

Դդեն գիակնի վաջառագանի շորեր, գերտա թակավորի մոդ, կ'սէ. - Թակավոր արրած կենա, գիղե՞սիմայ օպաննիս: Կ'սէ. - Ի՞նայ:

- Սէ դևա արրանք բարձ ու թող քաղցից դուրս անդեր, անդիրագան բրախտ, բայց պաեագներ դի՛ր եղ գող ուր եղնի՝ գիկա գողուայան: Օր դևեն տառապ՝ օգընին:

- Վոյք, - Աստ, - Եղի լավ խոար է

Իրզվան դևեն գրառնան, չորս գորիծ դդաների կ'սէ. - Դարեք քաղաքից դուրս րրախնեք, դուք պատդի մեր, տեսնինք ի՞ն օքո օ՞վ է:

(Ե՛, տեսնինք Արամայիս ի՞նչ գենէ): Գերտա դում,  
գիակնի հասարագ շորեր, ուղելիք - մուղելիք, խմիչք  
գընէ ջերեր ու երկելով գերտա: Պահագնին գիկան  
առօն։ - Ի՞ն մարտ իս: - Ե՛, - կ'սէ, - ես ծեզի մեռնին,  
անջախ գդա ծեզի, արեք քեֆմ' էնինք: Գմդածին. «Այ  
մարտ, եղ մարտ իսնուգ մարտ Ե, ջերեր լիք ուղելիք-  
խմելիք», Վըլը, գնատին. գուղին-խմին մինչև ուշ կիշեր,  
թը եա գող կիը՝ բռնին: Արամայիս տու Արամայիս, լա՛վ  
գիսցու ըղբանց, մինչև կգլորվին քնին: Արամայիս  
դևն գքաշէ պեր, աբրանք գդելավորցու, դևն գքաշ  
կերին մորտէ, գերտա, զմանորդ գլա կարսներ ու գշարէ

հօն: Գլուսնա: Առավոր պահագնին գէլնան, ի՞նչ էլնան. ո չ դեմ, ո չ մարտ, ո չ մադաք: Քոռ - փոշման գէրտան թակավորին գպաղմին, թե հալ-հեկիատ՝ եսքես օյին խաղավ մեր գուստ եղ գող: Ըբ՝ ի՞նչ էլնինք: Վըզ, Արամայիս գէլնա միսօր, գիակնի նորից վաշտագանի շորեր, գիկա թակավորի մող:

- Թակավոր աբրած կենա, - կ'սէ, - ի՞նճ եղավ, գող բոնի՞ք: Թակավոր կ'սէ. - Ել մ'հաջու, գող պահագներոն խմցրէ, դեմն էլ անհայդ կորուգ է, չկա:

- Ե՛, կ'սէ. - Թակավոր աբրած կենա. - գող իմի դեմն մորտեր է, լցէ կաըսներ: Գնա մէ ջադու պառավմ' գոյի, թող երտա դկի միս գոնա:

Վըզ թակավոր գկանձէ մէ ջադու պառավ, կ'սէ. - Պառավ, եսքան օսկի կիդամ քեզի, միան առւ ման իկաս, բըլքեմ դկի ջանդագ գոնաս: Ալ հաղ էլ փեչչադ գիդա, կ'սէ. - Որդեխաց համիս դկի միս՝ փեչչատ գըրդակս դուան. (Դը, չէ՝ Արամայիսն ը սովլոց): Գէլնա Արամայիսն էլ գէրաա, մէ հաղ եղանս փեչչադ գսարկէ, նույն ձեմի, գիակնի քոչող շորեր, գէլնա դանիք: Գէլնա դանիք, գդեսնա՝ են պառավ հարց ու փործով գիկա կայնի իրանց դուու: Մեր դուու կէդմի: Գիկա կ'սէ. - Բարև, քույրի՞գ ջան:

- Բարով, հըգա՞ր րարի:

- Քո՞ւր ջան, - կ'սէ, - ձեր դուու ըսկի դկի միս չկա՝, իմ դոնեն հըգը յոտ դարի իիվանդ է. կուտեկան յարա է թապէ վորեն, կսին, օր դկի միս ուղէ՝ գսախինա:

Կ'սէ. - Այ քուրս, մեր դուու դկի միս ի՞նճ գործ ունի:

Դդեն գիճնա դամքից, կ'սէ. - Յը, պասուավ, ի՞նճ կա: Կ'սէ. - Բալի՞գ ջան, էգա դկի մսի համար, հարցրի, քու մեր ըսեց՝ չկա:

- Իմա՞լ չկա, մեր դուու լիք դկի միս է:

- Ըբը քու մեր ըսեց՝ չկա:

- Յա՞ - կ'սէ, - եգո, կիդամ: Պառվին գըերէ ներս, կ'սէ. - Պառավ, միս կիդամ, րայց քու մէ թէ՝ գկորիմ: Պառավ գշիկրի. ի՞նճ էն:

- Ե՛, - կ'սէ, - ջայնամ, թող մէ թէ չէդմի: Գաերէ դդեն պառվի առբրագ լիք միս գլա, պառվի թէ լէ գկորէ ու գոնէ ջամպու: Պառավ գէլնա արնթաթախ, դուու գիեչչադէ ու գէրաա: Օր գէրաա, Արամայիսն էլ գէլնա էլեմեն, մեզ-մեզ դուու փեչչակով գէրաա, գէրաա գիասնի թակավորի դըրգահին, են էլ գիեչչադէ ու գըրորդէ կիկա: Պառավ գէրաա թակավորին աչքալուսեթ կիդա, կ'սէ. - Միս բըրեր իմ: Թակավոր գուստախւան, գէլնան օր իկան գողի դուու, որ մէ տուու գէրտան՝ փեչչադ, վե թճ, չըն կ'ոնա գոնա, դէ՝ պառվու թէ լէ կդրեր ին: Ի՞նճ էն թակավոր, օսկին կիդա պառվին, խրգէ տուու: Երգու օր գընցնա, Արամայիս գէլնա իկա թակավորի մող: Կ'սէ. - Թակավոր աբրած կենա, գողին գոյա՞ք:

- Ե՛, - կ'սէ, - եղ ամիրավ պառփու թէ կդրեր է, սադ դոներ լէ փեչչադէ է, բըլքեմ իմ դուուն էլ փեչչադէ է,

չկոցանք գդանք: Կ'սէ. - Թակավոր աբրած կենա, բանմ՝ էլ ըսիմ: Եթե քու ախմիգ դամիս քաղաքից դուրս, չադր գըրգի՞ն, քու ախմիգ դրիս չադրի ապագ, եղ գոդ ուր էղնի, կէրաա քու ախմգա մող, եղ ժամանագ կ'ոնաս գոնին բոնիս: - Վըզ, - ըսեց, - ըրի լավ իրատ է:

Գիանէ ախմիգ քաղաքից դուրս, չադր գգըրգէ, պահագնին գդնէ, ինք գիկա: Արամայիսն էլ գիկա իրաա պաղրաստություն գդեսնա, իրգուն էլի գվերու ահակին ու դելիք - խմելիք, գէրաա: Էլի պահագնին գիկան առնէ: Էլի գիսապէ պոլորին, գլսմցու, ինք գմնա թակավորի ախմգա չադր: Ախմիգ գդեսնա, օր մէ երիդասարդ էգավ:

- Այ դդա, ի՞նճ մարտ իս: Կ'սէ. - Ես էն գոդն իմ, եգեր իմ քու մող գողության: Վերծ, ախմգա մող գընի, գիկա օր իկա՝ ախմիգ թէ գպոնն: Դդեն խիտրի է, գաերէ պառվու թէ իդը ախմգա ծեռ, (ընգից կաբել է դուրս), ինք գըրորդէ գէրտա՛ որրես դրսու հաշիվ: Դէ, գիշեր է, գժըժիւ տեսմա՝ պառվու թէն է չադրից կարուգ: Քոռ - փոշման, գըրորդէ լուսուն երտա, դէ՝ արտեն ախմգա մող էլ քներ է, ախմիգ գէրեխտովնա, ինն ամիս, ինն օր գլունա՝ ախմիգ մէ տղա գունենա: Դդեն գէդմի համարյա տարեգան, Արամայիս գէլնա երտա թակավորի մող, կ'սէ. - Թակավոր աբրած կենա, ես օր քեզ ըսի՝ չադր գըրգիս, ախմիգ տանիս իօն, գող բոնիս, ի՞նճ եղավ, գող բոնի՞ք:

- Տո՛, - կ'սէ, - Վագն անցի, եղ ավագագ, շան որախն իմ ախմգա մողն էլ քներ է, հիմա էլ մէ աղա է բերտ, ի՞նճ էնիմ, չկիդեմ: Կ'սէ. - Գիլես ի՞նճ երա, քաղաքից դուրս դուրան - դուգ է, մէ՛նծ սեղան շինէ, թող ամփող քաղաք իկա սեղանի վորեն, ինչըթե հարսանիքի սեղանին, - կ'սէ, - թող քու ախմիգն ուղելու ժամանագ քոնէ տղի թէ ու մեզ-մեզ զերգա ման իկա ժողովրի մեզ, ուր եղնի՝ եղ տղեն իրան հոր գ'գնա, արուն գըաշէ:

- Վըզ, եղի լավ իւելոք իսուր է: Մ'իսօր թակավոր հայդարարություն կիդա, ծաշ գպաղրաստին, սեղան գշինին քաղաքից դուրս, դուրան դաշահի մեց: Ե՛, թապէր ին քաղքցիք՝ հերառվ զերգա-զերգա նսաուգ ին, Արամայիսն էլ պալտոմ' է հակէ, նարասաագմ' էլ դրեր է ծոց գացէ, որրես թէ խեց մարտ է: Ուրեմս, ախմիգ գպոնն տղի թէ, մեզ-մեզ զերգա ման գիկա, տղեն գէրտա դկի հեր, եղի նարաստագի գլուխ ցուց կիդա, օր ցուց կիդա, դէ՝ երեխւ է, գվախենա: Եղաեսով, գմիամցու, նարաստագ գըորդէ ժողովրտի մեճ ու ինք գաոնն տղեն ու գիախսնի, ժողովուրտ գիսապին իրար, իհ նարաստագ, իհ նարաստագ էն գիշին՝ դղեն չկա, ուր ման գիկան՝ չըն գդնա, էլի քոռ - փոշման, եղ գիկան: Արամայիս էլի գէրտա, հակնի վաշտագանի շորեր, գէրտա թակավորի մող:

- Թակավոր աբրած կենա, գողին գոյա՞ք:

- Տո՛ ո՞ւր գդնանք, դդեն էլ գողցավ: Կ'սէ. - Յըս

իմ գողցի: Ե՛. - Կ'ստ. - Դր՝ լւ ծաղր գենիս վրես: Կ'ստ. - Վըլը՛, յըս իմ գողցի, համդէ իմ տուն: Թակավոր կ'ստ. - Այ մարտ, եղ ի՞նձ րան է, եղ ի՞նձ օյին եր խաղար իմ գլուխ, ամփոդ քաղաքների թակավորներ ծաղր ենին ընծի: Կ'ստ. - Թակավոր արրած կենա, եղ են օյին է, օր ես մի հադ դուշ ենք պեր, ըմ մոր գպայենք անկին քարով, ջիուտ եգավ քեզ իւարայր տվեց, տու եր դուշ իմ ծեռքից առար, յըս լւ ըդ ոյի հըլիքն եր հանեցի քեզնից: Թակավոր կ'ստ. - Դալայլ եղնի քզի, օր տու եղքան օյին հանիր իմ գլուխ, հաւալ եղնի, ախճիզն էլ կիդա Արամայիսին, գպրծնա:

### 23 (25). ԸԼԻ ԲԷ ՓԱՅՔ

Գեղնի մէ թակավոր, դարին հաղմ՝ գերտը ուր գնգա մոդ: Որվեշ՝ ուրին մշաց գեղնի: Երգու դդը եղնելուն՝ անուն գտրը. Ըլի - վրայի, Ըլի - փայի: Օրմ՝ գանծին գդը թակավոր ուրիշ թակավորի մոդ՝ ժողովի: Գըսը. - Այ գին, յըս գերտամ ժողովի, ուր ժըմընագին գիկամ, մարտ գուր ժըմընագ չզորցու: Ըդ օր՝ ժողով շար գրգնը: Դըլքեշի ածկ՝ հընդը թակավսրի գմիզ: Գերտը հակնի թակավորագան շորեր, թակավորի կնիգ քնուգ գեղնի, գերտը գնգա մոդ, հեղ գիկը: Գես կիշեր՝ թակավոր գիկը երտը թակուին մոդ: Թակուիին գըսը. - Թակավոր, ես ի՞նձ պան ը: Թակավոր գուր րոուգ գիրծը ու եղ գտառնը: Եղ գտառնը, չխուսը: Գնիգ գերեխովնը (Վերճարես, հեկյատ եր), գըգըղի, գեղնի դդը, անուն գտրին: Ըլի րէ փայի:

Թակավոր գիկը մեռնելու, գ'գանճը գուր իրեք դդան գըսը դդեգնուն, մեծ դդին գըսը. - Յըս զմեռնիմ, ծգի երգուսով փայի գվերուր, իդոր՝ փայի չիդաք: Դիեգնին գըսին. - «Ես ի՞նձ պան ը, մըր հեր ըսեց՝ իդոր փայի չիդաք»: Թակավոր գմեռնի, գդանուն թադին, իրեք դդան էլ գամուսնանան, գպաժնվին, ըդուր փայի չըն իդը: Ուր մեր գըսը. - Կացեք Ֆլան թակավորի մոդ, հըսուց ուրան փայի, հըսուց, չիըսուց՝ յըս ի՞նձ ենին: Գելին իկան ջամպան. մեծ առածն ը, միհնեգ մեծն ը, րգիգ՝ եղև: Ըդի գըսը. - Դի՛ղվը՝ գնիգ ը ընցէ, մըգել՝ ըուըկելով ը կնացի, պայժ երեխով ը եղի: Գնգա դեր գիկը հըսնի ուրանց, գըսը. - Ըս գնիգ ո՞ւր ը, տուք եք կդի: Գըսին. - Բու գնիգ մեք չըք կդի, մեք իրեք եք, առւ լը չուս, երտանք՝ քու կործ քեցու:

Ըրը. - Ի՞նձ կիցաք, օր ըմ գնիգ ըուըկելով ը կացի: Կացեր ը ու ես դացի:

- Ըր՝ ի՞նձ կիցաք երեխով եր: Գըսը. - Զուր ծեռվին գըրգեր ը, ել գայնէ: Գըսին. - Քե՛լը: Գերտամ ջամպան, մեգ գըսը. - Դի՛ղը դէ ը ընցէ, միհնեգ գըսը. Դն ը ընցէ, պայժ պարծուգ ը եղէ. մէ տեն մեդր ը եղէ, մէ տեն՝ աղ: Բգիգ գըսը. - Աւ ածվին քոռ է եղէ, մեգ՝ լուս: Գիկը ուրիշ մեզմ՝ գըսը. Ըս դեվան գորէ, առ՛ւք եք կդի: Գըսը. - Մենք

գքու դեվում չընք կդի: Գըսը. - Ըր՝ ի՞նձ կիմեք, օր պարծուգ էր: Գըսը. - Աւ օդվին խորուն ը կացի: Ըր՝ ի՞նձ կիմեք՝ մէ տեն աղ էր, մեգ՝ մեդր: Մեղրի տեն՝ ածվին լուս ը եղէ, գերեր ը, պայժ աղի տեն՝ չեղէ: Գըսը. - Եղանք մեք իմնգ հոգի, երտամք դադարան: Գերտամ, գերտամ, հըսնին թակավորին, թակավորի վրեն գիարցուն: Ոնց որ րադմեցի, ըղենց գներգայացուն թակավորին: Թակավոր մեգին գըսը. - Կնը կաշը գքու գնիգ, ըղուք չըն կդի: Դակ դիրուց գըսը. - Կնը գքու դեան կաշը կդի, ըղուք չըն կդի: Թակավոր գըսը. - Զըդ իրեք դդան դանուն ուր, հաց - պան իդամ ուրանց: Գաերը դդուն, մեգ միս գպերը, մեգ հաց գպերը, կիմի գպերին տրին: Մեծ գվերու գըսը. - Իդը՝ մեռելի արուն ը, մըգըլ գըսը. - Իդը՝ շան միս ը, մեգ լը գվերու գիաց ուդը գըսը. - Իդը մեռելի հոդ ը գիկը: Թակավոր գգանճը գմշներ գըսը. - Արե՛ք եզդեխս: Գանճը գրադրանչին գըսը. - Ես ի՞նձ կիմի յը: Գըսը. - Թակավոր, քինը րըհիմ, ասսուց ինճ րըհիմ, մարտ իջ սպանի մըճ քու րադին: Ըրը իդը ի՞նձ հաց ը: Գըսը. - Եդ լը կերեգմնու ցորեն ին քադէ, դարէ աղցէ: Ըրը իդը ի՞նձ միս ը, գըսը. - Թակավոր ը, մակին սադգավ, շուն թըմեր եր, դարեր ինք ծսցէ շան, ըն կառն իջ մորտէ: Թակավոր գըսը. - Ըդոց տադ յըս չըմ գըոննը ենի, ըդի շադ գոռ ինայիր ը:

Գրարդին: Ախճիգ գըսը. - Դայըի՛գ, առավոդ յըս գերտամ էնիմ գըղոց տադ: Գիակնիմ գքու շորթ, գերտամ էնիմ գտադ: Գըսը. - Ախճի՛, ո՞նց գենիս: Գըսը. - Գենի՛ն: Առավոր (պարի լուս պացվի վըր ծզի, կառէ ջան, հըսու ծըր այլուր նրադագին), ախճիգ գիակնի գթակավուագան շոր, գիկը մդմի: Դիեգմին գմդմին, կիման, օր ախճիգն ը, պայժ դդի շոր ը հակած: Պայրէ գիդան, գիսունարվին: Գըսը. - Յըս սիրահարվը մէ ախճագ վըրեն դասնութ դարի, ըդոր հեր գախճիգ չըվեց ընծի, ուրիշ մարտու դվեց, ախճիգ իյոստացավ ըսավ, - Ախճն քու մոդ չիկա՞մ, յըս ըն մաքտու մոդ չըմ երտը: - Գըսը. - Յըս րարգուգ ենք, ախճիգ գտուու թիթիսուց, եգավ, ըսավ՝ եգեր իմ: Ըսի. - Ըհստանամ տու ընծի քուր երմիս, յըս քզի՝ քավոր եղնիմ:

Թոավ Ըլի րէ փային ըսեց. - Յըս եղնենք, չընք բոդ երտեր: Ախճիգ ըսեց. - Դիեք ջան, ծգի փայի գիրսնի, պայժ իդոր՝ չիմսնի, իդը Ըլի րէ փային՝ դըվրեշից ը եղի, կնացե՛ք, - ըսավ, - գիդաք, չըք իդը՝ ըդի ծըր հաշիվն ը: Էլան իրեք ախճեր, եգան ուրանց մամուն րադմեջին: Ըսավ. - Դեյ վա՛խ, դըվրեշն ը իւսայէ զիս, - ըսավ, - գիդեք՝ դվեք, չըք իդը՝ մ՛իդեք:

### 24 (26). ՆԱԽՆՐՃՈՒ ԴՂԵՆ

Գեղնի, չեռնի, մէ նախյրճիմ՝ գեղնի, շադ ախճադ գեղնին: Ավուր մեգ նախյրճին գընգնի չլիր ու հանգարծագի գմեռնի, գմնան գնիգ ու թըկ դդեն ախճա-

դության մեջ: Օրմ' լը նախրճու գնիգ դղին գըսը.

- Ա' բալամ, էկի կնը շըլագմ' կազ սիԾ, դար շուգին ծախը, առ կիլոմ ալուը, էրգու հադ լը՝ ընգուզ, օրեքան ըղքան մզի բոլ ը, գաբրվինք: Ըղբես, դղեն երմնօր գէրտը: Օըերուց - օրմ' լը դղեն կագիմ' դագ գիեսնը երկու վիշապ օժ երնտը գովին, մեգ սիվ ը, մեգ՝ գարմիր: Դղեն գընժնի գարմիր օժի յան, գսպանը սիվ օժուն: Գարմիր օժ գիկը փաթթվի դղի օդնիր, գիըսկցու, ըր դղեն էրտը իր էղիվ. Գարմիր օժ դղին գուանը օժերի թակավորի մոդ: Տու մ'սը, ըդի օժերի թակավորի դրեն ը: Զամախն դրին գտվըծու, գըսը. - Ըը թակավոր ըսը՝ ի՞նձ գուզիս, ըսը. - Քու պերնի հուկ լից ըս պերան: Ըղենց լը գէդիմի: Ըդ օդ դղեն ուշ գիկը դուն, մեր գըսը. - Ա' լառ, օրի՝ ուշացաը, սիրդս տառավ գորեգիմ' հադ:

- Ի՞նձ էնիմ, քընի եանի, քամին դարավ. - Գըսը դղեն ու գ'գառմի, կույնմ' գիդը, մեգ՝ գառնը, ամճնալով մամուն գըսը.

- Ա' մե՛ր, էկի կնը Ֆլան քաղեի թակավորի ախճիգ ուգը ընծի:

- Լառ, տու քու խիլկ թոցի՞ն իս, թակավոր մգի՞մալ ախճիգ գիդը:

- Տու կնը ուգը, ինձ էդնելու ը՝ գէդիմի, - Գըսը դղեն: Գէլի մեր փոխսի, գէրտը, եղնը քու ու փոշման յըդ գիկը, դղիս գըսը.

- Ե՛, լառ, ընգը քու իւելկին կացի, թակավոր ըմալ պայման ը գտըր, օր էդնելու պան չէ. Գըսը. - Քառսուն օրվա մեծ՝ օսկի պալատ մը գանգցու, գիդան ախճիգ:

Դղեն հուկ գքցը պերան, մուտ ու լուս՝ գպալատ գ'գանցու: Զարմանք զվերու թակավորին, պայծ ի՞նձ գընը ի՞նձ էնը, գէլի ախճիգ գիդը դղիմի: Ըդուք ուըախ, իըանց իըմնին գարովին: Օրմ' լը դղեն գէրտը ավշության, գիեսնը՝ խիդ թառար մը ջամպին նստուգ, գիսղը, գպերը դուն:

Տու մ'սը՝ ըդ բառար կախարդ գէդիմի, գիեղեվը, ըը դղեն ուղը ը գտըր հուկ: Կիշիր դղեն հուկ գիանը, գտըր պաժագի մը մեծ: Գէլի բառար մուտ ու լուս՝ կողնը ըդ եռլ, գէրտը: Տիման լուսուն՝ դղի մեր գիեսնը, օր իըանց առաճվա դունն ին. ոչ պալստ գը, ոչ եարս, դղեն լը ուշքաթափ ընգուգ ը կեդին:

Դղի շունն ու գադուն գէլին ընգնին ջամպը, գէրտան, ըր հուկ կրնան, թըճը քառսուն օր ըը թմի՝ ողեն գմեռնի: Շադ ու քիճ գէրտան, գիըսնին մէ միծ թակավորություն: Գէրտան ըդ թակավորի պալսաի գողեիր գֆոնուան: Սիրուն հարս մը գէդիմի շուշքըընդ գայնուց, վլագ գճանճնը իըանց շունն ու գադուն, գըսը՝ հայս, նիախ, ըդուք էգիր ին եռլն ը կաշին: Տու մ'սը, կախարդ թառար պերիր ը եռլ, ծախի թակավորի վրեն:

Ըդ եարս գէլի կիշերով, թոկ գթըլը շանն ու գադվին, գկողնը եռլ, գիդը ըդուց, գըսը՝ կացեք: Ծունն

ու գադուն գընգնին ջամպը, իըմը ջամպեն գ'գովին հուկի վրեն: Գադուն գառնը եռլ. մէ ծգից գմիդի, մյուսից գէլի, իըմը գիըսնին ծրի պերան, չգընը ծրու ընժնի, շուն չընցու գադվին: Օդի գադուն գնվնը, գէրտը ծրի մէ ծեր, գիկը մյուս ծեր: Թոճուն մը՝ գլւը ըդուը ծեն, գիսղը, գտըր ուր մեճկին, գընցու ճուր: Օդի եադմ' լը գ'գովին շունն ու գադուն, իըմը յասոր գմեռնի: Գրոդին իըանց գրիվ, վագ-վագ գիըսնին դուն: Հըդ իըսնելուն՝ գադուն հուկ գթըլը դղի պերան: Դղեն աճնիր գպանը, դեսնը՝ նույն ըր պալատ, ըր բահմեն, ը՛ր մամ, ը՛ր գնիգ: Գէնը քեֆ, ուըախուչուն, շան գգանգցու տուան մէ յան, գադվիմ' մյուս: Օքագան ըդուց թըժը միս գիդը, ըր լավ բըեին, հուկ չկոդնան, չէ՝ ուր գյանկ ըդուր մեճն էր:

## 25 (27). ՆԱԽՐՉՈՒ ԽԵ-ՁԻՎԱԹԸ

Ժւմանակով մեկ նախրչի կէդի, էտի տավար կտողվա, կէրթա չոլ: Հըմա կանորնա, կիւանա ուր երբան, օր իսաց ուտա: Կտիսնա՝ տավար հուշտ կէդին: Կիրիշկա՝ մեկ ադվես մըշ տավրին: Կրողա ուր իսաց, կընգնի ադվու էդեվ: Ադվես կիախի կմտի մեկ զադի մեչ: Խովկի կմտի, կտիսնա մեկ ամարաթ, իտուը մեծ սեղաններ երմեն փոռու են, ինչ ասված ստեղծեց ա՝ վրեն կա: Նախրչին ծեռ կտա՝ մեկ դուր կպացվի, կիրիշկա տիսնա՝ օթախ երմեն օսկի: Կմտի օսկին կժողվա, կիգա տուան մոտ, օր տուս էնա, կտիսնա՝ մեկ փիլիլան խութիկ, կասա. «Խոր միջի ճողդուն, փիլիլսւն քարերեն լէ քիչ մէ լցիմ յեմ իըբան, տանիմ իմ տղեն թըի ուըխնա»: Պուլ մէ էտա քարերեն կլցա իըրնի մեչ, մեկ լէ ծեռ կթալս, երմա՝ ծեռ կպակի խութուն: Մութ կտա, նախրչին կմնա էտենց, ինչ կանա՝ ծեռ չփրդի: Տու մի՛ ըսա, էտի հարամրաշու ամարաթն, էտան քառսուն ծիավոր կէդի, եիւան ծիավորներով կէթա ավար կէնա, կրեռա լցա տուն: Հարամբաշին մեկ գինվորի կողկա, կասա.

- Կնա ման արի, իըիշկա ամարաթի կողքեղ մացտ չմտի նես:

Զինվոր կէթա կպատի, մարդ չկա, կմտի նես, կտիսնա՝ նախրչու ծեռ կաթ խութուն: Կասա. - Ի՞նչ կէնէս: Կասա. - Ես նախրչի եմ, մեկ ադվեսի հեղեկ տվի էկավ էտեղ կորուսավ. Ես ծեռս ի թալի իդա խութին, օր քիչ մէ էտա փիլիլան քարերեն տանի յեմ տղին, ծեռս ի կպակ մնաց էտպես, յեմ տավար մնաց անտեր: Զինվոր կտանա Հարամբաշուն կասա. - Հարամբաշի, մէ խատ թիծա նախրչի էկէ, կաթ սնդկին:

Կէլին, իրազու իւետ կիգան ամարաթ: Հարամբաշին կասա.

- Բիծա՛, ընչչ՝ իս էկէ դըտի, մեճն էրթանք իւլի

**ՄԵՆՔ** թալնինք, տու էկեր ես յեմ ամարա՞թ թալնես:

- Յու րախու ընեմ, Յարամրաշի՛, յեմ վիզ մ'կտրէ, էրեխի տեր իմ, էտա ճլվլան քարեր կտանիմ յեմ տղին, օր խաղ էնա, ուրինանա:

- Լավ՝ դիձա, իղա դորուն րան չըմ էնա, հըմա չեղնիմ, չիմանամ էլ իկաս, թըճ՛ քու վիզ կողորիմ: Իյսքր՝ քըց գոր՝ էլ շադ ա, եսօր քէ խաթր էնիմ, ան գքու ժողված օսկին, քարեր, կնա՛ իտա տեխնեն, էլ չերևսն, թըճ՛ վերծ վաղ կեղի:

Նախրծին գիկա, ժողվա ուր տավար, գիկա տուն, հըմա քոչին կպահմէ հըմեն պադմուչուն: Անանց մեգել օր, նախրծին կրշա տավար սար, էլի կտիսնա՝ աղվես էկա՞վ մտավ մըց տավիրն: Կընզնա աղվսու հեղեվ, կերտա մտի գաղեն: Յարամրաշու գինվոր զիկա կտիսնա ինօր, կասա. - Բիծա՛, չէ՛ էրեգ հարամրաշին քէ խնայեց, ընչը՞ ես էկ:

Կասա. - Վալա, ընզա աղվեռ խետ էկա:

Նախրչին կտիսնա, օր հողի մէ խոր մէ կա, լիք մարտու կլուխս ա մեչ, հօվ էկէ, կլուխս չլդերին՝ լց հօն: Յարամրաշին գիկա, կտիսնա րիծին հօղ, կասա. - Չէ՛ ես էրեգ քէ թամրիսեց՝ չիգա՞ս, տու հօղի իս էգէ, հըմի քու վիզ կ'կողորիմ:

- Աստված սիրե՞ս, էրեխատեր իմ, էլ չը՞ն իգա:

Յարամրաշին իղա հաղուն էլ խաթր կենա, հըմա երրորդ հաղուն գիկա կտիսնա՝ րիծեն էլի հօղի, թուր կրալա վիզ գկորա, քցա էն խոր:

Նախրչու կնիկ ու տղեն կիրիշկեն՝ րիծեն չկա, գէլին էրտան տավար ժողվին, իգան: Լուսուն ընդա տղեն, էտա անուն Ասլան կեղի, կժողվա տավար գէլի սար, կասա. - Էրտամ - տիսնամ ի՞նձ էղավ իմ խեր:

Վախտ մէ գընցնա, կիրիշկա՝ մեկ աղվես գիկա, մտի տավիր մեչ, կիղա հեղին, կեթա մտի էն նույն գաղեն: Կիրիշկա տիսնա՝ մեկ ամարաթ, էնոր մեչ՝ լիք օսկի, արժաթ: Կեթա կկային էն խորի վրեն, կտիսնա՝ մենձ քար մէ կա վըր ռերնին, ինըն էլ փակիեցվան, ջոջ տղա կեղի, կվերցու էտա քար, կտիսնա՝ խոր գլուխ էտատեխ: Արուն կզարկա ուր գլուխ, կիրիշկա՝ պատեն մեկ թուր կա կախուկ, կվերցա էտա թուր, կմտնա տան քամակ: Յարամրաշու գինվոր կ'կա, կպտուտա, կեթա: Կասա. - Ասրտ չկար: Վախտ մէ գընցնա, Ասլան կիրիշկա, օր քառուն գինվոր ավար-գավար շալկուգ՝ գիկան: ԱԵկ-մեկ կզարկա, գինվորներու գլուխ կեղրա: Կտիսնա՝ էտոնց էղևն Յարամրաշին կիգա, էնոր էլ կզարկա, վիզ կես կ'կորա, կես կմնա վրեն: Ասլան կրողա ջանդեն, կեթա:

Նախրչու կնիկ կ'կա ուր տղի տիման, կասա. - Տղա լա՞ն, ո՞ւր կացիր: Կասա. - Իմ խեր սպաներ իմ, կացի իմ խոր վրեժ առա: Կասա. - Ասրտ ջան, տու կայ-նի տավիր հ'առեչ, ես էրտամ պան պերիմ:

Աեր կկային տավիր հ'առեչ, վախտ մէ գընցնա, աղ-վս էլի գընցնա տավիր մեչ: Նախրչու կնիկ գընցնա հեղեվ, գիկա մտի գաղեն: Կնիկ մեկ պատից կլսա, ծեռ կիդա՝ պատ կպացվի, մեկ յարալու ջանդակ կտիսնա: Էտի Յարամրաշու ջանդակ կէղի, մէ կերայ կիսասկու, օր նախրչու մէ ինճ հանեց ուր կլուլա: Կնիկ կրերա էնոր ուր տուն, մարկի մէ քոշեն կպախա: Օրմ՝ է րկու, իրեք՝ էտա նարտ կսաղնա: Օրմ՝ էլ նախրչու կնկան կասա.

- Արի՛ առնենք իիրար, քեզնից լավին չըմ գտնա: Տղեն կեթա չոլեր, կպտուտա, գիկա: Օրմ՝ էլ ուր մոր կասա.

- Մարտ՛, իմ խոր սպանվելուց հեղեվ տու շատ իս լավցէ, չաղցէ:

- Լա ո, ի՞նչն ա պակաս, օր չըշաղնամ:

Վախտ մէ գընցնա էտա կնկան մեկ տղա կեղի, կրողա էնոր Յարամրաշու գինվոր կընդան ուր սիրտ, Ասլանից կվախտենա:

Տղեն օր-օրի կջոջնա, կնիկ վախտու կփաթթա տղին, կղնա ճամփու մէ վրեն: Ասլան իրիգուն գիկա տիսնա՝ մեկ խրեղեն էրեխս, րարուրով դրուկ ճամփու վրա, շատ կուրիխնա, կգրկա գիկա տուն, կասա.

- Ասրտ՛ ջան, էտա տղեն պախտ, խովկներ կացեր ին սար, էտա խորոդիգ ռարուր թողեր ին: Ես երկու էծ կվերիմ, կաթ կթա, պախտ էսոր, խեր կե-նես: Տղեն կեղի տասնիսինգ տարեկան, Ասլան խոր ասսու չափ կսիրա: Օրմ՝ էլ Յարամրաշին կասա.

- Բոլ ա, ես եսման վախտով արրիմ, Ասլան օր ըն-ծի տիսնա, կիգա իմ վիզ կ'կորա: Այ կնիկ, արի տու էսոր ասա. - Ասլան ջան, էսօր մնա տուն, քու շորեր լվամ, քէ ծաշ էփեն, րու ա էղքան չարշըվիս: Էտախս խարա, մենք էնոր կրողնենք, մեզի մէ խատ րու ա, խոր էլ կենենք մեր մուլցին տեր, ես լէ արհիեին կար-րիմ, մեր կարգվիլն էլ՝ կալենցուք:

Ես երմեն խոսկ ու խորատեն պգտի տղեն կլսա, ուր կլխու կալած գիմանա: Էքսի օր մեր կասա.

- Ասլան ջան, րա տու հըմեն օր կեթաս, ընծի մենակ կրողես, մնա՛, քու շորեր լվամ, քէ շահեն - պախտեն, չէ՛ քու մերն են: Օրմ՝ էլ քէ շնորհին չափ-իսեցի, էտա կրկանոցն է, օր տվիր էս ընծի մենցէտ, էլ վրես է չիրիշկա, ի՞նալ էնեն:

Ասլան կավտնա, էտ օր չեթա:

Սեր կաերա ծաշ կլցա, թոյն կլցա մեչ, կտնա Աս-լանի հ'առեչ, մեկն էլ իրա հ'առեչ, մեկն էլ՝ փոքր տղին: Յըմա պգտի տղեն, արդեն ամեն ինչ գինա, կվերցա թասեր կփոխա: Սեր կուտա էտ ծաշ՝ կընգ-նի: Ասլան կասա.

- Ասրտ՛, քո րըհատ ընեն, ի՞նչ էղավ քէ:

- Լա ո, ես նահա՞ի ի քու Եառեչ, - երմեն եղելութեն կպատմա, կասա. - Ես երեխեն քէ փրկեց ու կմեռնի: Յօղ պգդի ախապերն էլ հըմեն կպաղնա, կասա. - Ես պա-

տի էն յան Հարամրաշին ա, ետի իմ խերն ա, պայց օր տու ընծի ճամրուց րերի, ես րերջիստութեն չենեմ:

Կենին երկու ախավեր, կապանեն Հարամրաշուն ու գնդնին ճամպա կերթան: Կուզին երթան ուրիշ քաղաք մէ աարին: Քաղաք մէ կիսանին, կտիսնան, օր էտատեիսի թակավոր միուեր ա, իսլիս ժողվեր են: Կերթան կայնին էտատեիս: Դուշ մէ պաց կթողին, ում կլինին կայնավ՝ էնոր էլ թակավոր կենեն: Էտա դուշ իջեք հառ կայնին ահմիկ ախապոր կիսին: Ի՞նչ էսեն, կպերին խոր կենեն քաղքի թակավոր, Ասլան էլ կեդի էնոր օգնական: Ասանից իրեք խնձոր կընճնա: Մեկ Սալանին, մեկ՝ թագա թակավորին, մեկն էլ՝ լսողաց:

## 26 (28). ԻՐԵՔ ԸՆԳԵՐ

Մի մարտ, գվերու էրգու ընգեր, կեդնին իրեք, կերտան գողության: Կերտան մի ուրիշ գյուղ, կերտան մի տեղ գիշերելու: Էդ մարտն՝ տան տերն, գիսարցու կ'սա. - Տղեք ջան, օ'վ էք, որդեղացին, ո՞ւր կերտաք: Բա. - Էգեր ինք, կերտանք մգի աշխաղանքի: Կ'սա. - Տղեք, դուք աշխաղանքի համար չէ կերտեք, սունդ կենեք, կա-չկա՝ կերտաք գողության. լավ չեք էն, էգեք ամեզիդ մեզ-մեզ օսկի տամ՝ դարձեք կացեք ծեր տներ, գողություն լսվ պան չէ:

- Չէ, - կ'սին, - մենք գողության չերտանք, կերտանք աշխաղանքի:

Էդ մարտ կ'սա. - Սպասե՛ք, ծգի պադմին իմ գիշի էգած: Գնսուի իրա պադմություն գենա, կ'սա, - ես էլ ծե՛ր պես. իրեք ընգեր ենք, կնացինք գողության, մդանք գիշեր մէ մաղարա, րդի քնինք, մեզ էլ տեսանք, իրիգուն մի սուրու օչխար էգավ՝ լցփս էդ մդարեն, մէ հառ էլ՝ մէ աչքեն դև էգավ հեղկից, էգավ, քարով լավ դրեց դրու, էգավ հոդ-հոդ էրեց, ըսեց. - Ա՛, ըստեն մարտ կա, մարտու հոդ գ'կա, - Օ'վ իք, ի՞նչ իք, էգեք ներգայացեք:

Կ'սա. - Սենք էգանք ներգայացանք: Էլավ մէ լավ կրագ էրեց, մէ լավ փոս կարեց, լոմ դրեց կրագ, կարմրավ, էլավ րերեց էն մեզին, իմ մէ ընգերոն, րերեց լոմ գորգե՛ ինրուվեց ողրան: Էդի կերավ, էլավ ըսավ, - Տուք էլ ընեք, գիշեր գէլիմ կուդիմ: Էլանք գացինք քնանք: Մինչև կես գիշեր նորից էլավ, էլավ էլի կրագ վարեց, լոմ էլի կարմրցեց, տվեց իմ մեզել ընգերոն, էն էլ էպես վերճացուց: Մնացի ես: - Դեյ վաշին, - ըսեցի, - ես ի՞նչ պան էր էղավ, մենք ընգանք էս դևին պերան: Կ'սա. - Էն էլ կերավ, քնավ, րայց լոմ իլը կարմիր էք, էլա ես էլ ոհսկ էրեցի, վերցրի էդ կարմրուց լոմ, տարա կոխի էդ թափագոզի աճկ: Էդի էտեիս թարդաց, ընգավ: Ես կնացի պաղօք: Պարզա, մինչև լուսացավ, ուրեմն, էդ մեծ քար, օր կա դուան դեմ՝ ըըն կ'ոնա. ոչ կ'ոնամ բանամ, ոչ էլ կ'ոնամ էնիմ, ինչ րդի

էնիմ: Ես էլ, - կ'սա, - դրան մի ների կա, զանգուլագներ կախուգ ա վիզ, էլս դրան մորտեցի, դրա փոստ կարեցի իմ վրեն, գանգուլագներ կախի իմ վգեն ու զնգողալով էգա օչխոր առեճ: - Դա, - ըսավ դև, - հիմա տուո գրանամ, դու գէլնիս: Տուո պացեց, ես զնգողալով էգա, ծին գարգեց իմ մեծկին, ըսավ, - Դէ տու գնա, ես հիմա զգնիմ ըդրան: Ես օր տուրս էլս, րուացի. - Թափագո՛զ, ես արտեն պրծա էլա: Դեյ վա ին, - ըսեց, - ուրիմն տու էլսր: Էդի սիրդ պայտավ ու սաղավակ: Ես օչխար հանեցի դուրս, դարձա ըդ քունջ ու պուշակ խուգաղգեցի. գնացի վերև, տեսա մէ փոքր տուո կար, ետ տուոն օր պածեծի, մի սիրու ախճիգ, էսպես, ծեռներ ծալուգ: նստուգ էր էտեիս:

- Ա՛ մարտ, - ըսավ, - որդեղինց էգաը, ոև իմացավ, հիմա քգի գիսորովա կուդա: Ըսի. - Նկին ես խորովեր իմ, թէ տու լավ պան գիդես, ընծի պադմա: Կ'սա. - Ընծի գոռով պերեր ը էտեիս: Դէ, - ըսի, - ունի հարստություն ո՞րդեղ ը, վեր կաց, էրտանք: Ուրեմն, Վերցրի էդ դևի հարստություն, էդ ախճիգ, էդ սուրու օչխար, էգա: Տղեք ջան, ախճի ջան, արիի, - կ'սա, - Էսի իմ առաջի կինն ա, ճիշտ ա, կնիգ:

- Դա, - կ'սա, - ճիշտ ա:

- Դէ, տղեք ջան մեզ-մեզ օսկի լէ կիդամ՝ դարձեք կացեք, գողություն լավ չէ:

- Չէ, - կ'սին, - կերթանք մենք աշխաղանքի:

- Դէ լավ, իմ երգորոդ գողություն պադմին: Դէ, գող մարտ չստրի. Էդ ունհցած իսարջի, ծահիսի. Էս էնի, էն էրի, թալան-թուլան՝ վերճացավ, նորից կնացի, ընծի էրգու լավ ընգեր գդա, էլս՝ րդի էրտանք գողության, տուք լավ անգած էրեց, տղեք ջան: Վերցրի կնացի, հասանք մէ սայման, անարատ տեղ ը, հասանք էտեիս, տեսանք. ոչ մի տուն, ոչ մի պան չկա: Մեզ էլ տեսանք մի հառ ծիավոր, նի հառ տաժի, (էն փոքր շներ, օր կա) էնի հետ, յափնջին ծեռ, զենքեր ծեռ՝ էգավ,

- Դա, - ըսավ, - ավագագներ, ուրիմն, տուք էգեք իք իմ սայման, հիմը ծեռ գիշի վերճ կդամ: Կանչեց-պերեց մէ խոր հոր փորեց, մինչև մեր վիզ, մեզ հորեց էտեիս ու կնաց: Սի ժամ հեղող, էդ տաժին էգավ, իմ մի ընգերոն էտեիս ծագեց, բոկեր քաշեց կերավ, գնաց: Էդ մարդն էտեիս մեռավ: Մնաց մէ ժամանագ, տաժին նորից էգավ, իմ մյուս ընգերոն լէ էղպես վերճացրեց. բոկեր ծագեց, քաշեց կերավ, բորեց գնաց: Մնացի ես, տղեք ջան, մէ որոշ ժամանագ ախով-վահուվ մնացի, տաժին էգավ: Էգավ, էղա րդի ընծի րոնա՝ ես ոհսկ էրեցի, րերանս քի տաժու ազանջ: Ազանջից րոնեցի, շուն իր գլուի տարավ-թերեց էն կողմ, էն կողմ, մեզ էլ իմ մէ ծեռ՝ պացվակ: Մէ ծեռ օր պացվակ՝ րոնեցի տաժու րոգ, իտիստեցի: Ես էտեիսից էլա, էլա կնացի, կնացի, էտեիսից կրագ էրևաց, կնացի էդ մարտու տուն, օր մգի էղպես էրեց: Էդ մարտու կնիգ էգավ իմ առեճ, - ըսեց. -

Այ մարտ, տու ինչ մարտ իս, հիմա իմ մարտ իմացավ, անպայման քզի կողոր-կողոր կենա: Ըսի. - Ո՞ւ ա քու մարտ: Ըսեց. - Քնուգ ա: Կացի եղ մարտուն էլ վերծացրի, եղ ըդրա ունիցածն էլ, ըդրա ժին, եղ կինճ էլ վերցրի, պերի: Կ'սա. - Կանչե՛ք իմ երգորդու կնիգ իկա: Երգորդ կմի՛գ, ճի՛շտ ա, - կ'սա, - եսքան բանից հեղոյ իմ երգորդու գողություն՝ դու իս: Կ'սա. - ճի՛շտ ա: Կ'սա. - Տղե՛ք ջան, լավ կեղնի, եղեք կնացե՛ք, տուք գողություն չկ'ոնաք ենիք, եգեք մեզ-մեզ օսկի էլ կիդամ ծեզի, առեք - կնացե՛ք: Վերձ, մեզ-մեզ օսկի էլ կիդամ տղերանց, էլի ատկազ կենի՛չ չէ: օր չէ: - Լավ, - կ'սա. - իմ երրորդ պատմություն կենիմ. ես անկամ՝ էլի՛ երգու ընզեր ճարեցի, կնացի: Կնացինք մէ ուրիշ ուղղությամբ: Կնացինք հասանք մի լիճ, եր լիճ բոյ ընցնինք են կողմ՝ ետքին գյուղեր: Բերեցինք, եղեխ անտառ կար, փեղ-մեղ սար-կեցինք մեզի, նստանք եղ փեղերի վրա, շարժվանք: Կնացինք հրսանք եղ գեղի մոդ լէ՝ մէ հադ լեռ կար, ջուր կերեր ըդրա տգով գընցներ: Կնացինք, լողկեն խացեցինք. իմ մի ընզեր ընզավ ջուր, խեխտվսկ: Կնացինք: Տղե՛ք ջան, լավ լսեք, կնացինք մողեցանք համարյա գյուղին, իմ մյուս ընզեր լէ ընզավ, խեխտվավ, ես մնացի մինազ, հ՞նճ ենեմ. հասա եղ գյուղի մոդ, փեղեր կարեցի, էլա գաղտնի կնացի ետքի: Ըղրանց սովորություն ուրիշ ա: Ես էլ չկ'ոնամ եղ տառնամ, ըսի. - էլ հ՞նճ կ'ոնամ գողություն ենիմ, կնացի ըսի. - Երե՛ք ընձի նախրծի, արրի՛մ, չկ'ոնամ դառնամ էրտամ: Էդա նախրորդ. մէ ժամանագ նացի, եղ գեղի նախազան մեռավ: Ես առա եղ նախազի կնիգ: Մնաց մէ ժամանագ. մէ մարտ մեռավ, դրան իրա կնզա հեղ տարած-քացած զաղեն: Իմ կին էլ մեռավ, ընձի էլ իմ կմոց հեղ, քառասուն օրվա պաշար դրիմ, տարան քցին զաղեն: Եղ կին օր ետքի էր՝ ելզ սադ էր, բերինք մեր պաշար իրարու հեղ կերանք, սպասինք, մինչև մեռնինք: Սի օր, օսկորի կրծելու ծեն առա, ինչ-օր մի շուն օսկոր է կրծեր: Էլա կնացի, եղ կին էլ իմ հեղեկի րունիշո՞վ էգավ, գնացի տեսնիմ՝ աղվես ետքի ջանդաներ ա կուտա: Բոնեցի աղվեսու պոչ, էգանք ետքիսից դուրս էլանք: Եղ կնզան էլ վերցրի, պավագանի մեռելներու օսկի-մոսկի, էգանք եղ իմ շինած նավի մոդ, էգանք: Կանչե՛ք իմ երրորդ կնիգ իկա: Տղե՛ք ջան, եւ էլ իմ երրորդ կնիգն ա: Կանչեր իրեք կնիգն էլ րերեք կայնցեք, տղեք ջան, եղ գողության պաջառով՝ եւ իրեք կնիգ բերեր իմ:

- Ախաբե՛ր, - կ'սին, - հալավ է քզի, մենք չընք կ'ոնա գողություն ենի, գտառնանք էրտանք:

## 27 (29). ԲԱՐԻ Թ-ԱԿԱՎՈՐ

Գեղնի մէ րարի թակավոր, ժողովրտի մասին շադ գմդածէ, ենքան րարուտուն կեն, օր օվ ինճ կուգէ՛ չինայէ, կիդամ: Ենքան գրաժնէ, օր գքըսիբնա, գմնա

մէ ծի, գէլի վերու եղ ծին, իրան վեշ գբառնա, գվերու իրան ընդամիք, երգու դդեն, գընգնա ջամպա: Գերտա, գէրտա, գդեսնա՝ մարտմ՝ գըն ծեռ, վագ-վսզ դեմ գիկա:

- Բա՛րե:

- Բա՛րե, - կ'սէ, - դդա՛ ջան, ո՞ւր է գէրտաս: - Տո, - կսէ, - հասկցէր իմ, մէ թակավոր եստիի բարուտուն է կեննէ, նրաստ կիդամ ժողովրտին, երտամ, բալի մէ ծիմ առնիմ, զըմ կա՛ ծի չկա: Կսէ. - եղ թակավոր յըս իմ. Ես ծին էլ քեզի եղնի, - ծին էլ կիդամ եղ մարտուն, ինք գրոն դդի թէ, կնզա հեղ գընգնան ջամպա: Գիշեր կիդամ վրեն, գմդին մէ մեշա տեխ, գշինին իրանց կրագ, գնստին կրագի առնէ ու կուդին իրանց հաց: Մէ բազրան գիկա, օր ետեխով ընցնա, գդեսնա կրագ կերևա, գէրտա դեսնա՝ մէ ընդամիկ. մարտն է, երգու երեխան, մէ հադ էլ սիրուն կնիգ, դէ՛ թակավորի կնիգ է: Ածկ կրի եղ կնզան, կ'սէ. - Ո՞նց էնիմ, օր իյապիմ, եղ կնիգ դամիմ: Գէրտա մշագին գջամպէ կ'սէ. - Գնա ինայրէ, ըսա. - Բագրգան եգեք է, կինն է՛ երդին, երեխով է կազադվի, ուրիշ ընդամիկ չկանէ, թոդ քու կին իկա՝ ագադէ: Գյապիմ, գիկան եղ կնզան գդանին: Թակավորն էլ թէ գինա, խսկաբես, բոյ երտա - իկա: Դա՛ գսպասէ, չկա՛, հա՛ գսպասէ, չկա՛, գիկա դեսնա. ոչ բագրգան, ոչ ընդամիկ, ոչ պան: Ի՞նճ ենէ գառն եղ երգու երեխան, գընգնա ջամպա: Գէրտա գիանդրի մէ ջրի, գշլգէ երեխին. մեզ գանցու ջրի ենտին, գիկա, օր մյուս էրեխին շլգէ տանէ, գէրտա միհն ջրի մեջտին գեասնի, գդեսնա՝ գէլ դարավ երեխան: Ինք օր գդեսնա՝ գմոլրի, եղ մյուսն էլ գքցէ ջուր ու գէլնա ընգնա գիլու եղև: Ե՛, գըննա՝ եասմի գիլրուն: Ասսու ածողուտուն էն գենի, օր գել չուրէ երեխին, գիանդրի մէ սուրու օչխրի. շներ գընգնան ենև. գել գքցէ երեխին, գիախնի: Չորան օր գմոլենա՝ մէ սիրուն դդա է, ինք էլ երեխա չունի, կ'սէ. - Աստված՝ եղ երեխին ջամպեց, դամին էրտամ րայիմ: Թող չորբան եղ երեխին բայէ, մեք դառնանք՝ ջրի միհուն: Ըն էլ գէրտա ջրի հեղ, մոդիգ գէղնի ջաղթին, գէրտա, գէրտա գառնէ ջախտի նավին՝ գ'գայնի, ջուր գէլնա ու թափի, ջաղած գ'գայնի: Զաղթրան գէլնա դեսնա՝ մէ երեխա է, եգ առէ նավի պերան: Գքաշէ, երեխան գդանէ դուն, կ'սէ. - Գնի՛գ, մեք երեխա չունինք, եւ երեխան բայինք: Ըն էլ ենդեխ գրայէ:

Ուրենս, մեք դառնանք թակավորին: Գկորցնէ գմիգ էլ, երեխա էլ, մըլուլ, մոլրուգ գընգնա ջամպա: Գէրտա, գէրտա, գեասնի մէ անձանու քաղաք, գդեսնա, եղ քաղաքի թակավոր մեռեր է: Ժողովուրտ դդուշ է քցէ, թէ ում գլիուն նստավ՝ էն գէնին թակավոր: Ուուշ գիկա տրէ եղ մարտու գլիուն: Եղի թոդ իրան թակավորություն ենէ, մեք դառնանք՝ դդոց: Դդեկնին օր գմեծնան, գիուշրին, գէղնին դասվեց-դասնյոթ դարե-

գան, չորանն էլ, ջաղթբան էլ ջոգ-ջոգ գայերին իդան էլ թակավորի մոդ ծառա: Դէ՛, թակավոր չկիդէ, օր իրան դդեկն ին. մեզ գելն է դարէ, մեզ՝ ջուր, ի՞նչ գիդէ: Գանցնի ժամանագմ՝, մէ թագրգան գիկա էդթակավորուայուն, քաղքից տուրս չադր գգարգէ, իրան աբրանք գթապէ, գիկա թակավորի մոդ խոնախ: Գինորէ կ'սէ. - Թակավոր աբրած կենա, էրգու ծառա իդաս, իմ մշագներ բեգրուգ ին, իկան իմ աբրնքին բահագ էդնին, մինձն առավող էլնամ, իմ աբրանկ պառնամ - էրտամ: Թակավոր գէլնա էդ էրգու դդին գջամպէ: Գիկան էտեխ. էդ էրգու դդեն գաշխատին, հարց ու փործ գէնին. մեզ կ'սէ. - Չորան գիլու բերնից է առէ ընծի, մեզ էլ՝ կ'սէ. - Յրս էլ ջաղթբնի դդա ին, նավից է համե ընծի, ջաղթի նավից: Օոի գիհշին իրանց գլխու գալած, գէլին իրար ահաւեր, գիատտվին իրար: Դու մ'րտ, մերն էլ հանդէ չադրի դագ, գլսէ էր պոլոր, դէ՛, իրան է՛ թագրգան է խասպ դար: Գկանձէ դղոց, կ'սէ. - Լառ, յրս ծրր մերն ին, ընծի էլ թագրգան խասեց պերեց, բր ծեր հերն ո՞ւր է:

- Վըլը, - պէտք, - մեր չկիդենք. ընծի գիլու պերնից չորանն է առէ, ընծի էլ՝ ջաղթբանն է համե ջաղթի նավից. թե մեր հեր ո՞ւր գորավ, չկիդենք: էլ օդ գիատտվին իրարու, գիլան, գուրախանան, դէ՛, գիշեր է, գայարգին իրանց մոր գոխկեր, գընին: Ասավոդ թագրգան գիկա դեսնա՝ ծառաներ հանդին իրան ընդանիկի գոխկեր քնուց: Գերտա թակավորին բողոք, թե քու ծառաներ էգեր ին րմ պատիվ ավրէ, հանդին րմ ընդանիքի գոխկեր քնուգ, արի՛ դես: Թակավոր գկանձի, գկանձէ կ'սէ. - Էրգուսիդ գլուխ լէ գգրգիմ, ընչո՞ւ իծ էդ մարտու ընդանիկ գանիտ էրտ: Կ'սին. - Թակավոր աբրած կենա, էդի մեր մերն է:

- Ի՞նալ ծեր մերն է:

- Յա՛, - կ'սին, - մեր մեր էդ թագրգանն է խասպ դար: մեզիս չորանն է առէ գիլու բերնից, մեզիս էլ՝ ջաղթբանն է համե ջախտի նավից, մեր հերն էլ բեգուման գորեր է:

Յեր գրնզնա գլխու, օր էդի իրան ընդանիկն է, րո էլ՝ իրան դդեկն ին: Գ'գանձէ թագրգանին, կսէ. - Շանորտի՛, տու ուրիշի ընդանիկ խապիր դարար, իիմի պարպի՛ց է գիսոսա:

Գ'գանձէ ջըլլըդնիր, գիդա թագրգանի գլուխ գրոգիլ, աբրանք լէ գաերին կուտին - իմին: Շու է կ'սին՝ լավուտուն էնէ, քց ծուր, չէ՛, իրան ընդանիկ գորավ:

## 28 (30). ՀՈՎՎՐ ԱԽՃԻՉ

Մի թակավոր գմահանր, ուր տղեն արտեն քսան տարեգան կեղնի, ուրեմն, գաերին կարգին թակավոր: էդ թակավորին ժողովուրդ կ'սին. - Պետք է ամուսնանաս, որբեգի էրեխա էդնի քգի ժառանգորդ:

- Ես կամուսնանամ, բայց չըսիք, թե ում առնիմ, չս-

րարգիք, ծեր կործ չէ. ում ախճիգ կառնիմ՝ կառնիմ:

Թակավոր գելնա էրտա որսի, մէ չորսի տոնով գրնցնի, մի ախճիգ նստած գէղնի տուր, ծեռագործ կենա: Թակավորին էդի դուր գիկա, գիկա կ'սա. - Լա՛վ, բայց հեղո կ'սիմ ու՞ն բդի առնիմ:

